37

ՆԱԽԱՇԱՎԻՂ

1.2001

digitised by A.R.A.R.@

ՆԱԽԱՇԱՎԻՂ

3. 2001

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Գլխավոր խմբագիր՝
Վիկտոր Մարտիրոսյան
Հրատարակչական խմբագիր՝
Մարիամ Պետրոսյան
Համարի պատասխանատու՝
Կարինե Թորոսյան
Համակարգչային շարվածքը՝
Աստղիկ Մրջանթուխյանի
Գոհար Խաչատրյանի

Հիմնադիր և հրատարակիչ՝
ԿԳՆ կրթական
բարեփոխումների կենտրոն
Հասցեն՝
Տիգրան Մեծի 67
Հեռ՝ *57-21-62, 57-21-00*
Հանձնված է
տպագրության՝ *16.2.2001*
Ծավալը՝ *4 տպ. մամուլ*
Տպաքանակը՝ *1700*
Թուղթ՝ *օֆսետ*
Չափը՝ *70X100 1/6*
Դպրոցներին տրվում է
ԱՆՎՃԱՐ
Գրանցման վկայական՝ *1004*

375111, 67 Tigran Metsi,
Yerevan, Armenia
Phone 572162,572100
Printed 1700 semples

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿԳՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Մանկական աշխարհի վաղուց ի վեր բոլոր երկրային արարածների բախտավորությունները ինչ հանար ամենարարչին է եղել: Մանուկներին կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է ինչ հանար:

... Որքան էս կապույտ երկինքը գիտես ա, շունչս բերևոնես, չե՛կ սորք պեսք է հանարիմ ինչ հանար, չեր արևին մեռնիմ:

Պաչատուր Աբովյան

ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻ

« ՆԱԽԱՇԱՎԻՂ», Ի. Գ.

1. *Որևէ սոսկակայի՝ գիտության տարբեր գիտելիքների ձեռնարկ, տարեք, նախագիտելիք:*
2. *Ներածություն:*
3. *Փոք. որևէ բանի մուտք, սկիզբ, նախադուռ, նախաշեմ:*

Էդ. Աղայան

Արդի հայերենի բացատրական բառարան

2013

digitised by A.R.A.R.I@ 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հանրակրթական պետական չափորոշիչ 6

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Տարրական դպրոցի սովորողների ուսումնական գործունեության ստուգման ու գնահատման մի քանի հայեցակարգային դրույթներ 10

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Կ. Թորոսյան
Տարրական դասարանների ընթերցանության դասերի կատարելագործման ժամանակակից պահանջները 17

Զ. Գյուլամիրյան
Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները 22

Ռ. Սարգսյան
Մաթեմատիկան փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդով 27

Ս. Սարգսյան
Մաթեմատիկական դիդակտիկ խաղեր 29

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Սարգսյան
Հոգեբանական պատրաստությունը դպրոցական ուսուցմանը 31

Զ. Գյուլամիրյան, Ա. Բալայան
Երեխայի ծախլիկությունը գրուսուցման ընթացքում և դրա հետ կապված դժվարությունները 35

Օ. Սոսնովսկայա
Տարրական դասարանների ուսուցչին ինչու՞ է անհրաժեշտ գրականության տեսության իմացությունը 38

Ա. Հովհաննիսյան
Մանկապարտեզից՝ դպրոց 43

ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Ա. Բալայան
Դիդակտիկական խաղերը մայրենի լեզվի ուսուցման գործընթացում 47

ԾՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

Յոթ հարցի՝ յոթ պատասխան 50

ՄԵՐ ԱՎԱԳՆԵՐԸ

Հարցազրույց Գրետա Սարգսյանի հետ 54

Ս. Հայրապետյան
Նվիրյալը 58

ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանում տարրական դպրոցի բարեփոխման և ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը 60

201-2002

20947-ԱԴ

digitised by

Խոսք ձեռքսեղմումի

Տպագրվել է «Նախաշավիղ» հանդեսի անդրանիկ համարը: «Նախաշավիղն» ունի իր առաքելությունը, գալիս է լուծելու մի շարք խնդիրներ: Այն հասցեագրված է կրտսեր՝ դպրոցին և նախադպրոցական կրթությանը: Նրա հասցեատերերն են երեխաները, մանկավարժները, ծնողներն ու մասնագետները: Նրա առաջնային խնդիրն է սպասարկելու տարրական դպրոցն ու նախադպրոցական կրթությունը, լինելու մանկավարժի ու դասվարի օգնականն ու խորհրդատուն: Պատրաստ է դառնալ ուսուցչի խոսափողն ու ամբիոնը՝ հնչեցնելով նրա արդարացի պահանջատիրությունը, համակարգելու և ընդհանրացնելու հանրակրթական այդ օղակներում կատարվածն ու ծրագրավորվողը, ձևավորելու առավել ուշադիր վերաբերմունք առ երեխաներն ու ուսուցիչները, ապահովելու պետական մոտեցումը կրթության նկատմամբ: Նրա նշանաբանը կարող է լինել՝ «ուսուցիչների համար, ուսուցիչների մասին՝ հանուն մեր երեխաների»:

Աշակերտի համար այն կբերի հարազատ օջախի ջերմություն, ճանապարհի հետաքրքրություն, ճանաչելու հրճվանք, ուսուցչին կտա խորհելու, ընտրելու, ստեղծագործելու հնարավորություն, ծնողին՝ խորհուրդներ և ապահովության զգացողություն:

Բարի են խնդիրները, «Նախաշավիղ», ծանր է խաչդ, երկար է ճանանապարհդ: Մենք ամենքս՝ կրթության կազմակերպիչներս ու սպասավորներս, ծրագրեր ու դասագրքեր ստեղծողներս, վերապատրաստող ու մեթոդ առաջարկողներս՝ պաշտոնյա թե գիտնական, օգնող թե ստուգող, նաև քո միջոցով ենք գնալու ուսուցչի դուռը, թոթափելու նրա մենությունը, սատարելու նրան, լինելու նրա կողքին:

Քեզ տեսնեմ՝

Վ. Մարտիրոսյան
հանդեսի գլխավոր խմբագիր,
ԿԲԿ տնօրեն

A.R.A.R.@

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՀ Երևան 10, Մ. Խորենացու 13
N _____

Հեռ. 526602. ֆաքս (3742) 58
«4» 02 2001թ.

Վերջին տոն է դպրության աշխարհում. ծնունդ է առել «Նախաշավիղը» ամենացնդով դպրոցներին ուղղված վիտամինոդական հանդեսների թիվը:

Շնորհավորում եմ «Նախաշավիղի» ծնունդը հավատ և վստահություն տածելով, որ հանդեսը արդյունավոր գործունեություն կծավալի և իր առաքելությամբ էլ ավելի կպայծառացնի դպրոցի գրասենյակ ջահերը:

Յանկանում եմ, որ «Նախաշավիղն» իր անվան դասական ազնվությամբ իրականացնի ազգային և համամարդկային պատմամշակութային արժեքները դպրոցին ներկայացնող-մեկնողի պատվավոր հանձնառությունը:

Շնորհավորում եմ քեզ, Ուսուցիչ: Քոզ «Նախաշավիղի» և քո անխոնջ դաշնությամբ մատաղ սերնդի հոգում վերահաստատվի, սիրանա մեր Ժողովրդին ներհատուկ «Ի միայն հայիվ, այլև բանիվ» դավանանքը: Թող քո օգնությամբ հանդեսը դառնա սովորողներին դեպի իմացության վսեմ բարձունքը տանող արահետներից մեկը:

Բարի երթ, «Նախաշավիղ»:

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐ,
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ.Ղ.ԱՋԱՌՅԱՆ

digitised by

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊՓԲԸ

Ս. Խանդամիրի 13, հեռ. 525-781
E-mail: kr@kr.am

25 հունվարի 2001թ.

«Նախաշավիղ» հանդեսի խմբագրականին

Ջերմորեն շնորհավորում ենք «Նախաշավիղ» հանդեսի մուտքը մանկավարժական մամուլի ընտանիք: Կրթության ոլորտի առավել հումանիստական և համեմատաբար լավ պահպանված օղակի խնդիրները լուսաբանող հանդեսի անհրաժեշտությունը վաղուց էր հասունացել:

Ժամանակակից իրողությունները նոր խնդիրներ են դնում տարրական դպրոցի առջև: Դրանք պահանջում են մասնագիտական լուրջ քննարկումների միջավայրի ստեղծում: Համոզված ենք, որ կարճ ժամանակում հանդեսը կձևավորի այդ միջավայրը՝ իր շուրջ համախմբելով պրակտիկ մանկավարժների և տեսաբանների: Այն կարող է նշանակալի դերակատարում ունենալ բարփեխումների գործընթացում, քանզի համակարգի իրական բարելավումը հնարավոր է դպրոցներում ձևավորվող և փոխանցվող առաջարկությունների ու դրանց հրապարակային քննարկումների շնորհիվ:

Մեր թերթի գործունեության ընթացքում համոզվել ենք, որ դպրոցական տարիքի, տարրական դպրոցի տևողության և ուսուցման կազմակերպման ձևերի ու մեթոդների շուրջ կան քննարկման արժանի բազմաթիվ խնդիրներ, որոնք վերջին տարիներին համակարգված վերլուծության չեն ենթարկվել: Ակնկալում ենք, որ «Կրթություն» թերթի էջերում բարձրացված բազմաթիվ հարցերի մասնագիտական ու հանգամանալից պատասխանները կընթերցենք «Նախաշավիղի» էջերում:

Խմբագրականին մաղթում ենք ստեղծագործական թռիչք, համարձակ տեսակետներ հայտնելու կամք, իսկ հանդեսին՝ բազմահազար ընթերցողներ:

Բարի՛ երթ

Լավագույն ցանկություններով Ա.Խաչատրյան
Գլխավոր խմբագիր

A.R.A.R.@

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Հանրակրթության պետական կրթական չափորոշիչը մշակված է ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվերով (ՀՀ կրթության և գիտության նախարարի 3.03.98թ. թիվ 54-Ա հրաման): Այն հիմք է հանդիսանում առարկայական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի ստեղծման համար:

ԿՐԹԱԿԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՍՏԻՃԱՆԻ ԾՐԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Տարրական դպրոց

Հաշվի առնելով կրթության մարդկայնացման և հումանիտարացման կարևորությունը՝ տարրական ընդհանուր կրթության բովանդակության չափորոշիչների մեջ ընդգրկվել են պահանջներ, որոնք ցույց են տալիս տարրական դպրոցի շրջանավարտի ամբողջական կերպարը, մասնավորապես նրա դաստիարակվածության մակարդակը, այդ բառի լայն իմաստով:

Չափորոշիչների պահանջների կատարումն ապահովում է՝

- կրտսեր դպրոցականի հարմարեցումը (ադապտացումը) աշակերտ-դպրոցական սոցիալական նոր կարգավիճակին և միջավայրին,
- գործունեության տարբեր ձևերի տիրապետումը (ուսումնական, խաղային, աշխատանքային, շփումային),
- շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքի, էթիկական և բարոյական նորմերի ձևավորումը,
- հիմնական դպրոցում ուսուցման համար անհրաժեշտ պատրաստության, ընդհանուր զարգացման որոշակի մակարդակը,
- սովորողների ճանաչողական, հաղորդակցական, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, մարմնակրթական որակների ձևավորումը:

Հաշվի առնելով այն, որ բնության, մարդու, հասարակական կյանքի մասին գիտելիքները կրտսեր դպրոցականներին հաղորդվում են մայրենի լեզվի, շրջակա աշխարհի և հայրենագիտական դասընթացների ուսուցման ժամերին, տարրական դպրոցում դասավանդվող առարկաները բաշխվել են ըստ ուսումնական բնագավառների՝ լեզու, մաթեմատիկա և մշակույթ, բնություն ու աշխատանք (մարդ, բնություն և հասարակություն):

Մայրենի

Մայրենի լեզվի տարրական դասընթացը ճանաչողական արժեք ունեցող գործնական մատչելի գիտելիքների և ընթերցանության նյութերի երկու հիմնական մասերի ամբողջությունն է: Լեզվական գիտելիքներն իրենց բնույթով, շարադրանքով պետք է ունենան որոշակի գործնական ուղղվածություն, ճանաչողական-կիրառական արժեք:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝

իմանա.

- հայերենի այբուբենը,
- բաղաձայն հնչյունների արտասանության և գրության հետ կապված առանձնահատկությունները,

ունենա.

- քերականական որոշակի գիտելիքներ հնչյունաբանությունից, բառակազմությունից, ձևաբանությունից և շարահյուսությունից,

կարողանա.

- ընթերցել առաջադրվող նյութը՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները,

digitised by

հասկանալ կարդացած ստեղծագործության բովանդակությունը, աշխատել բնագրի վրա,

- ինքնուրույն կարդալ մանկական գրքեր և մամուլ,
- ընթեռնելի և վայելչագրության կանոններին համապատասխան արտագրել կամ թելադրությամբ գրել անցած ուղղագրական և կետադրական կանոնների վերաբերյալ բնագիր (75-80 բառ),
- ստեղծել կապակցված բանավոր և գրավոր խոսք, կառուցել մենախոսություններ և երկխոսություններ:

Մաթեմատիկա

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝

իմանա.

- միանիշ թվերի գումարման աղյուսակը և հանման համապատասխան դեպքերը, միանիշ թվերի բազմապատկման աղյուսակը և բաժանման համապատասխան դեպքերը,
- թվաբանական գործողությունների հատկությունների (տեղափոխական, զուգորդական, բաշխական) ձևակերպումները և գրառումները,
- կարևորագույն մեծությունների՝ երկարության, մակերեսի, զանգվածի, ժամանակի և արագության չափման միավորները ու գրառումները, մեծությունների միջև եղած կախվածությունները,

կարողանա.

- կարդալ, գրել և համեմատել թվերը՝ միլիոնի սահմաններում,
- միլիոնի սահմաններում կատարել թվաբանական գործողություններ,
- լուծել թվերի համեմատության և թվաբանական գործողությունների հետ կապված պարզագույն տեքստային խնդիրներ,
- լուծել ոչ բարդ խնդիրներ, որոնց մեջ օգտագործված են կարևորագույն մեծություններ (արագություն, ժամանակ և հեռավորություն, գին, քանակ և արժեք և այլն),
- անվանել թվաբանական գործողությունների բաղադրիչները, կարդալ և գրել թվային արտահայտություններ,
- հաշվել չորսից ոչ ավելի թվաբանական գործողություն պարունակող, այդ թվում՝ փակագծերով արտահայտությունների արժեքները,
- ճանաչել, անվանել և պատկերել հարթ երկրաչափական պատկերները, չափել պարզագույն պատկերների մեծությունները:

Ռուսաց լեզու

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝

ունենա.

- քերականական նախնական գիտելիքներ,

կարողանա.

- գրավոր պատասխանել հարցերին (20-25 բառի սահմաններում), գրել ստուգողական թելադրություն, ոչ բարդ նախադասություն, կարճ շարադրություն,
- պատմել իր, դասերի, խաղերի, էքսկուրսիաների մասին, կազմել կապակցված խոսք, գրել կարճ պատմություններ նկարների թեմաներով,
- կարդալ (բարձրաձայն կամ մտքում) լեզվական պարզեցված տեքստեր
- հասկանալ կարդացած տեքստերի թեման և բովանդակությունը,
- որոշել նկարագրված պատահարների հաջորդականությունը, պատճառականությունը, իմաստը, արտահայտել հեղինակի և իր վերաբերմունքը հերոսների, նրանց արարքների և դեպքերի նկատմամբ, գնահատել հերոսների արարքները,
- հակիրճ պատմել կարդացածի մասին, հասկանալ (ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ) կարդացածի բովանդակությունը, դատողություններ անել, ավարտել պատմություններ, խոսքի մեջ բառը ճիշտ գործածել, կարդացածի մեջ տարբերել հարցական և հաստատական նախադասությունները:

Օտար լեզու

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝

կարողանա.

- հասկանալ ուսուցչի խոսքը,
- փոխանակել արտահայտություններ (օրինակ՝ համաձայնվել կամ չհամաձայնվել՝ օգտագործելով պարզ խոսքային արտահայտություններ, քերականական պարզ երևույթներ և արտաբերել ճիշտ հնչերանգով ու արտասանությամբ,
- կիրառել պարզ խոսքային ձևեր, արտասանել փոքրիկ բանաստեղծություններ, հակիրճ պատմել կադացածի մասին (ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ),
- գրել տառեր, բառեր և նախադասություններ՝ հարաբերակցելով հնչյունները տառերի հետ,
- բարձրաձայն և լուռ ընթերցել պարզ տեքստեր, կարդացածի մեջ տարբերել

A.R.A.R.@

հարցական և հաստատական նախադասությունները:

Երաժշտություն

Երաժշտություն առարկան դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային ժողովրդական ու դասական երաժշտությունն է՝ գրականության և կերպարվեստի հետ փոխկապակցված: Որոշակի տեղ է հատկացվում նաև այլ ժողովուրդների ժողովրդական ու դասական կոմպոզիտորների ստեղծագործություններին:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝
ծանոթ լինի.

- երաժշտության տեսության տարրերին (նոտագրություն), երաժշտական լեզվին,

կարողանա.

- կատարել ուսուցանվող ստեղծագործություններ (միաձայն, երկձայն),
- նվագակցել մանկական նվագարաններով,
- կատարել պարային պարզ շարժումներ,
- լսել և հասկանալ երաժշտությունը, ճանաչել երաժշտության տեսակները և բնույթը:

Կերպարվեստ

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝
ծանոթ լինի.

- հիմնական գույներին, գուներանգներին և բաղադրյալ գույներին,

կարողանա.

- բնօրինակից դիմային տեսքով պատկերել պարզ կառուցվածք ունեցող առարկաները,
- ինքնուրույն որոշել պարզ կառուցվածք ունեցող առարկաների համաչափությունները,
- հիշողությամբ և պատկերացմամբ կատարել պարզ կառուցվածք ունեցող տարբեր առարկաների ճեպանկարներ,
- թեմատիկ նկարներում արտահայտել իմաստային կապ,
- դեկորատիվ աշխատանքներում կատարել բուսական, երկրաչափական և կենդանական տարրական ընդհանրացումներ,
- տիրապետել տարբեր նկարամիջոցների (մատիտ, ջրաներկ),
- կատարել գունային ներդաշնակ զուգակցումներ:

Ֆիզիկական դաստիարակություն

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝
կարողանա.

- արդյունավետ և գեղեցիկ կատարել (ցիկլիկ) շրջափուլային շարժումները (քայլք, վազք), պարային-ռիթմիկ և մարմնամարզական վարժությունները,
- պահպանել ճիշտ կեցվածք՝ նստած դրությամբ և շարժման ընթացքում,
- խաղալ շարժական և ժողովրդական խաղեր,
- լողալ, նետել փոքրիկ գնդակը, հեռացատկել և բարձրացատկել թափավազքով,
- կանոնավոր կատարել ամենօրյա առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն և տնային հանձնարարություններ ֆիզիկական կուլտուրայից:

Մարդ, բնություն և հասարակություն

Տարրական դպրոցը (և միջին դպրոցի կրտսեր դասարանները) ավարտողը պետք է՝
իմանա.

- Հայաստանի Հանրապետության օրհներգը, դրոշը, խորհրդանիշը, տեղը քարտեզի վրա, նրան սահմանակից պետությունները,
- հայ պատմիչների, ազգային հերոսների, մշակույթի գործիչների անուններ, մի քանի ստեղծագործություններ և նրանց մասին ունենա տեղեկություններ,
- պատմական Հայաստանի մայրաքաղաքները,
- *երկիր, քաղաք, գյուղ, մայրաքաղաք, սովորույթ, օրենք, օրենքի խախտում, դար, տարի, տարեթիվ* հասկացությունները,
- իր հայրենիքը, նրա մեծ քաղաքները, լճերը, գետերը, սարերը,
- երկրագնդի, արևի, լուսնի և մի քանի մոլորակների մասին,
- օդի բաղադրությունը, նրա նշանակությունը շնչառության և այրման համար,
- կենդանի և անկենդան բնության տարրերի՝ մարդու համար օգտակար հատկանիշների մասին,
- օրգանիզմների կենսագործունեության արտաքին դրսևորումների (սնունդառության, շնչառության, արտաթորության, վարքի, բազմացման, աճի և զարգացման), շրջակա միջավայրի պայմաններին նրանց հարմարվածության մասին,

digitised by

• մարդու՝ որպես կենդանի օրգանիզմի մասին,

ունենա.

• որոշակի տեղեկություններ Հայաստանի պատմության կարևորագույն դեպքերի մասին, ազգային մի քանի տոների մասին,

• տեղեկություններ Հայաստանին հարակից երկրների մասին,

• տեղեկություններ Հայաստանում բնակվող ազգերի մասին,

• իր քաղաքի (գյուղի), նրա պատմական և այլ հուշարձանների մասին տեղեկություններ,

• աշխարհի մասին սկզբնական ամբողջական պատկերացումների ձևավորմանը նպաստող պարզագույն գիտելիքներ,

ծանոթ լինի.

• զգայական մակարդակով շրջակա աշխարհին, ֆիզիկական մի շարք պարզագույն հասկացություններին ու ֆիզիկական երևույթներին,

կարողանա.

• օգտվել կողմնացույցից, կողմնորոշվել տեղանքում, որոշել հորիզոնի կողմերը,

• համեմատել տարածական ու ժամանակային, մեխանիկական, ջերմային, լուսային, ձայնային զգացողությունները, մարմինների շարժման արագությունները (արագ-դանդաղ),

• չափել ժամանակահատվածներ, մարմինների գծային չափեր և մարմնի ջերմաստիճանը,

• տարբերել ջրի ագրեգատային վիճակները,

• նյութերը դիտել, չափել, ջրում լուծել և տարբերել լուծվողը չլուծվողից,

• պահպանել վարվեցողության կանոնները բնության մեջ,

• պարզագույն եղանակներով (բնության դիտումներ, օրագրի վարում) հետևել բնության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, կատարել փոքրիկ ընդհանրացումներ, եզրակացություններ,

• պահպանել անձնական և բնակարանի հիգիենայի հիմնական կանոնները:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Հարց. *Անցյալ տարի երրորդ դասարանի սովորողների՝ հայոց լեզվի գիտելիքների ստուգումն անցկացվեց թելադրության միջոցով: Ստուգման հիշյալ ձևը աննպատակահարմար համարվեց կրտսեր դպրոցում դասավանդող շատ ուսուցիչների կողմից: Մոտենում է ուսումնական տարեվերջը, սակայն մենք դեռևս տեղյակ չենք քննակարգի փոփոխություններին.արդյո՞ք երրորդ դասարանցիների գիտելիքների ստուգումը դարձյալ թելադրության միջոցով պիտի կազմակերպվի:*

Պատասխան.Այս խնդիրը բազմիցս քննարկվել է հանրապետության տարբեր մարզերի և մայրաքաղաքի ուսուցչության հետ կազմակերպված հանդիպումների ժամանակ: Ուսուցիչներից շատերն են այն կարծիքին, որ տարեվերջյան ստուգարքը սոսկ առարկայական գիտելիքների ստուգման վերածելը նպատակահարմար չէ: Այն հակասում է այդ տարիքի երեխաների և՛ հոգեբանական, և՛ մեթոդամանկավարժական առանձնահատկություններին, առհասարակ կրտսեր դպրոցի առջև դրված նորօրյա խնդիրներին: Ուսուցիչներից շատերն առաջարկում են տարեվերջին կազմակերպել ամփոփիչ աշխատանքների համակարգ՝ անկախ ուսումնական առարկայից:

Ուսուցչության ուշադրությանը ներկայացնելով «Հայեցակարգը» հուսով ենք՝ դպրոցներում կկազմակերպվեն քննարկումներ և խնդրո առարկա հարցի վերաբերյալ կարվեն կոնկրետ առաջարկներ:

Հավատացնում ենք՝ քննակարգը մշակելիս ձեր առաջարկները հաշվի կառնվեն:

A.R.A.R.@

Ներկայացվում է քննարկման

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այսօր «կրթության որակը» սահմանվում է այն տեսանկյունից, թե «ի՞նչ ենք սովորեցնում», «ինչպե՞ս ենք սովորեցնում», «ու՞մ ենք սովորեցնում» և «ի՞նչ է մնում մեր սովորեցրածից»:

Տարրական դպրոցի խնդիրներն ընդհանուր հանրակրթական խնդիրների շրջանակից դուրս չեն:

«Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է

- լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի,
- ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը,
- ազգային և համամարդկային արժեքների նախնական հաղորդակցմանը»:

(«Կրթության մասին» ՀՀ օրենքից)

Ելնելով սրանից՝ կարող ենք, ինչ խոսք, ձևակերպել տարրական դպրոցի ավելի մանրակրկիտ խնդիրները, ասենք՝ հանրակրթության այս փուլի ավարտին երեխան պետք է կարողանա

- գրել-կարդալ,
- հաշվել, խնդիրներ լուծել,
- մտածել-տրամաբանել,
- նկարել, երգել,
- իրեն շրջապատող աշխարհի մասին նախնական գիտելիքներ ունենալ,
- իրեն անհրաժեշտ ու հետաքրքրող տեղեկությունները որոնել ու գտնել,

մի խոսքով՝ պիտի կարողանա սովորել:

Այսինքն՝ տարրական դպրոցի խնդիրն ի վերջո աշակերտների մեջ սովորելու ունակություն ձևավորելն է, անհատի հետագա կրթության ու զարգացման նախահիմքերը դնելը, որը առարկայական ուսուցման է բաժանվում պայմանականորեն միայն, ուստի դրանց վերջնական արդյունքների առարկայական ստուգումն ու գնահատումը ձևական է ու չի կարող լուծել երեխայի բուն զարգացման մակարդակը, աստիճանը որոշելու խնդիրը:

Տարրական դպրոցում երեխայի կրթության, անհատի զարգացման, առաջին նպատակաուղղված խթանն է տրվում:

Զարգացնող ուսուցումը, որպես կրթական նոր համակարգ, նպատակաուղղվում է «երեխայի զարգացման ոչ թե երեկվա, այլ վաղվա օրվան» (Վիգոտսկի), այսինքն այն ոչ թե հարմարվում է երեխայի եղած հնարավորություններին, այլ հետևողականորեն զարգացնում է դրանք, բարձրացնում որակական նոր մակարդակի՝ որոնողական-հետազոտական տիպի ուսումնական գործունեություն կազմակերպելու ճանապարհով:

Հավատալով, որ բոլոր երեխաներն օժտված են և գնահատելով յուրաքանչյուր երեխայի բացառիկությունը՝ պետք է հասնել այն բանին, որ տարրական դպրոցում երեխաներն իրենց ուսումնառությունն ընդունեն որպես հաճույքի և հայտնագործությունների, ինքնադրսևորման ժամանակաշրջան, ըմբռնեն, որ կրթությունը դպրոցում չի ավարտվում, այն տևական աշխատանք է ողջ կյանքի ընթացքում:

Աշակերտների առաջընթացը պետք է գնահատել և արձագանքել նրանց փոփոխվող պահանջմունքներին պար-

digitised by

բերաբար, ուսումնառության ամբողջ ընթացքում:

Ստուգման ու գնահատման նպատակը միայն առարկայական գիտելիքների ու կարողությունների որոշակի արդյունքների բացահայտումը չպետք է լինի, այլ դրանց ձեռքբերման, ձևավորման ընթացքը:

Սովորողի գործունեության ստուգումն ու գնահատումը պետք է դիտարկվեն երեխայի նախկին «հաջողությունների» նկատմամբ դինամիկայի մեջ միայն և այլ երեխաների հետ համեմատություն չեն ենթադրում:

Ստուգման ու գնահատման ուղղությամբ մանկավարժական քայլերը նախ և առաջ ուղղված են ուսուցման տարբեր փուլերում երեխայի մոտ ուսումնական գործունեության կազմակերպվածության մակարդակի բացահայտմանը, ինչպես նաև երեխայի ընդհանուր ընդունակությունների ձևավորման ընթացքին, ուստի կրթության տվյալ փուլում ստուգողական, տեստային աշխատանքները պետք է կառուցվեն անկախ ուսումնական առարկաներից՝ հաշվի առնելով երեխայի «ներքին հնարավորությունների» մակարդակը:

Երեխայի գիտելիքների ստուգման, գնահատման բոլոր քայլերը սովորաբար պսակվում են գնահատականով, որը մի գնահատանիշի (մայրենի, մաթեմատիկա) մեջ է ամփոփում երեխայի ուսումնական գործունեության ամենաբազմազան կողմերը, ուստի հատկապես տարրական դպրոցում առաջարկում ենք հրաժարվել տարեվերջյան ստուգման ավանդական քննական ձևից:

Ի՞նչ է առաջարկվում

Ստուգման հիմնական դերը ուսումնական գործունեության ընթացքին մշտապես հետևելու, զանազան վրիպումները ժամանակին հայտնաբերելու, մանկավարժի և սովորողների համատեղ աշխատանքում անհրաժեշտ շտկումներ անելու մեջ է:

Կրտսեր դպրոցականի ուսումնական ինքնուրույնությունը, հասարակ, ջանասեր աշակերտի վերափոխումը մշտապես կատարելագործվող մարդու, որ կարողանում է սովորել և սովորում է ողջ կյանքի ընթացքում, սկսվում է ինքնագնահատումից, հասկանալու կարողությունից, թե «սա ես արդեն կարող եմ և գիտեմ», «սա ես ամենևին չգիտեմ, պետք է իմանալ», «սա ես արդեն մի քիչ գիտեմ, բայց պետք է էլի գլուխ հանել»:

Ելնելով այս ամենից տարրական դպրոցում տարեվերջյան ստուգումքննությունների փոխարեն առաջարկում ենք ամփոփիչ ստուգատեսներ, որ պետք է տևեն շուրջ մեկ շաբաթ:

Տարեվերջյան ամփոփիչ ստուգատեսների նպատակը, ի տարբերություն գիտելիքների ստուգման և ամփոփման ավանդական ձևերի, շատ ավելի բազմաշերտ է.

- ամփոփել-արձանագրել երեխայի զարգացումն ու առաջընթացը այնպես, որ այն ակնհայտ լինի նաև երեխայի համար.
- երեխաներին հնարավորություն ընձեռել ոչ ստանդարտ, անսովոր իրավիճակներում դրսևորելու իրենց գիտելիքներն ու կարողությունները, որ նրանք վայելեն կարողանալու և իրենց գիտելիքների կիրառման նոր բնագավառ գտնելու հաճույքը,
- երեխաներին հնարավորություն ընձեռել գիտակցելու իրենց գիտելիքների ու կարողությունների կիրառման արժեքը,
- երեխաներին հնարավորություն ընձեռել գիտակցելու նոր գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման անհրաժեշտությունը,
- գործնական աշխատանքի ընթացքում նոր գիտելիքների ու փորձի ձեռքբերում:

Ամփոփիչ ստուգատեսներում կարող են կիրառվել առաջադրանքների և աշխատանքների կազմակերպման առավել ակտիվ տարրեր.

- բառախաղեր,

A.R.A.R.@

- տրված վերնագրով պատմություններ հորինել,
- տրված պատմությունը շարունակել և վերնագիր հորինել,
- դասարանային/անհատական /ընտանեկան թերթերի ստեղծում (այստեղ կարող են դրսևորվել աշակերտների ոչ միայն լեզվական ու տրամաբանական, այլ նաև հաղորդակցական ունակությունները),
- տրամաբանական խնդիրների լուծում, կազմում, բեմադրում, ներկայացում,
- տրամաբանական խաղեր կամ գլուխկոտրուկներ (կատարողական և ստեղծագործական),
- դասարանական թատրոն (սա որպես սինթետիկ արվեստ կարող է ներառնել գրեթե բոլոր առարկայական գիտելիքները, ծանոթ հեքիաթի հիման վրա սցենար գրելուց մինչև դրա յուրացում, դերաբաշխում, դեկորների և հագուստների կամ տիկնիկների պատրաստում, ներկայացում),
- ցուցահանդեսներ, ցուցադրություններ,
- համերգ-տոնախմբություններ (տոնական, ծիսական, թեմատիկ),
- էքսկուրսիաներ (նպատակային,թեմատիկ):

Ստուգատեսների կազմակերպման առաջարկվող այս ձևերը կարող են կիրառվել տարբեր համադրություններով, երեխայի մտավոր գործունեության տարբեր ձևերի ստուգման ու ամփոփման համար: Այս առաջարկներում արդեն ընտրության մեծ հնարավորություններ կան, սակայն մենք առաջարկում ենք սրանք խմբավորել երեք առավել ընդհանրական կազմակերպական ձևի մեջ:

<u>Նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ</u>

Ի սկզբանե վերապահություն անենք, որ սա քաղաքից դուրս կազմակերպվող «ժամանց» չէ, այլ երեխաների ակտիվ գործունեության մի ամբողջ համակարգ:

1.Նպատակը.

- *ճանաչողական* որակների դրսևորում (ծանոթացում հայրենի երկրի պատմական, մշակութային, ճարտարապետական կամ բնական որևէ հուշարձանի, իրենց անհրաժեշտ տեղեկությունների որոնում և ձեռքբերում),
- *լեզվամտածողության և լեզվի մշակույթի* յուրացման որոշակի մակարդակի դրսևորում (պատմական, բնագիտական, մշակութային և այլ բնույթի ինֆորմացիայի փոխանակում, գրավոր ու բանավոր շարադրանքներ),
- ընդհանուր *ֆիզիկական պատրաստվածության,* արշավային պայմաններում բարոյականային հատկանիշների դրսևորում,
- *տարածական-մաթեմատիկական* պատկերացումների, *տրամաբանական մտածողության* հմտությունների և գիտելիքների դրսևորում (չափումներ՝ տարածքային, բնակլիմայական, հատակագծի կազմում, սխեմաների կազմում, հաշվարկներ և այլն),
- *գեղագիտական* ընկալման և ճաշակի դրսևորում, բնության ու միջավայրի գեղարվեստական օրինաչափությունների ճանաչում (պլեներ՝ աշխատանք բնության գրկում, բնության ձայների, ռիթմերի, ներդաշնակության ըմբռնում),
- *միջանձնային* հատկանիշների դրսևորում (կոլեկտիվ աշխատանք, մտքերի, ինֆորմացիայի փոխանակություն, փոխօգնություն և այլն),
- *ներանձնային* հատկանիշների դրսևորում (ինքնազգացողություն, ինքնադրսևորում, ինքնագործում, տեսածի, լսածի, զգացածի իմաստավորում և տպավորությունների արտահայտում):

2.Ծրագիրը և դրա իրացումը.

Կազմվում է երեխայի ակտիվ մասնակցությամբ.

digitised by

- երեխաների հետ միասին ընտրվում է նպատակակետը՝ պատմական, ճարտարապետական կամ բնական հուշարձան,
- դասարանը բաժանվում է մի քանի աշխատանքային խմբերի, որոնք ստանում են որոշակի հանձնարարություններ, կազմում են իրենց աշխատանքային պլանը և աշխատանքի հստակ բաժանում կատարում,

– *«Պատմաբաններ».*

Դասագրքից, մանկական հանրագիտարանից, դպրոցական գրադարանում առկա այլ աղբյուրներից տեղեկություններ են հայթայթում նպատակակետի պատմական, մշակութային արժեքների մասին, կազմում հաշվետվություն իրենց նախընտրած որևէ ձևով (ալբոմ, պլակատ, լուսապատկերներ և այլն) և ներկայացնում ընկերներին:

– *«Աշխարհագրագետներ».*

Դասագրքից, մանկական հանրագիտարանից, դպրոցական գրադարանում առկա այլ աղբյուրներից տեղեկություններ են հայթայթում նպատակակետի բնական-աշխարհագրական բնութագրի, լանդշաֆտի, բուսական, կենդանական աշխարհի մասին, կազմում հաշվետվություն իրենց նախընտրած որևէ ձևով (ալբոմ, պլակատ, լուսապատկերներ և այլն) և ներկայացնում ընկերներին:

– *«Լրագրողներ».*

Նախապատրաստում են էքսկուրսիայի լուսաբանումը դասարանական, անհատական, ընտանեկան թերթերում: (թերթերում կարող են ընդգրկվել ինչպես «պատմաբանների» ու «աշխարհագրագետների» հայթայթած նյութերը, ընկերների տպավորություններն ու օրագրերը, նկարները, լուսանկարները, այնպես էլ տեղում ձեռքբերված տեղեկություններն ու հարցազրույցները):

– *«Տնտեսագետներ».*

Խմբի անդամների թվի, ընդհանուր ծախսերի, ճանապարհի երկարության, անհրաժեշտ ժամաքանակի, վառելիքի, սննդի, տեղում կատարվելիք հետազոտությունների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի և այլ կարգի հաշվարկներ են կատարում: Կազմում են հաշվետվություն իրենց նախընտրած որևէ ձևով և ներկայացնում ընկերներին:

<u>Բոլոր դեպքերում և բոլոր խմբերի համար ուսուցիչն ավագ ընկեր ու խորհրդատու է:</u> Աշխատանքներում կամավոր կերպով կարող են ընդգրկվել նաև ծնողներ, որոնք նույնպես որոշումներ կայացնելիս կարող են միայն խորհրդատուի կարգավիճակ ունենալ:

Թերթ, ամսագրեր, ալմանախ Դասարանային, անհատական, ընտանեկան թերթերի ստուգատես

Այստեղ կարող են դրսևորվել աշակերտների ոչ միայն լեզվական ու տրամաբանական, այլ նաև հաղորդակցական կարողությունները: Դպրոցական (դասարանական) մամուլը երեխաների բնական ու լիարժեք հաղորդակցության կազմակերպման հրաշալի ձև է, մանավանդ, եթե կիրառվում է ամբողջ տարվա ընթացքում: Կարելի է կազմակերպել ինչպես ներդպրոցական մամուլի ստուգատես, համադպրոցական լրագրողական առանձին շաբաթ, այնպես էլ թերթերի ու ամսագրերի հրատարակումը ընդգրկել ցանկացած այլ ստուգատես-շաբաթի ծրագրում:

1.Նպատակը.

- *լեզվամտածողության և լեզվի մշակույթի* յուրացման որոշակի մակարդակի դրսևորում (ինֆորմացիայի ձեռքբերում, ստեղծում, փոխանակում, գրավոր ու բանավոր խոսքի զարգացում),
- *ճանաչողական, հաղորդակցական* որակների դրսևորում (բնական հաղորդակցության միջավայրում նոր, իրենց անհրաժեշտ տեղեկությունների որոնում և ձեռքբերում),
- *տարածական-մաթեմատիկական* պատկերացումների, *տրամաբանա-*

A.R.A.R.@

կան մտածողության հմտությունների և գիտելիքների դրսևորում (թերթում իրենց կազմած խնդիրների, հանելուկների, տրամաբանական խաղերի հրապարակում),
- *գեղագիտական* ընկալման և ճաշակի դրսևորում, (թերթերի, ամսագրերի գեղարվեստական ձևավորում, նկարազարդում),
- *միջանձնային* հատկանիշների դրսևորում (հասակակիցների և մեծահասակների հետ շփումներ՝ բնական հաղորդակցության միջավայրում, կոլեկտիվ աշխատանք, մտքերի, ինֆորմացիայի փոխանակություն, փոխօգնություն և այլն),
- *ներանձնային* հատկանիշների դրսևորում (ինքնազգացողություն, ինքնադրսևորում, ինքնիրագործում, տեսածի, լսածի, զգացածի իմաստավորում և տպավորությունների բանավոր ու գրավոր արտահայտում):

3.Ծրագիրը և դրա իրագործումը.

Կազմվում է երեխաների ակտիվ մասնակցությամբ.
- Երեխաների հետ միասին ընտրվում է լրատվության միջոցի ձևը (թերթ, ամսագիր, ալմանախ, ռադիոթերթ, հեռուստահաղորդում և այլն), դասարանական լրատվամիջոցներից բացի կարող են լինել նաև անհատական, ընտանեկան թերթեր, ամսագրեր,
- Անհատական թերթերը, ամսագրերը պետք է պատմեն, թե ինչպես են երեխաները ապրել միասին մի ամբողջ տարի, ինչո՞վ են ուրախացել և ինչի՞ց տխրել, ի՞նչն է իրենց կարծիքով հաջողվել իրենց և ի՞նչը՝ ոչ, ի՞նչ են ամենից շատ սիրում և ի՞նչ չեն սիրում, ի՞նչ հետաքրքիր իրադարձություններ են եղել ընտանիքում, դասարանում, դպրոցում, ի՞նչ են երազում...
- Երեխաների հետ միասին որոշվում են թեմաները, խորագրերը, դասարանը բաժանվում է աշխատանքային խմբերի, որոնք ստանում են որոշակի հանձնարարություններ:
- *«Լրահավաքները»* դասագրքից, մանկական հանրագիտարանից, դպրոցական գրադարանում առկա այլ աղբյուրներից, մեծահասակներից, ընկերներից տեղեկություններ են հայթայթում իրենց ընտրած թեմաների մասին, ներկայացնում ընկերներին կամ թերթի համար հրապարակում գրում:
- *«Լրագրողները»* ճշտում են, թե ինչ հետաքրքիր իրադարձություններ են տեղի ունենալու դպրոցում, դասարանում, թաղամասում, գյուղում, քաղաքում... և այդ մասին ռեպորտաժներ գրում, հարցազրույցներ վարում:
- Յուրաքանչյուրը ուսուցչի խորհրդով ու օգնությամբ ընտրվում է տարվա ընթացքում իր գրած լավագույն շարադրությունները, հեքիաթները, պատմությունները, բանաստեղծությունները, հանելուկները, իր կազմած խնդիրները՝ դասարանական ալմանախի համար, արտագրում է դրանք և ձևավորում:
- *«Խմբագրական խորհուրդը»* անհատական թերթերից ընտրում է ամենահետաքրքիր հրապարակումները և ներկայացնում դասարանի քննարկմանը: Դասարանական թերթում (ամսագրում) տեղ են գտնում այն շարադրությունները, հոդվածները, հարցազրույցները, որոնց հավանություն են տալիս բոլորը:
- Պատրաստվում են անհատական, ընտանեկան, դասարանական թերթերի, ամսագրերի, ալմանախների ցուցահանդեսներ:
- *«Նկարիչ-ձևավորողները»* ձևավորում են դասարանական թերթերն ու ամսագրերը, ցուցահանդեսը:
- Հայտարարվում է անհատական, ընտանեկան, դասարանական լավագույն թերթի ու ամսագրի մրցույթ:
- Հնարավորության դեպքում լավ կլինի, որ դասարանական թերթերը բազմացվեն (պատճենահանվեն) և

digitised by

երեխաները ոչ միայն ընթերցեն դրանք, այլ նաև լուծեն առաջադրված հանելուկներն ու խնդիրները, կատարեն առաջադրանքները:

- Դասարանները կարող են նաև փոխանակել իրենց թերթերը, որը ոչ միայն ավելի հետաքրքիր կդարձնի ընթերցանությունը, այլ նաև կակտիվացնի հաղորդակցությունը տարբեր դասարանների միջև:

Բոլոր դեպքերում և բոլոր խմբերի համար ուսուցիչն ավագ ընկեր ու խորհրդատու է: Աշխատանքներում կամավոր կերպով կարող են ընդգրկվել նաև ծնողներ, որոնք նույնպես որոշումներ կայացնելիս կարող են միայն խորհրդատուի կարգավիճակ ունենալ:

Դասարանական թատրոն

Թատրոնը որպես սինթետիկ արվեստ կարող է ներառնել գրեթե բոլոր առարկայական գիտելիքներն ու կարողությունները և կազմակերպվել ինչպես ընթացիկ, այնպես էլ տարեվերջյան ստուգատեսների ձևով (մեկ կամ երկու շաբաթ տևողությամբ գործընթաց):

1.Նպատակը.

- *ճանաչողական* որակների դրսևորում (սցենարի հիմք հանդիսացող դասական գրական երկի, հեքիաթի, առակի, պատմվածքի կամ բանաստեղծության ուսումնասիրում, վերլուծություն),
- *լեզվամտածողություն և լեզվի մշակույթի* յուրացման որոշակի մակարդակի դրսևորում (նյութի ստեղծագործական մշակում, սցենարի կազմում, կոլեկտիվ աշխատանք տեքստի վրա),
- *ֆիզիկական պատրաստվածություն.* (բեմադրում, պար, պլաստիկա, բեմական խաղ),
- *տարածական-մաթեմատիկական* պատկերացումների, *տրամաբանական մտածողության* հմտությունների և գիտելիքների դրսևորում. (տրամաբանական խնդիրների, խաղերի կամ գլուխկոտրուկների լուծում, կազմում, բեմադրում-ներկայացում, ինչպես նաև չափումներ՝ բեմական նախագծման, դեկորների համար անհրաժեշտ նյութերի հաշվարկում, չափագրում և այլն),
- *գեղագիտական* ընկալման և ճաշակի դրսևորում, (խոսքի, ձևի, գույնի, երաժշտության համադրության, գեղարվեստական օրինաչափությունների ճանաչում, հագուստի, բեմի, դեկորների, տիկնիկների էսքիզների նախագծում և պատրաստում, երաժշտական ձևավորում, գեղարվեստական խոսքի մշակում և այլն),
- *միջանձնային* հատկանիշների դրսևորում (կոլեկտիվ աշխատանք, մտքերի, ինֆորմացիայի փոխանակություն, փոխօգնություն և այլն),
- *ներանձնային* հատկանիշների դրսևորում (ինքնազգացողություն, ինքնադրսևորում, ինքնիրագործում, տեսածի, լսածի, իմացածի իմաստավորում և տպավորությունների արտահայտում, ցանկության դեպքում նաև վերը նշվածի համապատասխան անհատական ելույթի պատրաստում):

2.Ծրագիրը և դրա իրագործումը

Կազմվում է երեխաների ակտիվ մասնակցությամբ.

- երեխաների հետ միասին ընտրվում է գրական երկը կամ թեման,
- երեխաները գրում են սցենարի իրենց տարբերակները, որոնք քննարկվում են դասարանում: Կարող է ընտրվել մեկ առանձին սցենար, սակայն շատ ավելի արդյունավետ է, երբ ընտրված մի քանի սցենարներից կազմվում է մեկ միասնականը.
- դասարանը բաժանվում է մի քանի աշխատանքային խմբերի, որոնք ստանում են որոշակի հանձնարարություններ,
- հայտարարվում է բեմադրության էսքիզների մրցույթ, ընտրված էսքիզ-

A.R.A.R.@

ների հեղինակները կազմում են *«նկարիչների»* խումբը, որը ստանձնում է բեմադրության գեղարվեստական ձևավորման գործը (դեկորներ, հագուստներ, տիկնիկներ և այլն),

- բեմադրության երաժշտական ձևավորումը ևս քննարկման լուրջ խնդիր պետք է դառնա. (*«երաժշտական ձևավորողները»* հիմնավորում են իրենց ընտրությունը),
- ընտրվում է *«դերասանների»* խումբը,
- բեմադրության պատրաստման ընթացքում հայտարարվում է նաև ազդագրերի, հրավիրատոմսերի ձևավորման մրցույթ, *«դիզայներների»* խումբը պետք է ուշադրություն դարձնի գովազդների և հրավիրատոմսերի տեքստային ինքնատիպությանը,
- *«լրագրողների»* խումբը դասարանական, դպրոցական թերթում լուսաբանում է բեմադրության նախապատրաստումը, այնուհետև գրում ներկայացման մասին, հարցազրույցներ վարում,
- պակաս կարևոր չէ նաև հրավիրատոմսերի բաժանման, դերասանների ծաղիկներ մատուցելու, դահլիճի կազմակերպման, հյուրերին ընդունելու և ճանապարհելու համար պատասխանատու *կազմակերպիչների* դերը:

Բոլոր դեպքերում և բոլոր խմբերի համար ուսուցիչն ավագ ընկեր ու խորհրդատու է: Աշխատանքներում կամավոր կերպով կարող են ընդգրկվել նաև ծնողներ, որոնք նույնպես որոշումներ կայացնելիս կարող են միայն խորհրդատուի կարգավիճակ ունենալ:

Տարրական դպրոցի ավարտական ամփոփիչ ստուգատեսների մասին այս առաջարկներից կարող են ընտրվել մեկը կամ մի քանիսը, որոնք կարող են մեկ շաբաթից մինչև մեկ ամիս տևել: Շատ կարևոր է, որ այս ընթացքում իշխի ոչ թե քննական լարված, այլ անբռնազբոս, անկաշկանդ և ազատ ստեղծագործական մթնոլորտ:

Անպայման կլինեն նաև մրցանակներ, նվերներ և խրախուսման այլ ձևեր, սակայն ցանկալի է, որ ուսուցիչները կազմեն և ունենան յուրաքանչյուր երեխայի զարգացման պատկերն արտացոլող բնութագրի ձև, որը կփոխանցվի միջին դպրոց և երեխայի զարգացման պատկերն ավելի հետևողական և ակնառու կդարձնի:

ԿԳՆ Կրթական բարեփոխումների կենտրոն

Խմբագրության կողմից

Հաջորդ համարի մեր հրապարակումներից մեկում կանդրադառնանք տարրական դպրոցում սովորողների ուսումնական գործունեության ստուգման ու գնահատման խնդիրներին:

digitised by

Տարրական դասարանների ընթերցանության դասերի կատարելագործման ժամանակակից պահանջները

Տարրական ուսուցման նպատակը հիմնարար գիտելիքների ձևավորումը չէ, այլ աշակերտներին նախապատրաստելը դրանք յուրացնելու ուսուցման հետագա օղակներում: Այս փուլում անհրաժեշտ է ապահովել կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության ընհանուր կարողությունների ու հմտությունների ձևավորումը: Այս դասարաններում ուսուցչի գերխնդիրը դառնում է սովորել սովորեցնելը: Իսկ դա նշանակում է, որ աշակերտները պետք է տիրապետեն ոչ միայն տարրական հաղորդակցական որոշակի կարողությունների ու հմտությունների (կարդալ, գրել, պատմել), այլև մտավոր կարևորագույն կարողությունների (վերլուծություն, ընդհանրացում, վերացարկում, կոնկրետացում և այլն):

Առայժմ մայրենի լեզվի դասավանդման ընթացքում մեծ տեղ են զբաղեցնում զրույցները: Անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում բնագրի վրա կատարվող աշխատանքներին, մասնավորապես, տեքստի հուզական կողմին: Նկատելի են դեպքեր, երբ մայրենի լեզվի ժամերին զրույցը, բնագիրը մասերի բաժանելը, բովանդակության սոսկ վերարտադրության աշխատանքները գերակշռում են բուն ընթերցանության գործընթացին, և բնագրի շուրջ տարվող վերլուծական, բնութագրական աշխատանքներն անտեսվում են: Այլ կերպ ասած, նման դասերը չեն ապահովում երեխայի մտավոր և բազմակողմանի զարգացումը: Համակարգված աշխատանք չի կազմակերպվում աշակերտների բառապաշարի հարստացման և կապակցված խոսքի մշակման ուղղությամբ: Ընթերցանության դասերին միշտ չէ, որ անհրաժեշտ մակարդակով են լուծվում դաստիարակչական խնդիրները:

Դասալսումների փորձը բերել է այն համոզման, որ ուսուցիչներից շատերն առայժմ բավարարվում են բնագրի շուրջ կատարվող մակերեսային աշխատանքներով: Պահանջվող չափով ուշադրություն չի հատկացվում գեղարվեստական ստեղծագործության ուսումնասիրությանը:

Փորձենք ներկայացնել, թե ինչ է ենթադրում ծրագրային նոր պահանջներից բխող ընթերցանության ուսուցումը, ինչ պահանջներ են ներկայացվում մայրենի լեզվի դասերի դասավանդման կատարելագործմանը:

Մեր օրերում ընթերցանության ուսուցումը դիտվում է իբրև անձի դաստիարակության և զարգացման հիմնական միջոց: Հետևաբար, այն պետք է ապահովի կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ոչ միայն ուսումնական նյութի կամ ընդհանրապես մանկական գրականության ինքնուրույն ընթերցման առումով, այլև հնարավորություններ ստեղծի կարդացածի գործուն ընկալման համար:

Ընթերցանությունը պետք է հետաքրքրություն առաջացնի գիտելիքների հիմնական աղբյուր հանդիսացող գրքի նկատմամբ, նպաստի աշակերտների հուզական-գեղագիտական զարգացմանը: Ահա այս պահանջով էլ հարկավոր է կատարելագործել բնագրի վրա կատարվող աշխատանքի մեթոդներն ու ձևերը:

«Ընթերցանություն» բառը միանշանակ չէ: Այն ենթադրում է մտավոր, ճանաչողական և խոսքային գործունեություն: Վերջինս, ինչ խոսք, ամենաբարդն է կրտսեր դպրոցականի համար: Հատկապես ուսուցման առաջին տարում այն ներառում է գրավոր խոսքի

A.R.A.R.@

ընկալում և վերարտադրում: Աշակերտից պահանջվում է ընկալել գրքային բառը, խոսքը, արտահայտությունը և փոխարինել այն ինքնուրույն համարժեքներով: Դա բարդ գործընթաց է: Տեքստի բովանդակության ընկալումը միանգամից չի կարող զուգակցվել կարդալու հմտության ձեռքբերման հետ: Այդ է պատճառը, որ ուսուցման առաջին տարում նյութի բովանդակության ընկալումը հետ է մնում ընթերցման հմտությունից: Դրանց զուգակցումը երկարատև և ջանադիր աշխատանք է պահանջում: Տեքստի առանձին բառերի յուրացումը դեռևս նախադասության կամ ամբողջ տեքստի ընկալում չի ենթադրում: Ավելին, տեքստն իր ամբողջության մեջ ևս, անգամ առաջին դասարանում, աշակերտների կողմից ընկալվում է ոչ միանման մակարդակով:

Աշակերտների մի մասն այն ընկալում է միայն սյուժետային հիմքով, մյուսները կարող են ընդհանրացումներ կատարել, իսկ առավել զարգացած երեխաները «տեսնում» են նաև ենթատեքստը և գաղափարը: Ահա յուրացման այս վերջին մակարդակն է, որ հաճախ չի ապահովվում:

Օրինակ՝ I դասարանի « Մայրենիի » դասագրքում զետեղված է «Գայլը և արագիլը » պատմվածքը: Աշակերտները հետաքրքրությամբ են կարդում այն, քանի որ կենդանիների մասին է, բովանդակությունը մատչելի է ու հետաքրքրաշարժ: Հետևաբար նրանք չեն դժվարանա պատասխանել բովանդակության վերարտադրման նպատակով տրվող հարցերին: Մինչդեռ փորձը ցույց է տալիս, որ նրանց մի մասն է միայն ի զորու ամբողջապես վերարտադրել պատմվածքի բովանդակությունը՝ խուսափելով գրքային բառերից, արտահայտություններից: Իսկ ավելի ստվար մասը կդժվարանա ինքնուրույն, առանց ուսուցչի մեկնաբանության սեփական վերաբերմունք դրսևորել կարդացածի հանդեպ՝ պատասխանելով դասանյութի վերջում տրված հետևյալ հարցերին՝

Ինչպիսի՞ն էր գայլը:

Ինչպիսի՞ն էր արագիլը:

Բնութագրումների ժամանակ ուսուցչի խնդիրը պետք է լինի բարի թռչունի վարմունքի մեջ ևս սխալ մոտեցում նկատել և ուշադրություն հրավիրել հետևյալ նախադասությանը. « Երբ գայլը հանգստացավ, արագիլը նրանից մի նվեր խնդրեց՝ ի հիշատակ»: Չար գայլի երախտամոռությունն ընդգծելու համար կարելի է օգտագործել դասագրքի հետևյալ հարցադրումը. «Եթե այդ պահին հանդիպեիր գայլին, ի՞նչ կասեիր նրան»:

Դասանյութի ենթատեքստի բացահայտման և ազատ ինքնարտահայտման կարողության մշակման նպատակով պետք է հենվել նյութի իմաստակիր բառերին, արտահայտություններին, առանձին նախադասություններին և աշակերտներին սովորեցնել տեքստը կարդալ նաև այդ հայացքով:

Այսպիսով, տեքստի բովանդակության ընկալումը կապվում է երեխայի անձի հետ: Հետևաբար, աշխատելով տեքստի գաղափարի պարզաբանման խնդրի շուրջ, ուսուցիչը ներգործում է աշակերտի անհատականության վրա, նպաստում դրա ձևավորմանը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի նաև աշակերտների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Հատկապես կարևորվում են բառուսուցման խնդիրները, որոնք ներառում են հետևյալ անհրաժեշտ փուլերը.

1. բառաբացատրական՝ հոմանիշների, հականիշների գործածություն,
2. ծանոթ բառերի նրբիմաստների խորքային մեկնաբանում՝ կոնկրետ խոսքային միջավայրում:

Հանրահայտ է, որ բառերն ու բառակապակցությունները գեղարվեստական տեքստում կարող են գործածվել փոխաբերական իմաստով, բազմիմաստությամբ, հագեցած հուզականությամբ, նրբերանգային գունագեղությամբ:

Լեզվի նման պատկերավորությունը խոսքը դարձնում է ավելի կենդանի, տպավորիչ ու վառ, խթանում մտածողության զարգացումը, հարստացնում երեխայի բառապաշարը: Բառուսուցման գործընթացում հատուկ նշանակություն են ստանում յուրաքանչյուր

digitised by

աշակերտի բառապաշարում նորածանոթ բառերի առանձնացումն ու խոսքի մեջ այդ բառերի օգտագործման ունակությունների մշակումը:

Փորձենք վերոհիշյալ մոտեցումները ներկայացնել կոնկրետ դասանյութի օրինակով:

Երկրորդ դասարանի «Մայրենիի» դասընթացի «Միշտ հին ու նոր իմ Հայաստան» թեմատիկ խմբում զետեղված է Վ. Իսրայելյանի «Չնվաճված աշխարհամաս» պատմվածքը:

Դասանյութը մեծ հնարավորություն է ընձեռում՝ խոսելու հայ ժողովրդի բարոյական նկարագրի և հոգևոր արժեքների մասին: Դա մի գեղեցիկ պատմություն է հեռվում թողած ծննդավայրի մասին, որի անափ կարոտը հաճախ է փոթորկում պապի խռովահույզ հոգին և մղում այդ վերհուշը թոռան հետ վերապրելու:

Պատմվածքը գրված է հուզական ջերմ շնչով: Ուսուցչի խնդիրն է առաջին հերթին հուզական այդ տրամադրությունը փոխանցել աշակերտներին, քանի որ, հայտնի ճշմարտություն է՝ նախ պետք է ներազդել երեխայի սրտի, ապա՝ մտքի վրա:

Պատմվածքի առաջին նախադասությունը՝ « Ով՝ ով, բայց պապն ու թոռը միմյանց հասկանում էին» ենթատեքստի բանալին է: Այդ մտերմիկ հարաբերություններից ու անմիջական հաղորդակցումներից վերածնվում է անցյալը և հպարտությամբ պարուրում պապի հոգին: Եվ նա բավարարված է զգում ինքն իրեն. չէ՞ որ կարող է փոխանցել իր ավանդները, և կապրի, կհարատևի իր սերունդը:

Նպատակահարմար է պատմվածքի մեկնաբանությունը կատարել ոչ թե ուսուցչի հաղորդման, այլ աշակերտների խմբային աշխատանքի միջոցով՝ առանձին հատվածների իմաստակիր բառերը որոշելու և ենթատեքստը մեկնաբանելու առաջադրանքով:

Այսպես, առաջին նախադասության ընթերցումից հետո առաջարկվում է տեքստից ընտրել այն տողերն ու արտահայտությունները, որոնցում խոսվում է պապի և թոռան մտերմության մասին (« Երբ պապը նստում էր ճոճոան թախտին և թիկնում բարձին, Հակոբիկն զգում էր, որ խոսելու կարիք ունի: Գնում էր ու <u>կատվի պես</u> <u>կծկվում</u> ոտքերի մոտ »):

Բացատրվում են՝ կծկվել-կուչ գալ: Ուսուցիչը աշակերտների օգնությամբ անդրադառնում է նաև կծկվել բառի փոխաբերական իմաստներին.

Ուսուցիչ - Իսկ ե՞րբ են կծկվում:

Աշակերտ – Կծկվում են ցրտից, ցավից, տհաճ անակնկալից, վատ տրամադրությունից, ընկճվածությունից:

Ուսուցիչ - Ճիշտ է , ուրեմն՝ բառը նաև տրամադրություն կարող է հաղորդել: Իսկ ի՞նչ տրամադրություն է հուշում « կատվի պես կծկվել» արտահայտությանը:

Աշակերտ- Գգվելու, փաղաքշանքի, մտերմիկ զրույցի պատրաստվելու տրամադրություն:

Արտահայտության բացատրությունն օգնում է հասկանալու այն մտերմիկ հարաբերությունն ու փոխըմբռնումը, որ ստեղծվել էին պապի ու թոռան միջև: Պապը հուզված է և իր խոհերն ու տրամադրությունը կիսելու կարիք ունի, իսկ թոռը հպվում է պապին: Ու թեև ընկճված է նրա տխրությունից՝ բայց և այնպես մտերմիկ գորովանքով պատրաստվում է զրույցի:

Այսպիսով, բնագրի վրա տարվող աշխատանքը ոչ միայն բովանդակությունը պարզաբանելու, այլև նախնական տպավորությունը ստուգելու և խորացնելու նպատակ է հետապնդում: Այս կերպ աշակերտները հնարավորություն կունենան շատ բան վերցնելու ուսումնասիրվող նյութից, այն կընկալեն բազմակողմանիորեն, «կտեսնեն» յուրաքանչյուր բառի, տողի ուղիղ և փոխաբերական իմաստները:

Այդ նպատակին կարող է ծառայել նաև աշակերտների մեկ այլ խմբին առաջադրվող պահանջը՝ «Առանձնացնել պապի «հեքիաթին» վերաբերող հատվածը»: Այն կարելի է վերնագրել «Կարոտ»:

A.R.A.R.@

Ուսուցչի նպատակը պետք է լինի հարցադրումներն առաջադրել այնպես, որ աշակերտների պատասխանները հիմնավորվեն բնագրի տողերով: Նա հատկապես առանձնացնում է «Լինու՞մ է, չի լինու՞մ, լեռների մեջ մոլորված մի գյուղ է լինում: Էս գյուղը մի ճանապարհ է միայն ունենում, էն էլ՝ տանում էր լեռան գագաթը »:

Աշակերտների պատասխանները բնականորեն կվերաբերեն պապի պատմությանը և կամփոփվեն այն ընդհանրացմամբ, թե դա մի տխուր պատմություն է հեռվում թողած ծննդավայրի մասին:

Ուսուցչի խնդիրը կլինի՝ օգնել երեխային առանձնացնելու և մեկնաբանելու հատվածի իմաստակիր բառը: Այն է՝ մոլորված, որ նշանակում է շեղված, ճանապարհը կորցրած, սխալված, շվարած (բրբ.): Իսկ ենթատեքստում՝ հեռու, միայնակ, ոչնչով աչքի չընկնող: Այս բացատրությունը կօգնի հասկանալ նաև պատմվածքի ավարտի՝ «չնվաճված աշխարհամաս» արտահայտությունը և պատմվածքի սևեռուն գաղափարը. այսպիսի գյուղն անգամ անջնջելի հուշ է թողել պապի հիշողության մեջ, քանի որ ի՛ր ծննդավայրն է, հետևապես՝ աշխարհամասի արժողությամբ, ամենասիրուն, ամենահիսկական, միայն քե՛զ սիրելի. ոչ ոք այն քեզանից խլել, նվաճել չի կարող, ինչ ճակատագիր էլ ունենա:

Ընթերցանության ուսուցումը մի ամբողջական համակարգ է: Ուսուցման ժամանակակից պահանջի թելադրանքով այդ համակարգում «կարդալու կարողություն» ասելով այսօր ենթադրվում են և՛ ընթերցելու տեխնիկական կողմը, և՛ կարդացածի ընկալումը, և՛ կողմնորոշումը նյութի սահմաններում: Կարևորվում է նաև կրտսեր դպրոցականների տարիքին համապատասխան գիտահանրամատչելի գրականության և մամուլի ընթերցումը: Այլ կերպ ասած՝ «կարդալու կարողություն» ասելով հասկանում ենք ուսումնական կամ մանկական գրքերից ու պարբերականներից օգտվելու որոշակի հմտություն:

Փոխվել են նաև ընթերցանության ուսուցման մեթոդներն ու ձևերը:

Առաջին հերթին անհրաժեշտ է քիչ տեղ հատկացնել նախկինում տարածված հարց - պատասխանով զրույցի մեթոդին: Լավագույն ուսուցիչների պրակտիկայում փոխվել է զրույցների բնույթը. բովանդակության վերաբերյալ մանրամասն զրույցի փոխարեն օգտագործվում է բնագրի հենքը: Միաժամանակ պետք է ասել, որ ընթերցանության ուսուցման ժամանակակից դրվածքը բնութագրվում է ոչ այնքան նոր մեթոդների ու ձևերի «հայտնագործումով», որքան դրանց նպատակային գործադրումով:

Վերջին տարիներին ընթերցանության ուսուցման մեթոդիկան բնութագրվում է աշակերտների ինքնուրույն աշխատանքի չափով: Այս իմաստով ինքնուրույն աշխատանքը որակական փոփոխությունների է ենթարկվել: Այսօր առաջավոր ուսուցիչները աշակերտների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելիս բավարարվում են ոչ միայն ընթերցվող նյութը կարդալով ու այն վերլուծելով, այլև մտահոգվում են որոշակի կարողությունների ձևավորմամբ (կարդալ, բնագրի վրա աշխատել, խոսքային իրավիճակներում կողմնորոշվել, գրքից օգտվել): Աշակերտների ինքնուրույն գործունեությունը խրախուսելի է, եթե նրանք առանց ուսուցչի օգնության կարող են աշխատել համապատասխան ցանկացած նյութի վրա:

Ընթերցանության դասավանդման պրակտիկայում նորովի մոտեցում է նկատվում նաև ստեղծագործության վերլուծության ոլորտում: Նախկինում շատ տարածված բացատրական ընթերցանությանը եկել է փոխարինելու որոշակի հաջորդականության մեջ համակարգված յուրացումը: Այժմ խորհուրդ է տրվում ստեղծագործության յուրացումն իրագործել հետևյալ հաջորդականությամբ:

digitised by

Դասի փուլը	Աշխատանքի ձևը
1. Ընթերցանության նախապատրաստում:	1. Ուսուցչի խոսքը կամ հակիրճ զրույցը:
2. Ստեղծագործության ընկալման առաջին աստիճան:	2. Նոր նյութի լուռ ընթերցում:
3. Ստեղծագործության բովանդակության ընկալման ստուգում:	3. Մեկ - երկու հարց, որի միջոցով ճշտվում է աշակերտների առաջին տպավորությունը կարդացածից:
4. Ստեղծագործության ընկալման 2-րդ աստիճան և աշխատանք՝ բնագրի վրա (ուսուցչի օգնությամբ կամ ինքնուրույն):	4. Հիմնական մեթոդը՝ աշխատանք տեքստի վրա. աշակերտների կողմից ընթերցում, ընտրովի ընթերցանություն, համապատասխան հատվածների մեջբերումներ, հերոսների արարքների վերլուծություն, ստեղծագործության լեզվի վերլուծություն:
5.Համադրում՝ բնագրի ամբողջական յուրացում-վերլուծությունից հետո:	5. Կարդացածի վերաբերյալ աշակերտների վերաբերմունքի արտահայտում, արտահայտիչ ընթերցանություն, ստեղծագործական աշխատանք:

Ընթերցանության այս հաջորդականությամբ որոշվում է նաև դասի տրամաբանությունը: Յուրացման յուրաքանչյուր փուլ ունի իր կոնկրետ բովանդակությունը: Այդ փուլերն ընկնում են դասի հիմքում, և ընտրվում են ուսուցման համապատասխան մեթոդներ ու հնարներ:

Այսպես, 1-ին աստիճանի ընկալումը իրագործվում է հետևյալ հնարներով՝ ուսուցչի ընթերցանություն, աշակերտի լուռ ընթերցանություն, նախապատրաստում բարձրաձայն ընթերցանության, մեկնողական ընթերցանություն:

2-րդ՝ խորացված ընկալումն իրագործվում է ընտրովի ընթերցանության և բնագրի վերլուծության միջոցով: Արտահայտիչ ընթերցանությանն ու վերլուծական աշխատանքների արդյունավետությանը նպաստում են բեմականացումներն ու դերերով ընթերցանությունը:

Կարինե Թորոսյան
ԿԲԿ առաջատար մասնագետ

A.R.A.R.@

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կրտսեր դպրոցականների արտադասարանային ընթերցանության նպատակը գրքի, ընթերցանության նկատմամբ կայուն հետաքրքրության արթնացումն է և այդ ճանապարհով նրանց մեջ անձնային դրական որակների ձևավորումը:

Եթե աշխատանքը ճիշտ է պլանավորված և կազմակերպված, ապա կրտսեր դպրոցականները արտադասարանային ընթերցանությամբ պարբերաբար զբաղվում են թե՛ դասարանում՝ դասի ժամանակ, թե՛ դասից դուրս՝ տանը: Մեթոդապես ճիշտ և համակարգված ընթերցանության կազմակերպումը նպաստում է կրթադաստիարակչական մի շարք խնդիրների լուծմանը: Հասկանալով կարդալ, տիրապետել ընթերցանության արտահայտչամիջոցներին, գրքով աշխատել, այն դիտելով, որպես գիտելիքների, բարոյական և գեղագիտական ինքնադաստիարակման, սովորելու կարողությունների մշակման հիմնական աղբյուր:

Կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհրաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարժորեն ճիշտ և նպատակային կազմակերպում: Այնտեղ, որտեղ կրտսեր դպրոցականների նպատակային և պլանավորված ինքնուրույն ընթերցանությունն իրականացվում է հանձնարարական կանոններով և վերահսկմամբ (ո՞վ է կարդալ սիրում, ո՞վ չի սիրում), աշխատանքը դառնում է տարերային, հաջողությունները՝ մասնակի:

Գրքի նկատմամբ հետաքրքրությունը և սերը պահպանվում և զարգանում են, եթե առկա են որոշակի պայմաններ՝

1. Այն գիրքը, որի նկատմամբ մենք կամենում ենք երեխաների մեջ սեր և հետաքրքրություն արթնացնել, նրանց ձեռքին պիտի լինի մշտապես: Ասել է, թե՝ երեխան պետք է շրջապատված լինի գրքերով: Եվ որքան ձևավորմամբ գրավիչ ու բազմազան լինեն դրանք, այնքան մեծ կլինի երեխաների հետաքրքրությունը:
2. Յուրաքանչյուր դասի ընթացքում գրքի հետ տարվող աշխատանքի բովանդակությունը խստորեն պիտի համապատասխանի երեխաների կարդալու կարողություններին, գիտելիքների փաստացի մակարդակին և ճանաչողական հետաքրքրություններին:
3. Աշխատանքը գրքով պետք է կազմակերպել այնպես, որ բավարարի ամեն մի երեխայի հետաքրքրությունը:

Ինքնուրույն մանկական ընթերցանության հիմնական ձևերը

Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության գլխավոր կազմակերպիչը ոչ թե գրադարանավարն է, այլ դասվարը: Արտադասարանային ընթերցանության կազմակերպման ձևերը բազմաբնույթ են.

- արտադասարանային ընթերցանության դասեր,
- սովորողների զանգվածային արտադասարանային գործունեություն՝ կապված ընթերցանության հետ (գրական ցերե-

digitised by

կույթների, վիկտորինաների նախապատրաստում, գրքերի ցուցահանդեսներ, դասարանային գրադարանի ստեղծում, և այլն),

• սովորողների ընթերցանության ուղղությամբ քարոզչություն ընտանիքներում,

• օգնություն՝ երեխաների անձնական գրադարանների ստեղծման գործում:

Արտադասարանային ընթերցանության դասերն առանձնացվում են ընթերցանության համար նախատեսված ժամերից և արտացոլվում են դասամատյանում:

Մշտապես իրականացվող արտադասարանային ընթերցանությունը, ապահովելով կրտսեր դպրոցականների վրա մանկավարժական ազդեցության պարբերականությունը, սովորողներին նախապատրաստում է մանկական գրքերի ինքնուրույն ընտրությանը: Յուրաքանչյուր երեխայի համար ստեղծվում են ընթերցողական փորձի և ճաշակի զարգացման, կարդացածի օգտակարության և արդյունավետության գիտակցման պայմաններ:

Արտադասարանային ընթերցանության՝ պարապմունքից պարապմունք ընկած ժամանակահատվածում ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է «ընթերցանության անկյան» վրա: Այն ձևավորվում է անմիջապես առաջին պարապմունքից հետո և գործում է ուսուցման 3 տարիների ընթացքում:

Արտադասարանային ընթերցանության հետ կապված զանգվածային միջոցառումները (ցերեկույթներ, հանդեսներ, վիկտորինաներ, գրքերի ցուցահանդեսներ և այլն) կազմակերպվում են ոչ ավելի, քան քառորդը 1-2 անգամ: Այստեղ կարևորն այն է, որ անհրաժեշտ նյութի ընտրությունը համապատասխանի սովորողների՝ որոշակի ժամանակահատվածում ինքնուրույն ընթերցած գրքի բովանդակությանը:

Այդ միջոցառումների ժամանակ անհրաժեշտ է երեխաների առաջ դնել որոշակի խնդիրներ և հնարավորություն ստեղծել, որ նրանցից յուրաքանչյուրը դրսևորի խնդրի լուծման նախաձեռնություն, ստեղծագործական մոտեցում, փորձի իր ուժերը և հանդես գա հասարակության առջև: Օրինակ, եթե արտադասարանային ընթերցանության գծով մեկ քառորդի ընթացքում նախատեսված է ընթերցել զգալի թվով հեքիաթներ, ապա նպատահարմար է որպես հանդիսության նյութ ընտրել կարդացած հեքիաթներից: Այս մասին սովորողներին պետք է զգուշացնել քառորդի սկզբում: Ընթերցված յուրաքանչյուր հեքիաթ հատուկ առաջադրանքով պետք է ուսումնասիրվի ցերեկույթի համար: Ուսուցչի օգնությամբ (կարելի է ընդգրկել նաև բարձր դասարանցիներին, ծնողներին) կազմակերպվում են մտահղացումների իրականացման աշխատանքները: Այդ նպատակով ստեղծվում են աշխատանքային փոքր խմբեր, որոնք ստանում են տարաբնույթ առաջադրանքներ և լուծում որոշակի խնդիրներ: Ուսուցիչը միայն հետևում է նախապատրաստական աշխատանքների ընթացքին: Անմիջականորեն մասնակցում է միայն աշխատանքի ավարտական փուլում:

Աշխատանքը ճիշտ կազմակերպելու դեպքում սովորաբար ցերեկույթին մասնակցում է ամբողջ դասարանը: Սա ցերեկույթի հաջողության կարևորագույն գրավականն է: Արտադասարանային ընթերցանության հետ կապված զանգվածային միջոցառումների նախապատրաստումն ու անցկացումը չի կարելի դիտել որպես զվարճալի միջոցառում: Ընդհակառակը՝ այդ աշխատանքն արթնացնում է հետաքրքրություն գրքի նկատմամբ, զարգացնում է երեխաների երևակայությունը, հիշողությունը, խոսքը, ճաշակը, դաս-

A.R.A.R.@

տիարակում բարոյականային արժեքավոր որակներ :

Այս դիրքորոշմամբ էլ պետք է մոտենալ դասարանային գրադարանի, գրքերի ցուցահանդեսի, անձնական գրադարանի ձևավորման աշխատանքներին: Այսպիսի գործունեության ընթացքում սովորողների մեջ ձևավորվում է ընթերցողական գործնական փորձ: Ծնողների օգնությամբ դասարանում ստեղվում է գրքերի անկյուն: Դրվում է մի սեղան, գրապահարան, գրատախտակ և այլն: Ցուցադրվում են մանկական գրքեր: Սեղանին, առաջին պլանում, երեխաներին մատչելի տեղում դրվում է այն գիրքը, որն այդ շաբաթ ընթերցել է ուսուցիչը: Դասամիջոցին երեխաները մոտենում են, թերթում գիրքը, դիտում նկարները: Ուսուցիչը հետևում է երեխաներին և գրքերի հետ խնամքով վարվելու համապատասխան խորհուրդներ տալիս: Դեռևս առաջին դասարանի առաջին կիսամյակից պետք է պարտադիր համարել դասարանային գրադարանի ստեղծումը և ստեղծագործաբար ընդօրինակել ու օգտվել թե՛ դպրոցական, թե՛ մանկական մոտակա գրադարանից: Ուսուցիչը պետք է մշտական կապի մեջ լինի այդ գրադարանների աշխատակիցների հետ:

Պակաս կարևոր չէ ուսուցչի ուշադրությունը աշակերտների անձնական գրադարանի նկատմամբ: Չէ՞ որ այստեղից է սկսվում փոքրիկ ընթեցողի ընթերցողական ճաշակի, հետաքրքրությունների ձևավորումը, գրքի նկատմամբ վերաբերմունքն ու ընդհանուր կուլտուրան: Փաստորեն անձնական գրադարանի ստեղծումը պարբերաբար իրականացվող ընթերցանության առաջին քայլն է: Ուսուցչի և ծնողների օգնությամբ դրա կանոնավոր կազմակերպումը երեխայի հետագա ընթերցանության, գիտելիքների ձեռքբերման նկատմամբ պահանջմունքի, ընթերցողական կարողությունների և հմտությունների ձևավորման գրավականն է: Անձնական գրադարանի հարստացումն անհրաժեշտ գրքերով հետաքրքրաշարժ, գրավիչ և օգտակար զբաղմունք է, որով երեխան որոշ չափով լցնում է իր ազատ ժամանակը: Ծնողական ժողովների ժամանակ պարբերաբար քննարկվում են մանկական ընթերցանության խնդիրները, և կատարվում է այդ ուղղությամբ ծնողների փորձի փոխանակում:

Ընթերցողական ունակությունների ձևավորման փուլերը 1-ին – 3-րդ դասարաններում

Ինքնուրույն ընթերցողական ունակությունների ձևավորումն սկսվում է ուսուցման առաջին օրվանից և իրագործվում աստիճանաբար՝ փուլ առ փուլ.

I փուլ՝ (նախապատրաստական) 1-ին դասարանի առաջին կիսամյակ, երբ աշակերտները դեռևս նոր են գրաճանաչ դառնում.

II փուլ՝ (տարրական կամ նախնական) 1-ին դասարանի 2-րդ կիսամյակ.

III փուլ՝ (հիմնական) 2-րդ և 3-րդ դասարաններ:

Երեք փուլերի համար էլ կարևոր խնդիրներ են երեխաների ընթերցողական մտահորիզոնի ընդլայնումը և յուրաքանչյուր երեխայի ընթերցողական փորձի կատարելագործումը:

Նախապատրաստական փուլում անհրաժեշտ է 1-ին դասարանցիների մեջ արթնացնել գրքի նկատմամբ հետաքրքրություն, ամեն օր, յուրաքանչյուր ազատ ժամ գրքով զբաղվելու ձգտում: Ձեռք են բերվում գրքից օգտվելու գործնական գիտելիքներ և կարողություններ:

Այս փուլում աշխատանքը կազմակերպվում է հետևյալ կերպ. Պարբերաբար,

digitised by

շաբաթական մեկ անգամ, որոշակի օր ու ժամ երեխաներն ունկնդրում են ծավալով ոչ մեծ հեքիաթներ և պատմվածքներ, որոնք ընթերցում է ուսուցիչը: Երեխաները ունկնդրում են հեքիաթում տեղի ունեցած դեպքերը, առանձնացնում էական մանրամասները, ծանոթանում հերոսներին, հիշում ոչ միայն նրանց անունները, այլև վարքը, գործողությունները: Սովորաբար ընթերցվող հեքիաթներն ընտրվում են ոչ թե գրողների հատորյակներից, այլ հատուկ երեխաների համար հրատարակված առանձին գրքույկներից: Հեքիաթն ընթերցելուց հետո ուսուցիչը գիրքը փոխանցում է երեխաներին և թույլ տալիս, որ նրանք բռնեն գիրքը, թերթեն, դիտեն կազմը, նկարազարդումները: Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է կազմի վրա, ցույց տալիս և կարդում գրքի վերնագիրը: Հեքիաթի անվանումը և հեղինակի անունը կրկնել է տալիս երեխաներին: Կարդում է առանձին նկարազարդումների տակ գրված տողերը, մղում նրանց՝ համապատասխան հատվածը հասկանալու, դեպքերի և հերոսների մասին պարզ դատողություններ անելու և այլն: Այնուհետև հանձնարարվում է մտապահել ընթերցած գրքի վերնագիրը, անձնական գրադարանում փնտրել, գտնել և դպրոց բերել նմանատիպ այլ գրքեր: Կարելի է կազմակերպել փոքրիկ ցուցահանդեսներ:

Առաջին դասարանի 2-րդ կիսամյակում սկսվում է ինքնուրույն ընթերցանության նախնական փուլը: Այս փուլում արտադասարանային ընթերցանության պարապմունքի ժամանակ աշակերտներն աստիճանաբար սովորում են առանց ուրիշի օգնության կարդալ անծանոթ գիրքը, գտնել վերնագիրը, հեղինակի անունը, դիտել նկարազարդումները և դրանց հիման վրա որոշել գրքի թեման: Հարկ է սովորեցնել ընթերցելիս չշեղվել, հիշել կարդացածի բովանդակությունն ու վերնագիրը, պատմել այն, պատկերացնել իրադրությունը և հերոսներին, պատմելիս ցուցադրել համապատասխան նկարազարդումները և այլն: Զուգահեռաբար աշակերտները պետք է սովորեն գրառել կարդացած գրքի վերնագիրը: Այդ նպատակով ուսուցիչը երեխաներին խորհուրդ է տալիս առանձնացնացնել հատուկ տեղերը և գրի առնել կարդացած գրքի հեղինակի անուն, ազգանունը և գրքի վերնագիրը: Փոքրիկները սիրով կատարում են նաև տրվող հեքիաթի բովանդակությանը վերաբերող փոքրիկ նկարազարդումներ: Այդ աշխատանքն սկսվում է հենց տետրի շապիկի նկարազարդումից:

Այս խնդիրները հաջողությամբ լուծելու համար հարկավոր է հաշվի նստել 1-ին դասարանցիների, որպես ինքնուրույն ընթերցողների, տարիքային, մտավոր, հոգեբանական առանձնահատկությունների հետ:

Իրենց ուժերին անվստահ կամ վատ կարդացող երեխաների համար ինքնուրույն ընթերցանությունը բարդ և ծայրահեղ լարված գործընթաց է: Այն նպատակային և արդյունավետ կընթանա միայն աշխատանքը հատկապես մանկավարժորեն և մեթոդապես ճիշտ կազմակերպելու պայմաններում:

Ի վերջո երեխան գրքի հետ մնում է մեն-մենակ: Նրա հնարավորությունների սահմաններով կանխորոշված՝ ուսուչական ու ծնողական բարեհամբույր, համբերատար, նպատակասլաց աշխատանքով է միայն երեխան հաղթահարելու ծագող դժվարությունները: Մեկ անգամ ևս կարևորում ենք արտադասարանային ընթերցանության ուղղությամբ ուսուցչի և ծնողի համատեղ աշխատաքի անհրաժեշտությունը: Որպեսզի ծնողը տանը հետևի երեխայի ընթերցանությանը, նրա մեջ պետք է համոզմունք ձևավորված

A.R.A.R.@

լինի այդ աշխատանքի կարևորության նկատմամբ: Նա պետք է զինված լինի համապատասխան գիտելիքներով և կարողություններով, իսկ այդ ամենը ծնողի մեջ պետք է սերմանի ուսուցիչը:

Ուսուցման առաջին տարում ինքնուրույն ընթերցանությունը պարտադիր է միայն արտադասարանային ընթերցանության դասին: Թեև ինքնուրույն ընթերցանությունն 1-ին դասարանում բոլոր երեխաների համար կազմակերպվում է միևնույն դասաժամին և միևնույն գրքի շուրջ, առանձին աշակերտներին հանձնարարվող առաջադրանքները տարբերակվում են:

Արտադասարանային ընթերցանության հիմնական խնդիրները լուծվում են 2-րդ և 3-րդ դասարաններում: Երկրորդ դասարանում աստիճանաբար բարդանում են ընթերցանության խնդիրները: Աշակերտներն արդեն սովորում են կարդալ ոչ միայն ուսուցչի հանձնարարած կոնկրետ գիրքը, այլև ինքնուրույն ընտրել գրքերը, ամսագրերը և կարդալ՝ ըստ իրենց նախասիրությունների: Հենվելով աշակերտի՝ անծանոթ գրքի հանդեպ կողմնորոշվելու տարրական կարողությունների վրա՝ ուսուցիչը հանձնարարում է գրքեր փնտրել և կարդալ որոշակի թեմայի շուրջ: Ընթերցված գրականությունը երեխաները բերում են դասարան: Մինչև արտադասարանային ընթերցանության դասը կազմում են թեմատիկ ցուցահանդես և բացատրում, թե ինչով է տվյալ գիրքն արժանացել ցուցադրելու պատվին: Այսպես, աստիճանաբար 2-րդ դասարանցիները կազմում են իրենց կարդացած գրքերի դասարանային քարտարանը: Հետզհետե հաստատվում է երեխաների ընթերցած գրքերի ցանկը, կատարելագործվում են ընթերցողական կարողությունները: Ուսուցչի հանձնարարությամբ նրանք իրենց տետրերում գրում են ոչ միայն կարդացած գրքերի վերնագիրն ու հեղինակի անունը, այլև՝ տվյալ ստեղծագործության տպավորիչ տողերը, հաճելի բառերն ու արտահայտությունները: Կատարում են նկարագարդումներ: Այս փուլում արդեն երեխաները պետք է կարողանան որոշել, թե գրքի նկարագարդումը հեքիաթի կամ պատմվածքի որ հատվածին է վերաբերում, հիշեն համապատասխան տողերը:

Աշակերտները միաժամանակ պետք է սովորեն պահպանել և ընթերցելով յուրացնել ինչպես դասարանային, այնպես էլ դպրոցական գրադարանի գրքերը: Դպրոցական գրադարանից նրանք ի վիճակի են օգտվել 2-րդ դասարանի II կիսամյակից: Այդ կողմնորոշմամբ առաջին անգամ նրանց պետք է ուղեկցի դասվարը:

3-րդ դասարանում անհրաժեշտ է հաշվի առնել, որ երեխաներն ավելի տարիքով են և համեմատաբար ավելի փորձ ունեն: Այդ իսկ պատճառով էլ բարդանում են առաջադրանքները: 3-րդ դասարանցիները պարբերաբար պետք է կարդան ոչ միայն հանուն արտադասարանային ընթերցանության, այլև հետաքրքրող թեմաների բերումով թերթեն մանկական մամուլ և այլն: Գիրքն ընտրելիս պետք է առաջնորդվել ոչ միայն ուսուցիչների կողմից առաջադրանքների ցուցակով, այլև օգտվել մանկական գրադարանից: Աստիճանաբար պետք է հարստանա ինչպես դասարանական, այնպես էլ անձնական գրադարանը:

(շարունակելի)

Ջուլյետա Գյուլամիրյան

Մանկ. գիտ. դոկտոր

Հաջորդ համարում կներկայացվեն արտադասարանային ընթերցանության դասերի կազմակերպումը 1-3-րդ դասարաններում և աշակերտների գնահատման չափանիշները:

digitised by

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ՓՈԽԳՈՐԾՈՒՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՄԵԹՈԴՈՎ

Տարրական դասարանների մաթեմատիկայի ուսումնական նյութի կայուն յուրացումը մեծապես պայմանավորված է ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությամբ:

Առաջին հերթին դա վերաբերում է ուսուցման ինտերակտիվ մեթոդի գործադրմանը:

Համառոտակի ներկայացնենք այդ մեթոդի կիրառման քայլերը.

1. Ուսուցիչն առաջադրում է քննարկվող հարցը (խնդիր, առաջադրանք, թեմա):
2. Նա ոչ թե տեղեկատվություն է տալիս (ուսումնական նյութ է հաղորդում), այլ մեկնաբանում է հարցադրումը:
3. Յուրաքանչյուր աշակերտ առաջադրված հարցի վերաբերյալ իր իմացածն է ներկայացնում: Նա պահպանում է հետևյալ «կանոնները».

ա/. Ոչ մեկը չի կաշկանդվում՝ մտածելով, որ ինքը կարող է սխալվել:

բ/. Ուրիշի կարծիքը որևէ մեկը չի մերժելու:

գ/. Խրախուսվում է ցանկացած կարծիք, տեղեկատվություն, ուսումնական նյութ:

4.Բոլոր առաջարկությունների ընդգրկմամբ ստեղծվում է «ուսումնական նյութի բանկը»:

5. Թիմով (դասարանի աշակերտներով) ստեղծում են ուսումնական նյութը:
6. Աշակերտներից յուրաքանչյուրին տրվում է ուսումնական նյութի նախապես կազմված տեքստի կրկնօրինակը:
7. Ստացված օրինակների վրա աշակերտները նախապես պայմանավորված սիմվոլներով նշումներ են անում (ինձ հայտնի էր: Չգիտեի, բայց ընդունում եմ: Կասկածում եմ: Կարծում եմ, որ սխալ է):
8. Ուսուցիչն ընդհանրացնում է աշխատանքը:

Նշված քայլերու առկա են «Ուղեղային գրոհ» մտավարժանքի տարրերը:

Տարրական դասարաններում ուսուցման փոխգործուն մեթոդը կարող է կիրառվել դասաժամին, (5-10 րոպե):

Ավելի արդյունավետ է մեթոդի կիրառումն սկսել երրորդ դասարանում:

Երեք օրինակով մեկնաբանենք այն:

Առաջադրանք. «1-100-ը ներառյալ զույգ թվերի գումարը որքանո՞վ է ավել կենտ թվերի գումարից»:

«Ուղեղային գրոհի» պայմաններում աշակերտներն «առաջարկում են».

ա/.Կալկուլյատորով (հաշվիչով) կհաշվենք:

բ/.Նշված զույգ թվերի գումարը կհաշվենք (2+100),(4+98),(6+96),...և այլ:

գ/.Նշված կենտ թվերի գումարը կհաշվենք (1+99),(3+97),(5+95),...և այլ:

դ/. Հետո կհաշվենք տարբերությունը:

է/. Առաջին գումարը կլինի՝ 102 ·25 =2550:

ը/. Երկրորդ գումարը կլինի՝100 ·25 =2500:

թ/. Տարբերությունը կլինի՝ 2550-2500= 50:

Բացի նշված «առաջարկներից», նրանք այլ մտքեր էլ կարտահայտեն, սակայն «մաղելով» առաջարկները՝ կստանանք նշված սխեման:

Պետք է նշել, որ դեռևս չկա առաջադրանքի արդյունավետ լուծման «փայլուն գաղափարը»:

Աշխատանքը շարունակվում է հետևյալ սխեմայով.

ա/. Մեկ շարքով գրվում են զույգ թվերը, մյուս շարքով՝ համապատասխան կենտ թվերը (միմյանց տակ).

2, 4, 6, 8, ... , 94, 96, 98, 100:

1, 3, 5, 7, ... , 93, 95, 97, 99:

բ/. Յուրաքանչյուր զույգ թիվ իր համապատասխան կենտ թվից մեծ է 1-ով:

գ/. Կա 50 զույգ և 50 կենտ թիվ:

դ/.Հետևաբար, տարբերությունը կլինի 50:

A.R.A.R.@

Երրորդ դասարանում այս քննարկումը կարող է տևել մինչև 30 րոպե:

Առաջադրանք. «100 մ երկարություն ունեցող գնացքը պետք է անցնի 100 մ երկարություն ունեցող կամրջով: Գնացքը քանի՞» վայրկյանում կանցնի կամուրջը, եթե 100 մ-ն անցնում է 10 վ-ում»:

Քննարկման մանրամասնությունները չնշենք: Ներկայացնենք միայն այն մասը, որը հասցնում է լուծման.

ա/. Ճանապարհը կլինի՝

100մ + 100մ = 200մ:

բ/. Ժամանակը կլինի՝

200 : 10 = 20(վ):

գ/. Գնացքը կամուրջը կանցնի 20 վայրկյանում:

Առաջադրանք. «Վերականգնել թվաբանական գործողությունը.

նաա + նաա = սաա»:

Աշակերտները նախ կնշեն երկուական թվեր, որոնց գումարը նույնպես եռանիշ թիվ է: Այնուհետև կասեն միևնույն միավորն ու տասնավորն ունեցող եռանիշ թվեր, կկռահեն, որ դրանք 0- ներ են: Նման դատողություններով կկռահեն պատասխանները.

100+100 =200, 200+200 =400,

300+300 =600, 400+400 = 800:

Ներկայացնենք ևս մի քանի տրամաբանական խնդիրներ, որոնք կարելի է առաջադրել 1-3-րդ դասարաններում ուսուցման ինտերակտիվ մեթոդը կիրառելու նպատակով.

1. 3 լ և 5 լ տարողություն ունեցող երկու անոթներով ջրավազանից ինչպե՞ս կվերցնես 4 լ ջուր:

2. Ի՞նչ թիվ պետք է գրել հարցականի փոխարեն.

0,6,5,1,9,?, 2,4,7,8,10:

3. Դեկտեմբեր ամսին ամենաշատը քանի՞ կիրակի կլինի:

4. Չորս մարդ հանդիպեցին և ձեռքով միմյանց բարևեցին: Քանի՞ ձեռքսեղմում եղավ:

5. Ունենք երկու սպիտակ և մեկ կապույտ գլխարկ: Երկու երեխաների աչքերը փակում են: Նրանցից մեկի գլխին դրվում է սպիտակ, իսկ մյուսի գլխին՝ կապույտ գլխարկ: Երկրորդ սպիտակ գլխարկը թաքցնում են: Երեխաներն աչքերը բացելուց հետո տեսնում են միմյանց գլխարկների գույնը: Նրանցից յուրաքանչյուրը կկարողանա՞ կռահել իր գլխարկի գույնը; Ինչպե՞ս: Իսկ եթե երկուսի գլխին էլ սպիտակ գլխարկներ դրված լինեի՞ն:

6. Երեք արկղերում կային հավասար թվով խնձորներ: Յուրաքանչյուր արկղից 10-ական խնձոր վերցնելուց հետո երեք արկղում մնաց այնքան խնձոր, որքան կար երկու արկղում: Նախապես քանի՞ խնձոր կար յուրաքանչյուր արկղում:

7. Աղյուսակում տրված թվերից ընտրիր հինգ թիվ, որոնց գումարը լինի 20:

1	1	1
3	3	3
5	5	5
7	7	7

8. Ի՞նչ սկզբունով են ընտրված հետևյալ բառերը.

մատիտ, քանոն, խնձոր, հիսուն, սեղան, խաղալ:

Նկատելի է, որ տրված առաջադրանքները կարելի է օգտագործել նաև պրոբլեմային իրավիճակ ստեղծելու, հետևաբար՝ դպրոցականների տրամաբանական մտածողությունը զարգացնելու նպատակով:

Ռուբեն Սարգսյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

digitised by

Մաթեմատիկական դիդակտիկ խաղեր

Խաղը մեծ նշանակություն ունի երեխայի կյանքում

Դպրոց մտնող երեխան, որ նախկին նախադպրոցականն է, դռևս ցանկանում է խաղալ: Այս տարիքում ավելի շատ խաղ և զվարճալիք է պետք երեխային, քան լուրջ գործունեություն, ուստի դպրոցում պետք է դեռ երկար ժամանակ համապատասխան միջավայր և պայմաններ ապահովել խաղի համար: Շատ կարևոր է ուսումնական աշխատանքի ժամանակ կրտսեր դպրոցականի համար կիրառել խաղ-ուսուցում և ուսուցում-խաղ ձևերը:

Բազմաթիվ խաղերից կարելի է առանձնացնել մաթեմատիկական դիդակտիկ խաղերը, որոնք նպաստում են երեխաների մտավոր կարողությունների զարգացմանը: Երեխան այս դեպքում ավելի ազատ ու անկաշկանդ է զգում, իրեն թվում է, թե խաղում է, բայց խաղալով ավելի հեշտությամբ է ուրացնում դասանյութը:

Նախքան խաղը կազմակերպելը պետք է մանրամասն բացատրվեն խաղի նպատակը, ընթացքը և կանոնները: Խաղի ընթացքում խաղավարը պետք է հետևի խաղի կանոնների պահպանմանը:

Ներկայացնենք մի քանի դիդակտիկ խաղեր, որոնք կարող են անցկացվել առաջին դասարանում: Ուսուցիչը անհրաժեշտության դեպքում կարող է խաղի կանոնների և բովանդակության մեջ փոփոխություն մտցնել՝ հանդես բերելով ստեղծագործական մոտեցում:

Նախորդ կամ հաջորդ թիվը

Նպատակները: Ամրապնդել աշակերտների պատկերացումները նախորդ և հաջորդ թվերի մասին, կենտրոնացնել ուշադրությունը, ձևավորել արագ մտածելու կարողություն:

Անհրաժեշտ պարագաներ: Գնդակ

Ընթացքը: Աշակերտները շրջան են կազմում: Խաղավարը կանգնում է կենտրոնում, ասում է որևէ թիվ և գնդակը նետում աշակերտներից մեկին: Գնդակը բռնող աշակերտը պետք է ասի այդ թվի հաջորդ կամ նախորդ թիվը (ինչպես պահանջվում է) և գնդակը վերադարձնի խաղավարին: Այսպես խաղը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև մեկը ճանաչվում է հաղթող:

Ո՞ր պատկերն է պահված

Նպատակները: Ամրապնդել երկրաչափական պատկերների ճանաչումը, զարգացնել տեսողական հիշողությունը, դիտողականությունը:

Անհրաժեշտ պարագաներ: Երկրաչափական պատկերների հավաքածու,հավաքապաստառ կամ մագնիսական գրատախտակ:

Ընթացքը: Խաղավարը ցուցադրական հավաքապաստառին կամ մագնիսական գրատախտակին ամրացնում է տարբեր երկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն և առաջարկում 1-2 րոպե ուշադիր դիտել: Մի քանի աշակերտի դուրս է հրավիրում դասասենյակից և այդ ընթացքում պատկերներից մեկը թաքցնում: Աշակերտները վերադառնալով պետք է որոշեն, թե ո՞ր պատկերն է պահված: Շահում է ճիշտ պատասխանողը:



Ստեղծագործի՛ր ինքդ

Նպատակները: Ամրապնդել սովորած երկրաչափական պատկերների ճանաչո-

A.R.A.R.@

ղությունը, զարգացնել աշակերտների երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, գեղագիտական ճաշակը:
Անհրաժեշտ պարագաներ: Տարբեր չափի և գույնի երկրաչափական պատկերներ, ապլիկացիոն աշխատանքներ:
Ընթացքը: Խաղավարը ցույց է տալիս մի քանի ապլիկացիոն ախատանքներ, որոնք կազմված են տարբեր երկրաչափական պատկերներից: Աշակերտների միջոցով պարզաբանվում է, թե դրանցից յուրաքանչյուրը ին՞չ երկրաչափական պատկերներից է կազմված:

Աշակերտներին բաժանվում են տարբեր գույնի, չափի, քանակի երկրաչափական պատկերներ և պահանջում նրանցով ստանալ նոր պատկերներ՝ կենդանիներ, թռչուններ, ծնեմարդ, նավակ և այլն:

Ավարտված աշխատանքները ցուցադրվում են հավաքապաստառի վրա, քննարկվում, թե յուրաքանչյուր աշխատանքում ին՞չ երկրաչափական պատկերներ են օգտագործված, քանի՞ հատ, ի՞նչ գույնի և ի՞նչ չափի, որ ախատանքն է ավելի գեղեցիկ:



Կազմեցե՛ք գնացք

Նպատակը: Առարկաների խմբերի համեմատում:
Ընթացքը: Խաղավարն առաջարկում է կազմել երկու գնացք, տարբեր քանակի վագոններով և համեմատել, թե ո՞ր գնացքի վագոններն են շատ: Այդ նպատակով հրավիրվում է 7 երեխա որոնք կազմում են 7 վագոնից բաղկացած գնացք: Ապա 5 հոգի կազմում են 5 վագոնից բաղկացած գնացք: Խաղավարն առաջարկում է համեմատել երկու գնացքների վագոնները և ասել, թե ո՞րն է երկար, որը՝ կարճ: Ո՞ր գնացքի վագոններն են շատ և որքանո՞վ: Ո՞ր գնացքի վագոններն են քիչ, որքանո՞վ: Պահանջվում է հավասարեցնել վագոնների թիվը: Աշակերտները առաջարկում են բոլոր հնարավոր եղանակները: (Միացնել 2- րդ գնացքին 2 վագոն: Անջատել առաջին գնացքից 2 վագոն և միացնել 2-րդ գնացքին: Առաջին գնացքից անջատել մեկ վագոն և միացնել 2-րդին:)

Յուրաքանչյուր թիվ սիրում է իր տեղը

Նպատակները. Ամրապնդել ուղիղ և հետ հաշվելու հմտություններ, և զարգացնել արագաշարժությունը:
Անհրաժեշտ պարագաներ Թվաքարտեր, հավաքապաստառ:
Ընթացքը Խաղավարն առաջարկում է հավաքապաստառին տեղերում (սեղանների վրա) աճման կամ նվազման կարգով դասավորել 1-10 թվաքարտերը: Հաղթում է այն աշակերտը, ով ճիշտ և արագ է կատարում առաջադրանքը:

Այս և նմանատիպ խաղերը բազմապիսի են, և հնարավոր չէ ներկայացնել բոլորը: Խոսելով խաղերի դերի և նշանակության մասին՝ նպատակ չունենք դասն ամբողջությամբ խաղի վերածել, այլ օգտագործել դրանք որպես աշակերտների ուսուցումն առավել արդյունավետ կազմակերպելու խթանիչ միջոց:

Սոնա Սարգսյան
ԿԲԿ մասնագետ

digitised by

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ

Երեխայի զարգացման ընթացքում առանձնանում են մի քանի կարևոր շրջադարձային փուլեր, որոնք պայմանավորում են նրա փոխհարաբերությունների, սեփական գործունեության բովանդակությունը, ուղղվածությունը և անձի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Դրանց թվին է պատկանում անցումը նախադպրոցական տարիքից՝ դպրոցականի:

Թե ինչ չափով երեխայինկհաջողվի հաղթահարել անցման շրջանի դժվարությունները, տիրապետել նոր ուսումնական գործունեությանը, կախված է մի շարք գործոններից: Դրանցից կարևորագույնը հոգեբանական պատրաստությունն է դպրոցական ուսուցմանը: Դպրոցականի հոգեբանական պատրաստությունը մի ամբողջական գործընթաց է, որի անհրաժեշտ բաղադրիչ մասերն են՝ երեխայի վարքագծի դրդապատճառների համակարգը, մտավոր /ինտելեկտուալ/ կարողությունները և կամային որակները:

Դրդապատճառների համակարգի պահանջվող մակարդակն ապահովված է, երբ երեխայի մեջ ի հայտ են գալիս ինքնուրույնաբար նոր գիտելիքներ ձեռք բերելու, նոր տեսակի գործունեությանն անցնելու մղումներ ու ցանկություններ, ինչպես և սոցիալապես նոր, աշակերտին հատուկ դիրք գրավելու ձգտում: Այս ամենը ձևավորվում է այն դեպքում, երբ մեծահասակները մանկապարտեզում և ընտանիքում համապատասխանորեն երեխային նախապատրաստում են դպրոցական ուսուցմանը, որպես լուրջ ջանքեր պահանջող գործունեության, կարողանում են մատչելի ձևով հասցնել նրա գիտակցությանը՝ ուսման ու կրթության նշանակալիությունը:

Դպրոց հաճախելը երեխայի համար և՛ գրավիչ է, և՛ միաժամանակ բերում է մի շարք դժվարություններ: Գրավիչ են սեփականություն դարձող նոր գրենական պիտույքները, նոր գրքերը, տետրերը, պայուսակը, ինքնուրույն դիրքն՝ ավելի փոքրերի նկատմամբ: Իսկ դժվարություններն սկսվում են հենց առաջին օրից և կապված են նոր կանոնակարգին, նոր գործունեությանը հարմարվելու հետ: Դրանք ավելի են բարդանում, եթե երեխան հոգեբանորեն պատրաստ չէ դպրոցական ուսուցմանը:

Շատ կարևոր է նաև, թե նոր գործունեության ընթացքում ինչպիսի վերաբերմունք է ձևավորվում երեխայի մեջ՝ ուսուցչի, համադասարանցիների և իր անձի նկատմամբ: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ վերաբերմունքը և դրա հիման վրա ստեղծվող «աշակերտ-ուսուցիչ», «աշակերտ-աշակերտ» փոխհարաբերությունները դպրոցական ուսուցմանն անձնային պատրաստության հիմքերն են:

A.R.A.R.@

Առաջին դասարանի աշակերտի վերաբերմունքն ուսուցչի նկատմամբ հիմնականում խարսխվում է մեծահասակի մասին նախադպրոցական տարիքում ստեղծված պատկերացումներին: Մեծահասակը հանդես է գալիս որպես մեծ հեղինակություն, գիտելիքների և տեղեկատվության աղբյուր: Նրա դիտողությունները, ուղղումները, որպես կանոն, ընդունվում են: Երեխան աշխատում է հաշվի առնել դրանք և ուղղել իր սխալները: Նման դիրքորոշումը նպաստում է, որ առաջին դասարանցի երեխան անվերապահորեն ընդունի ուսուցչի հանձնարարությունները, պահանջները, մասնագիտական ներգործությունը և համեմատաբար հեշտ յուրացնի վարքի կանոնները:

Դաս - դասարանային համակարգը պահանջում է նաև հաղորդակցման որոշակի հմտություններ: Արդեն առաջին դասարանից երեխան պետք է կարողանա համագործակցել դասընկերների հետ, կատարել համատեղ աշխատանքներ, մասնակցել դասարանական կյանքին: Որոշ չափով երեխայի հարաբերությունները համադասարանցիների հետ պայմանավորված են լինում նրա և ուսուցչի միջև ստեղծված փոխհարաբերությունների ոճով, հուզական երանգով: Եթե ձևավորվում է «ոչ-իրադրային» հաղորդակցում /պայմանավորված չէ միայն տվյալ պահի իրադրությամբ, հարաբերություններով/, ապա 7 տարեկան երեխան հեշտությամբ է հարմարվում բոլոր պահանջներին և կարողանում է համադասարանցիների հետ ստեղծել ընկերական դրական հարաբերություններ: Բարյացակամ հարաբերություններն օգնում են երեխային՝ ավելի հեշտ հարմարվելու դպրոցական կյանքի դժվարություններին: Դրանք նպաստում են նաև աշակերտի ներքին դիրքորոշման ձևավորմանը: Իսկ դիրքորոշումը ձևավորված կարելի է համարել, այն դեպքում, երբ երեխան գիտակցում է ուսման նշանակությունը, ընդունում մեծահասակների պահանջները՝ կապված իր պարտականությունների և անելիքների հետ:

Ինչպես նշվեց, անձնային պատրաստությունը բնորոշվում է նաև աշակերտի նկատմամբ ձևավորվող վերաբերմունքով: Այստեղ նույնպես օգնության պետք է գան մեծահասակները՝ ծնողները, ուսուցիչը, որպեսզի երեխան կարողանա համարժեքորեն գնահատել իր կարողությունները, հնարավորությունները, ձեռք բերած գիտելիքները: Դրանց և գերագնահատումը, և թերագնահատումը հավասարաչափ վնասակար են աշակերտների ուսումնական գործունեության համար: Գերագնահատման դեպքում երեխան դժվարությամբ է հարմարվում ցածր գնահատումներին, իրեն թվում է, որ ուսուցիչը կամ դասընկերները արդարացի չեն իր նկատմամբ և ըստ արժանվույն չեն գնահատում իր գիտելիքները, կարողությունները: Նման դիրքորոշումը կարող է հանգեցնել համադասարանցիների և ուսուցչի հետ բախումների: Որպես հետևանք կարող են առաջանալ ուսուցման, դպրոցի նկատմամբ մերժողական վերաբերմունք, դպրոց այլևս չհաճախելու ցանկություն: Սեփական հնարավորությունների ու ընդունակությունների թերագնահատումը կարող է առաջացնել անհանգստություն, մյուսներից վատը լինելու վախ, լարվածություն, կաշկանդվածություն, անվստահություն: Եվ դրանից զգալիորեն տուժում է ուսումնական առաջադիմությունը: Մեծահասակների խնդիրն է՝ բացատրել երեխային իր գործունեության դրական կողմերը և թերությունները, միասին հաղթահարել առաջացած դժվարությունները, օգնել երեխային՝ հաստատվելու դպրոցականի դիրքում և յուրացնելու նոր գիտելիքներ:

digitised by

Անձնային պատրաստությունը ենթադրում է նաև կամային որակների ձևավորում, հետևողականություն, որոնցով երեխան առաջնորդվում է ներկայացվող պահանջները կատարելիս և դրսևորում դպրոցական կարգապահությանը ենթարկվելու վարքագիծ:

Հոգեբանների մի մասն այն կարծիքին է, որ կամային պատրաստության թերի լինելն ամենավնասակարն է ուսումնական գործունեության մեջ հաջողության հասնելու համար: Խորհրդային հոգեբան Դ.Բ.Էլկոնինը նշել է, որ կամային պատրաստության պահանջվող մակարդակի առկայությունն է ապահովում առաջադիմություն: Ասել է, թե՝ երեխան ունակ է ընդունել ուսումնական առաջադրանքը, վերարտադրել տրվող ուսումնական նմուշները, գործել ուսուցչի հրահանգով, ենթարկվել կանոններին, ղեկավարել իր վարքը: Ըստ առաջադիմության՝ անձնային պատրաստությունն արտահայտվում է երեխայի այնպիսի ներքին դիրքորոշման ձևավորմամբ, որի շնորհիվ մուտք գործելով դպրոց՝ նա արդեն գիտակցում է ուսման անհրաժեշտությունը, կարևորությունը, ընդունում է դպրոցական կյանքի օրենքներն ու, կանոնները:

Մտավոր /ինտելեկտուալ/ պատրաստությունը կապված է մտավոր գործընթացների՝ վերլուծելու, համեմատելու, համադրելու, դասակարգելու ունակությունների զարգացման հետ: Մտավոր զարգացումը պետք է արտահայտվի ոչ թե յուրացրած գիտելիքների քանակով, այլ երևույթների, իրադարձությունների մեջ էականը, գլխավորը հասկանալու և զատելու, առարկաների մեջ նմանությունների և տարբերությունների բացահայտման կարողությամբ: Երեխայի մեջ պետք է զարգանան դատելու, պատճառներն ու հետևանքները որոշելու, եզրակացությունների հանգելու հմտություններ: Մտավոր գործունեությունը հենվում է երեխայի կամածին հիշողության և ուշադրության վրա: Ուստի դպրոցական ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններ են իմացական հետաքրքրությունների, ակտիվության ձևավորումն ու զարգացումը: Նորը ճանաչելու, անհայտը որոնելու ձգտումը մեծ դեր է խաղում ուսումնական գործունեության բարենպաստ զարգացման համար:

Ինչո՞վ է վտանգավոր դպրոցական պատրաստության ցածր մակարդակը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն ուղղակիորեն անդրադառնում է երեխայի հոգեկան առողջության վրա: Ուսումնական նյութի յուրացումը դժվարանում է նախորդ գիտելիքների ցածր մակարդակի պատճառով: Սա իր հերթին ազդում է երեխայի ինքնազգացողության վրա, առաջացնում լարվածություն, կաշկանդվածություն, անհանգստություն, տագնապ: Հաճախ ուսման անհաջողություններն ուղեկցվում են ախորժակի անկմամբ, անհանգիստ քնով, երբեմն էլ արտահայտվում են նյարդային վարքով /անտեղի լաց, գերգրգռվածություն, տրամադրության խիստ անկում, տատանումներ/: Որոշ երեխաներ վախենում են պատասխանել գրատախտակի մոտ, ուսուցչի և դասընկերների աչքերում անկարող երևալ, գնահատական ստանալ: Եվ, որպես հետևանք, ներքին լարվածությունը և տագնապը խոչընդոտում են նոր նյութի յուրացմանը, թույլ չեն տալիս երեխային ազատ գործել: Իսկ մեծահասակների մշտական դիտողությունները, բարձր պահանջները ստեղծում են սեփական հնարավորությունների թերագնահատման հիմքեր:

Վերջապես դպրոցական պատրաստության անբավարար մակարդակը կարող է հանգեցնել դպրոցական ապահարմարողականությանը: Այն արտահայտվում է դպրոցական պահանջների

A.R.A.R.@

յուրացման և կատարման դժվարություններով, ցածր առաջադիմությամբ, ծայրահեղ անկարգապահությամբ, դասընկերների հետ անհաշտությամբ: Կարող է առաջանալ այսպես կոչված «ուսումնական աբուլիա», երբ յուրաքանչյուր գործողություն կատարվում է մեծահասակի դրդմամբ, այլ ոչ թե աշակերտի ցանկությամբ: Դրսևորվում են նախաձեռնության բացակայություն, բացարձակ անտարբերություն՝ ուսումնական գործունեության և դպրոցի նկարմամբ: Դպրոցական ապահարմարվողականության խորացումը, ինչպես վկայում են հոգեբանների և բժիշկների ուսումնասիրությունները, կարող է հանգեցնել «դպրոցական նևրոզների» /դիդակտոսկալոգենիա/:

Երեխայի անցումը նախադպրոցականից դպրոցական կյանքին հատուկ ուշադրություն է պահանջում մեծահասակներից: Այն տեղի է ունենում աստիճանաբար, փոփոխական հաջողություններով: Պետք չէ արհեստականորեն արագացնել այդ գործընթացը: Կարևոր դեր է խաղում նաև հոգեբանական կանխարգելումը, որը կարող է որոշ չափով իրագործել և ուսուցիչը: Անհրաժեշտ է ժամանակին գնահատել և ախտորոշել երեխայի գիտելիքները, անձնային պատրաստությունը՝ դպրոցական ուսուցմանն, աշակերտի սոցիալապես պատրաստ լինելը: Դրանք մեծապես կնպաստեն հետագա կրթադաստիարակչական աշխատանքների բարենպաստ կազմակերպմանը:

Անահիտ Սարգսյան
ԵՊՀ-ի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու

ՄԵՋ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Հարց. *Ինչո՞վ է պայմանավորված երկու տարբեր Այբբենարանների գործածությունը: Ավելի հարմար չէ՞ ունենալ մեկը, միասնականը: Այն ուսուցիչներին հնարավորություն կընձեռի ավելի գործուն հաղորդակցման մեջ լինել միմյանց հետ և կազմակերպել փորձի փոխանակման դասեր:*

Պատասխան. Բազմիցս արծարծված հարց է: Իրոք, արհեստական խոչընդոտ է ստեղծվում ուսուցիչների գործունեության մեջ՝ կարծիքներ փոխանակելու և միևնույն դասագրքով առավել երկարատև աշխատելու հարցում: Դասագրքերը պետք է հնարավորություն տան ուսուցչին պատասխանելու ամենակարևոր հարցին՝ ո՞ր դասագիրքն է առավել նպաստում գրաճանաչությանը և կարդալու կարողության ձևավորմանը:

Ակնկալում ենք ձեզնից լսել հարցի պատասխանը:

digitised by

Երեխայի ձախլիկությունը գրաուսուցման ընթացքում և դրա հետ կապված դժվարությունները

Այսօր ուսուցչի առանձնահատուկ ուշադրության կարիքն ունեն ձախլիկ երեխաները: Նրանցից շատերը գրաուսուցման ընթացքում հանդիպում են մի շարք դժվարությունների:

Առաջին՝ ամենագլխավոր խնդիրը, որ պետք է լուծի ուսուցիչը, պարզելն է, թե, արդյո՞ք, երեխան ձախլիկ է: Հետո արդեն անհրաժեշտ է ծնողների հետ որոշել, թե որ ձեռքով պետք է գրի սկսնակ դպրոցականը, և ըստ այդմ էլ մշակել միասնական գործելակերպ: Այս խնդիրն այնքան էլ հեշտ չէ, որքան թվում է առաջին հայացքից: ԵՎ հարցի նկատմամբ մոտեցումներն էլ ուսուցչի ու ծնողների կողմից միանշանակ չեն:

Դեռ ոչ վաղ անցյալում մանկավարժական գրականության մեջ՝ գրելիս ձեռքի ընտրության մասին հարց չէր էլ ծագում: Բոլորից պահանջվում էր գրել աջ ձեռքով: Իսկ դա նշանակում էր՝ ձախլիկ երեխաներին պարզապես վերափոխել: Եվ օգտագործվում էին ամենադաժան միջոցները՝ հաշվի չնստելով փոքրիկ անհատի առանձնահատկությունների, հնարավորությունների և նույնիսկ առողջության հետ:

Բանն այն է, որ յուրաքանչյուր ձեռքի գործողություն ղեկավարվում է հակադիր՝ աջլիկների մոտ գլխավորապես ձախ, իսկ ձախլիկների մոտ, հակառակը՝ աջ կիսագնդի կողմից:
Մարդկանց մոտ 90 տոկոսը աջլիկ է: Համարյա 10 տոկոս էլ կա՛մ ձախլիկ է, կա՛մ միաժամանակ «գործուն» են երկու ձեռքերն էլ: Աջլիկների և ձախլիկների ուղեղների ղեկավարման մեխանիզմները տարբեր են: Եվ երեխաներին վերափոխելով ձախ ձեռքից աջը՝ մենք խարխլում ենք նրանց գործունեության բնականոն ընթացքը և ստիպում կատարել այն, ինչը հակադրվում է նրա ֆունկցիոնալ հնարավորություններին: Վերափոխելով երեխայի առաջատար ձեռքը՝ մենք անխուսափելիորեն ուղեղի գործունեության վերակառուցում ենք սկսում: Ահա ինչու այդքան բարդ է ընթանում այդ գործընթացը: Ահա ինչու է կարևոր, որ ուսուցիչը կարողանա որոշել երեխայի առաջատար ձեռքը, ինչպես նաև վերակառուցման նպատակահարմարությունը: Չպետք է անտեսել վտանգի առկայությունը երեխայի բնականոն զարգացման և առողջության համար:

Ձախ ձեռքի առաջատարության հարցում դեր ունի «ժառանգական ձախլիկության» գործոնը: Կան ընտանիքներ, ուր ձախլիկությունն առկա է ծնողների, եղբայրների, քույրերի, պապիկ - տատիկների մոտ:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մտավոր հետամնաց երեխաների մեջ մեծ թիվ են կազմում ձախլիկները: Այս դեպքում ձախլիկությունը կարող է լինել հիվանդության արդյունք (ինչպես և՛ մտավոր հետամնացությունը, և՛ ուսուցման տարբեր դժվարությունները), այսինքն ոչ այդ շեղումների պատճառը: Ֆիզիոլոգների պնդմամբ: Ձախլիկները կարող են դրսևո-

A.R.A.R.@

րել փայլուն ընդունակություններ (օրինակ, Նապոլեոնը, Լեոնարդո դա Վինչին):

Ձախլիկ երեխաների հետ աշխատելիս պետք է հաշվի առնվեն նրանց անհատական առանձնահատկությունները: Նույնիսկ ուսուցման ընդհանուր մեթոդիկան պետք է կառուցվի այլ կերպ: Չպետք է անտեսել երեխայի սեռը, քանի որ էական տարբերություն է նկատվում աղջիկների և տղաների մտավոր զարգացման մեջ: Աղջիկներն սկսում են խոսել ու կարդալ տղաներից ավելի վաղ, և հազվադեպ են կարդալիս դժվարությունների հանդիպում: Ընթերցմանն անընդունակ երեխաների մեջ տղաները չորս անգամ շատ են, քան աղջիկները» [1]:

Իսկ կարո՞ղ է, արդյոք, ուսուցիչն ինքը որոշել երեխայի առաջատար ձեռքը: Մենք գտնում ենք, որ ոչ միայն կարող է, այլև պարտավոր է այդ անել:

Գոյություն ունեն առաջատար ձեռքի որոշման մի քանի եղանակներ: Դրանցից մեկը հարցումն է, երկրորդը՝ երեխաների կենցաղային և գրաֆիկական գործունեության ընթացքում փորձարարական թեստի օգտագործումը: Թեստի առաջադրանքների կատարման ժամանակ ուսուցիչը պետք է նստի երեխայի դիմաց (գերադասելի է սեղանի շուրջ), բայց ոչ կողքին: Պետք է լինի բնական, հանգիստ, բարենպաստ իրավիճակ: Հարկավոր չէ երեխայի ուշադրությունը կենտրոնացնել ձեռքի վրա:

1-ին առաջադրանք: Նկարչություն:
Երեխայի առջև դրեք մի թերթ թուղթ և մատիտ, առաջարկեք նրան՝ նկարել այն, ինչ ինքը կցանկանա (կամ էլ կարող է): Մի շտապեցրեք: Ավարտելուց հետո խնդրեք նրան նկարել նույնը՝ մյուս ձեռքով: Համեմատեցեք: Այս առաջադրանքը կատարելիս պետք է հաշվի առնել ոչ միայն, աջ կամ ձախ ձեռքով աշխատելու հանգամանքը, այլև աշխատանքի որակը:

2-րդ առաջադրանք: խաղ գնդակով:
Հարկավոր է ոչ մեծ գնդակ, որը հնարավոր լինի գցել և բռնել մեկ ձեռքով: Գնդակը դրվում է սեղանին, ուղիղ երեխայի առջև: Նրան խնդրվում է որքան հնարավոր է մի քանի անգամ դիպուկ գցել գնդակը որևէ, նախապես որոշված նշանակետի ուղղությամբ:

3-րդ առաջադրանք: Նկարի եզրակտրում:
Մկրատով կտրել ծաղիկ, մեքենա և այլն: Առաջատար ձեռքն այն է, որով նա բռնում է մկրատը: Բայց լինում է այնպես, որ երեխան վատ է տիրապետում մկրատով աշխատելու կարողություններին: Այդ դեպքում նա պարզապես այն բռնում է, իսկ առավել գործուն աշխատում է մյուս ձեռքով (շուռումուռ է տալիս թուղթը): Այս դեպքում փորձեք նրան համոզել՝ մկրատը վերցնելու մյուս ձեռքով: Գնահատեք, թե որ ձեռքով է լավ կատարում առաջադրանքը:

Նմանատիպ առաջադրանքների միջոցով կարելի է պարզել երեխայի ձախլիկ լինելը:

Ձախլիկ երեխաների հարկադրական վերաուսուցումը նախադպրոցական տարիքում և հատկապես դպրոցում սովորելու ընթացքում (գրել, նկարել, կենցաղային գործողություններ կատարել) կարող է պատճառ դառնալ հոգեկան հիվանդությունների: Խստիվ արգելվում է „կրկնակի" վերաուսուցումը առաջին դասարանի առաջին կիսամյակից հետո:

Խորհուրդ չի տրվում ձախ ձեռքով աշխատող երեխաներից պահանջել այնպիսի թեքություն, ինչպիսին պահանջվում է աջ ձեռքով գրելիս: Լավ կլինի, եթե ձախլիկների տետրը թեքված լինի դեպի աջ, իսկ ձախ ուսը՝ մի փոքր առաջ, ի

[1] Ф. Блум, А. Лейзерсон, Л. Харстедтер „Мозг, разум и поведение", глава „Половые различия и различия между полушариями мозга", стр. 190; М.: Мир, 1988, 246 с.

digitised by

տարբերություն աջլիկների, որոնց մոտ առաջ է թեքված աջ ուսը:

Ավելի նպատակահարմար է, որ ձախլիկ երեխան աջակողմյան թեքության դեպքում գրի ուղիղ՝ չծածկելով տողը և գրության ժամանակ չհետևի ճիշտ թեքությանը: Տետրի դիրքը պետք է ինքը որոշի: Ձախլիկ երեխաների գրուսուցման դժվարություններից են հայելային գրությունը, անընթեռնելի ձեռագիրը դանդաղ և անջատ գրությունը: Բոլոր դեպքերում պետք է ներողամիտ լինել ձախլիկների առավել ևս՝ վերափոխված ձեռքով գրողների հանդեպ:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն ձախլիկ երեխաների վրա, որոնք գրիչը կամ մատիտը պահում են տողի վրա: Այս դեպքում ձեռքը գտնվում է փոխակերպված դիրքում և թեքված է կեռի պես:

Գոյություն ունեն ևս մի շարք պահանջներ, որոնք պետք է հաշվի առնել տանը և դպրոցում ձախլիկ երեխայի գրուսուցման կազմակերպման ժամանակ: Նախ՝ գրելու, նկարելու, ընթերցելու ընթացքում լույսը պետք է ընկնի աջ կողմից: Դասարանում նստարանների, գրատախտակի դիրքը հնարավորություն չեն տալիս ձախլիկ երեխային նստեցնել դեմքով դեպի դասարանը: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է ձախլիկ երեխային նստեցնել լուսամոտի մոտ: Այնտեղ ավելի լավ է լուսավորությունը, և նա չի խանգարի իր հարևան աջլիկ երեխային:

Երեխայի ձախլիկությունը ուսուցչի և ծնողների կողմից պետք է դիտվի ոչ թե որպես արատ, այլ որպես անհատական առանձնահատկություն: Բոլոր միջոցները պետք է ձեռնարկել՝ ուսուցման բնականոն և բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

Զ. Գյուլամիրյան
Ա. Բալայան

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Հարց. *Հայտնի, որ տարրական դասարանների հայոց լեզվի դասագրքերն սպառել են իրենց գործածության ժամկետը (ըստ Համաշխարհային բանկի վարկային ծրագրի). Նոր ուսումնական տարում հայոց լեզվից ի՞նչ դասագրքեր կդրվեն գործածության մեջ: Արդյո՞ք հնարավոր չէ նախկինների գործածության ժամկետը երկարաձգել:*

Պատասխան. Եկող ուսումնական տարվա համար հրատարակության են պատրաստվում գործող դասագրքերի բարեփոխված տարբերակները: Դասագրքերի հեղինակները հանդիպումներ են ունեցել ուսուցչության հետ, լսել նրանց առաջարկությունները և դրանք հաշվի առնել դասագրքերի լրամշակման աշխատանքներում:

Առաջիկա ուսումնական տարվա համար նախատեսվում են հրատարակել նաև հայոց լեզվի դասագրքերի ուղեցույցներ և աշխատանքային տետրեր:

A.R.A.R.@

Տարրական դասարանների ուսուցչին ինչու՞ է անհրաժեշտ գրականության տեսության իմացությունը

Երկար ժամանակ կրտսեր դպրոցի շրջանակներից դուրս էր մնում համակարգված գրականագիտական կրթությունը: Այն նախատեսվում էր միայն միջին դպրոցում: Այժմ տարրական դասարանների ընթերցանության բազմաթիվ ծրագրերում գրականագիտական տեղեկատվությունը կրտսեր դպրոցականի ձևավորվող գիտելիքների պաշարի անբաժանելի մասն է կազմում: Այդ մասին կարելի է դատել՝ հենվելով ծրագրերի հեղինակների կողմից առաջ քաշված նպատակների վրա.

ա/ Երեխային տանել գեղարվեստական գրականության աշխարհը և օգնել նրան՝ իմաստավորելու խոսքի արվեստի առանձնահատկությունները. / Վ.Գ.Գորեցկի, Լ. Ֆ. Կլիմանովա/,

բ/ Սովորեցնել հաղորդակցվելու արվեստը (Վ.Ա. Լևին),

գ/ Գրականությունը ներկայացնել որպես արվեստի տեսակ՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները (Լ.Ե. Ստրելցովա, Ն.Դ. Տամարչենկո),

դ/ Ձևավորել գեղագիտորեն զարգացած ընթերցող (Գ.Ն.Կուդինա, Զ.Ն. Նովլյանսկայա),

ե/ Պատրաստել-ձևավորել որակյալ ընթերցող (Օ.Վ. Ջեծելեյ),

զ/ Սովորեցնել գեղարվեստական գրականության ընթերցում և դնել գրագետ ընթերցողի ձևավորման հիմքը (Ռ.Ն. Բունեև, Ե.Վ. Բունեևա):

Ինքնուրույն ընթերցանության հմտությունների ձևավորումը պետք է լինի առաջնահերթ նպատակ: Առանց այդ նպատակների իրագործման անհնարին է խոսել գեղարվեստական գրականության յուրացման մասին: Այդ նպատակով հարկ է անդրադառնալ ընթերցանության ուսուցման ժամանակակից երկու ուղղությունների: Դրանք են՝

ա/ Ընթերցողի ձևավորման իրականացում,

բ/ Գրականության, որպես արվեստի յուրահատուկ տեսակի հետ, կրտսեր դպրոցականի հաղորդակցման կազմակերպում:

Դպրոցական գործնական աշխատանքում վերոհիշյալ երկու ուղղությունները չեն կարող տարանջատված լինել: Ուսուցիչների մասնագիտական պատրաստման գործում այդ խնդիրների համակցումը ոչ միայն հնարավոր է, այլև՝ անհրաժեշտ: Առանձնահատուկ, նպատակային ծրագրով պատրաստված ուսուցիչը, որը գիտակցում է վերոհիշյալ խնդիրներից յուրաքանչյուրի առանձնահատկությունը, ունակ է ուսուցման գործընթացում իրականացնել դրանց համադրումը:

Երեխային դեպի գեղարվեստական աշխարհի բացահայտումն ու ճանաչումն առաջնորդող ուսուցիչը պետք է տիրապետի գրականագիտական-տեսական բարձր մակարդակի գիտելիքների: Այդ ամենը նա պետք է նախ և առաջ ձեռք բերած լինի բուհում: Վերոհիշյալ նպատակի իրականացմանն է միտված կրտսեր դպրոցի ուսուցիչների պատրաստման հատուկ դասընթացը: Այն կապահովի գրականության տեսության հարցերի ուսումնասիրությունը, ուսանողների ընթերցողական գործունեությունը,

digitised by

ինչպես նաև՝ նրանց պատրաստումը՝ կրտսեր դպրոցականների գրական կըրթության կազմակերպման նպատակով: «Գործնական գրականագիտության» նմանօրինակ դասընթացը պետք է նախորդի ընթերցանության մեթոդիկային և, որպես առաջին՝ տարրական աստիճան, առնչվի ուսուցման երկրորդ՝ հիմնական աստիճանին: Ընթերցանության ժամանակակից ուսուցման համար ուսուցիչների երկաստիճան պատրաստման գլխավոր նպատակն է՝ ձևավորել ընթերցող և ո՛չ գրականագիտության հիմունքներին տիրապետող անհատ: Վերոհիշյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ է, որ ուսուցչի գիտակցության մեջ տարանջատված լինեն օբյեկտիվ (ոչ անհատական, գիտնականների գրականագիտական ուսումնասիրությունների արդյունք հանդիսացող) և այն սուբյեկտիվ (անհատական, ընթերցողական) գիտելիքները, որոնք ցանկացած ընթերցողի մեջ ձևավորվում են ստեղծագործության ընթերցումից հետո: Այնուհետև՝ ուսուցիչն ընթերցողական գործունեության ընթացքում պետք է կարողանա օգտվել գրականագիտական գիտելիքներից, որոնք գնահատելի են որպես ստեղծագործության խորքը թափանցելու, նրա ենթատեքստը բացահայտելու միջոցներ: Հարկավոր է այդ ամենն ուսուցանել կրտսեր դպրոցականին:

Հարկ է ընդգծել, որ ուսուցչի ամենագնահատելի մասնագիտական կարողություններն են՝ երեխաների մեջ ընթերցանության առաջին տպավորությունների խորացումն ու ստեղծագործության վերաբերյալ նրանց անձնական գիտելիքների ընդլայնումը: Վերոհիշյալ խնդիրները հնարավոր է իրականացնել ոչ այնքան գրականագիտական օբյեկտիվ գիտելիքներ մատուցելով, որքան սեփական գրականագիտական գիտելիքներն իբրև գեղարվեստական ստեղծագործության ընկալմանը նպաստող միջոցներ գործածելով:

Օրինակով պարզաբանենք, թե ինչպես է կարելի կոնկրետ բնագրի ընթերցանության ընթացքում տվյալ տեսական խնդիրն երեխաների հետ իրականացնել գործնական հաղորդակցման ժամանակ: Մ.Բ.Գոլովանովայի, Վ.Գ.Գորեցկու և Լ.Ֆ. Կլիմանովայի հեղինակած մայրենի լեզվի ուսումնական ձեռնարկը որպես ուսումնական նյութ առաջադրում է Վ.Գարշինայի «Հեքիաթ դոդոշի և վարդի մասին» ստեղծագործությունը: Ստեղծագործության գաղափարի ընկալման համար կարևոր է հաշվի առնել բնագրի տարածության և ժամանակի գեղարվեստական գործոնները: Հենց այս մոտեցումն էլ կնպաստի գործընթացի ճիշտ կազմակերպմանը: Նշված բնագիրը բաժանված է տրամաբանորեն ավարտուն հատվածների: Այս հանգամանքն էլ հնարավորություն է ընձեռում ստեղծագործությունը բաժանելու հատվածների՝ հենվելով ժամանակի և տարածության գեղարվեստական կատեգորիաների վրա:

Երեխաներին տրվում է առաջադրանք՝ առանձնացնել բնագրի այն հատվածը կամ հատվածները, որոնք պատմում են անցյալ տարվա դեպքերի մասին: Այնուհետև բնագիրը բաժանել հատվածների՝ ըստ տարածության գործոնի: Այստեղ արդեն շրջվում է գործողությունների ընթացքը:

Արդյունքում ստացվում է հետևյալ պատկերը.

I մաս՝ ընթացիկ տարի, ծաղկանոց.
II մաս՝ անցյալ տարի, ծաղկանոց.
III մաս՝ ընթացիկ տարի, տուն.
IV մաս՝ ընթացիկ տարի, ծաղկանոց.
V մաս՝ ընթացիկ տարի, տուն.
VI մաս՝ վերջաբան:

Հարկ է նկատել, որ բնագրի այս բաժանումը կատարված է ոչ թե ըստ իմաստի,

A.R.A.R.@

այլ՝ ըստ ձևի: Կրտսեր դպրոցականների համար, ինչ խոսք, դժվար է միանգամից ընկալել բնագրի փիլիսոփայական իմաստը: Ուստի նպատակահարմար է դրա բացահայտումն սկսել ստեղծագործության կառուցվածքից: Եվ որպես կարևորագույն չափանիշներ պետք է դիտել ժամանակը և տարածությունը: Բնագիրն ուսումնասիրելիս վերոհիշյալ մոտեցումը կնպաստի ստեղծագործության գաղափարի իմաստավորմանն ու ենթատեքստի բացահայտմանը: Բանն այն է, որ հարաբերականորեն ավարտուն և առանձնացված հատվածներից յուրաքանչյուրը իր մեջ կրում է իմաստային որոշակի բեռնվածություն: Ստեղծագործության տարածական լեզուն ծայրաստիճան սեղմ է, և հենց դա էլ նպաստում է հեքիաթի հիմնական մտքի՝ կյանքի և մահվան փոխհարաբերության բարոյական խնդրի ընկալմանը: Բնագրում գործողություններն ընթանում են տարածության մեջ, այն է՝ բնության (ծաղկանոց, ուր շրջվում է կյանքի ընթացքը) և կենցաղի (տուն, ուր այցելում է մահը) սահմաններում: Ըստ գեղարվեստի աշխարհի օրենքների՝ բնության մեջ տարածությունը սահմանափակ չէ, այլ բաց, արձակ ու շարժումով առլեցուն: Բնագրային ծաղկանոցում տեղի են ունենում արվեստին առնչվող միջադեպեր: Ծաղկանոցի սահմանները շարժվում են և՛ դեպի վեր, և՛ դեպի ներքև, և՛ լայնությամբ, և՛ խորքով: Սա կարելի է երեխաներին ցույց տալ հետևյալ առաջադրանքի հանձնարարմամբ:

1. Դուրս գրել այն գոյականները, որոնք վերաբերում են ծաղկանոցի երկու բնակիչներին՝ վարդին և դոդոշին. (դոդոշ՝ թուփի արմատներ, հող, փորոտիք, գիշեր):
Եթե ծաղկանոցի ամբողջ տարածությունը պայմանականորեն բաժանենք վերին և ստորին աշխարհների, ապա դրանցից ո՞րը կպատկանի վարդին, ո՞րը՝ դոդոշին՝ և ինչու՞:
2. Դուրս գրել այն ածականները, որոնք բնութագրում են վարդին, նրա աշխարհը, և դոդոշին, նրա աշխարհը: Այսպես, վարդ՝ լավագույն, մայիսյան, առավոտյան, մաքուր, թափանցիկ, հրաշալի, երկնագույն, վարդագույն, նուրբ, թարմ:
Դոդոշ՝ ճարպոտ, պառավ, հին, խոնավ, ավելի նեղ, ավելի խոնավ, աղտոտ-գորշ, մորուքավոր, կպչուն, գարշելի:
Ընտրել վարդի և դոդոշի կենսական տարածությունը բնութագրող ածականները (լուսավոր, մռայլ, մուգ, անվերջանալի, թափանցիկ, նեղ...):
3. Ո՞վ է ծաղկանոցի հիմնական բնակիչը, տերը:
Գտնել տղային բնութագրող բառերը (փոքրիկ, յոթ տարեկան, մեծ աչքերով, մեծ գլխով, նիհար մարմին, հնազանդ, թույլ, լուռ...):
Ի՞նչ զգացումներ է արթնացնում տղան ընթերցողի մեջ: Ինչու՞: (Ընթերցողը կարեկցում է տղային, քանզի հասկանում է, որ նա հիվանդ է):
4. Տղան ում և ինչի՞ մասին էր կարդացել գրքերում: (Ռոբինզոնի, վայրի կենդանիների, ծովահենների մասին): Ինչու՞ էր տղան սիրում կարդալ այդ մասին: (Գրքերը տղայի աչքերի առջև բացում էին մեծ, անընդգրկելի, անծանոթ աշխարհը: Նա երազում էր հեռավոր երկրների և ճամփորդությունների մասին: Գրքերն ընդլայնում էին այն աշխարհի սահմանները, որում նա ապրում էր):
5. Ի՞նչ հետաքրքիր բան նկատեց տղան ծաղկանոցում (մանրամասնորեն նկարագրել):
Ընթերցողը տղայի մասին ի՞նչ նոր բան կիմանա՝ ծանոթանալով նրան վերաբերող հատվածներին. (Տղան տեսնում, նկատում էր այն, ինչ աննկատելի էր անուշադիր, անտարբեր հայացքի համար: Նա տեղաշարժում է ծաղկանոցի

digitised by

տարածության սահմանները դեպի խորք):

Կատարելով նմանօրինակ առաջադրանքներ՝ երեխաները աստիճանաբար զգում են ծաղկանոցի կենսական ուժը, նրա անպարփակությունը: Բնագրում կենցաղի, տան շրջանակներն աստիճանաբար նեղանում են: Այսպես.

III մաս՝ տուն → անկողին,

IV մաս՝ անկողին → դագաղ:

Նշված շրջանակները տեղաշարժվում են միայն վարդի հայտնվելու պարագայում: Եվ դա պատահական չէ: Վարդը կյանքի, լույսի, բարու խորհրդանիշն է: Վարդի հայտնությունը, ներհյուսվելով մահվան թեմային, տղայի կյանքից հեռանալը դարձնում է ոչ այնքան ողբերգական, որքան լուսավոր ու հանգիստ մի իրողություն:

Ընդհանրապես գեղարվեստական ստեղծագործության կառուցվածքի ընկալման համար կարևոր է հետևել առանցքային դրդապատճառների փոխկապակցվածության ընթացքին: Դրանք մի քանիսն են և սերտորեն առնչվում են միմյանց ու հիմնական գաղափարին: Վարդի ենթաթեմային առնչվում է դոդոշի ենթաթեման: Վերջինս նեղ աշխարհի, մութի և մահվան խորհրդանիշն է: Բնագրի երկրորդ մասում գլխավորը տղայի գոյությունն է: Այստեղ միահյուսվում են հիվանդության, հեռավոր երկրների, մեծ, անվաճ աշխարհի, կենդանի բնության, փոքրիկ տղայի և շրջակա աշխարհի ներդաշնակության գաղափարները: Երեխաների ուշադրությունը պետք է կենտրոնացնել հատկապես վերջին ենթաթեմայի վրա:

6. Ի՞նչ զգացում ունեցավ տղան, երբ հանդիպեց ոգնուն: Գտնել այն բառերը, որոնք ցույց են տալիս տղայի վիճակը հանդիպման պահին (ուշադրություն, քիչ էր մնում՝ գոռար, ձեռքերը չշարժեց, շունչը կտրվեց, երջանիկ աչքեր, ուրախությամբ նայում էր, զգուշությամբ դիպավ...):

Ըստ քեզ՝ ընթերցողն ինչպիսի՞ն կպատկերացնի տղային:

Տղային հանդիպելիս ինչպե՞ս էր պահում իրեն ոգնին: Ոգնին չվախեցավ տղայից, աստիճանաբար ընտելացավ նրան, որովհետև տղան չէր առանձնանում իր շրջակա աշխարհից: Նա այդ աշխարհի անբաժան մի մասնիկն էր և հարգում, պահպանում էր բնության մեջ կյանքի կանոններն ու օրենքները: Տղայի հիվանդության ենթաթեման առնչվում է ծաղկանոցն անխնամ թողնելու գաղափարին: Ներքոհիշյալ առաջադրանքը կօգնի հայտնաբերել այս առնչությունը:

7. Գտի՛ր, թե առաջին հատվածում ի՞նչ բայերով է բնութագրվում ծաղկանոցը (մերկանալ, չորացավ, փլվեց, քանդվեց, չի մաքրել, չի ցանել...): Այս բառերով նկարագրվում է ծաղկանոցում տեղի ունեցած ակնհայտ ավերածությունը: Սակայն գոյություն ունի նաև ծաղկանոցի՝ կողմնակի, անուշադիր աչքի համար աննկատ մի կյանք ևս: Ինչպե՞ս է հեղինակը նկատում այն: Ծաղկանոցում կյանքը շարունակվում է: Ավերվում է ծաղկանոցի միայն արտաքին տեսքը, մինչդեռ նրա ներքին կյանքը, ներքին աշխարհը բնավ չեն խաթարվել: Այդ աշխարհի ամենագեղեցիկ ու զարմանալի բնակիչը վարդն է: Ընթերցողն զգում է, որ ծաղկանոցի արտաքին աշխարհից այն կողմ թաքնվում է գլխավորը՝ նրա ներքին կյանքը, որը պետք է կարողանալ տեսնել: Տղայի կյանքի արտաքին կողմն արտացոլված է նրա հիվանդության ենթաթեմայի շրջանակներում: Երեխաներին կարելի է առաջարկել, որ նրանք գտնելու բնագրի հենակետային բառերը:

Հետևելով ծաղկանոցի ավերման և տղայի հիվանդության մոտիվների զուգահեռին՝ փոքրիկ ընթերցողը կարող է անցկացնել համեմատություն: Հիվան-

A.R.A.R.@

դությունը տղայի կյանքի արտաքին կողմն է, բայց կա նաև մեկ ուրիշ՝ ավելի խորքային երևույթ, որը թաքնված է, գաղտնի է, և պետք է գուշակել, կռահել դրա էությունը (ինչպես որ տղան գուշակեց ծաղկանոցի՝ առաջին հայացքի համար աննկատելի կյանքը):

Տղայի երազները, նրա հաղորդակցումը բնությանը, բարեկամությունը ծաղկանոցի բնակիչների հետ դառնում են նրա գոյության հիմքը: Տղայի ներաշխարհի կարևոր բաղադրիչը դառնում է վարդը, որը հակադրվում է հիվանդությանն ու մահին: Դրանով էլ այն խորհրդանշում է կյանքը: Նկատենք, որ վարդը միայն կյանքի խորհրդանիշ չէ: Երբ նա սկսեց թոշնել, չորացրին և նվիրեցին հեղինակին: Վարդը մահանում է, սակայն դառնում է միաժամանակ հեքիաթի կերպար, գործող անձ: Նա կյանք է առնում, սկսում ապրել մեկ ուրիշ՝ գեղարվեստական աշխարհում: Ստեղծագործության մեջ հակադրվում են երկու մահեր՝ տղայի մահը և վարդի մահը: Վարդի մահվամբ մարմնավորվում է հետևյալ կարևոր ճշմարտությունը՝ մահը դեռևս վերջը չէ, այլ ընդամենը անցում՝ մեկ այլ վիճակի: Այն դառնում է կյանքի փաստ: Ինչ խոսք, նպատակահարմար չէ մանրամասնորեն երեխային բացատրել հեքիաթի բարդ, փիլիսոփայական, գաղափարները, բացահայտել կյանքի և մահվան բարոյական խնդրի լուծումը:

Ուսուցչի խնդիրն է՝ բնագրի ընթերցանությունը կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր անդրադարձ խորացնի երեխաների ընթերցողական, անձնական տպավորությունները, դրդի նրանց՝ փնտրելու գլխավոր գործոնները, ուժեղացնի հուզական ներգործությունը, զգացումների շուրջ խորհրդածելու և կարծիք հայտնելու ցանկություն առաջացնի: Այս դեպքում ուսուցիչը պետք է ցուցադրի ընթերցողական գործունեության որևէ օրինակ, բացատրի բնագրի վրա աշխատելու ձևերն ու միջոցները, ներկայանա որպես որակյալ ընթերցող, որը կարողանում է իմաստավորել բնագիրը և կիսել իր մտքերը խոսակցի հետ:

Ավելորդ է ասել, որ բնագրի վրա վերոհիշյալ մակարդակով աշխատանք կարող է կազմակերպել գրականագիտական պատշաճ կրթություն ունեցող ուսուցիչը: Ինչպես տեսնում ենք, ընթերցանության ուսուցման ժամանակակից համակարգում գրականության տեսության գիտելիքները դառնում են ուսուցչի արդյունավետ ու գրագետ աշխատանքի գլխավոր պայմանն ու հիմնական երաշխիքը:

Օ.Վ. Սոսնովսկայա

Մանկավարժական գիտությունների թեկնածու (Начальная школа, N=9, 1998թ.)

Թարգմ.՝ Ն. Անտոնյանի

Գիտեք որ

«Նախաշավիղ կրթության ի պետս նորավարժից» («Տարերք արդի հայերէնի», Այբբենարան-ընթերցարանը Խաչատուր Աբովյանի միակ գիրքն է, որ տպագրվել է նրա կենդանության օրոք: Ցարական իշխանությունների և հայ հոգևորականության դժկամության պատճառով խափանվել է դրա գործածությունը: Տարածում են գտել հատուկենտ օրինակներ:

digitised by

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻՑ՝ ԴՊՐՈՑ

Հայոց ազգային պետականության կերտման ընթացքը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջնայինն ընտանիքի՝ ուսյալ և բարեկիրթ սերունդների բնականոն հաջորդականությունն ապահովող դերակատարումն է:

Ծնողներն առաջինն են երեխաներին ուսուցանում կյանքի այբուբենը, ձևավորում նրանց ներաշխարհը, բնավորության գծերը, աշխարհընմբռնումը:

Ընտանիքին աջակցելու համար հանրապետությունում ստեղծված են նախադպրոցական հաստատություններ, որոնք առաջնորդվում են «Նախադպրոցական համալիր ծրագրով» (1999 թ.): Ծրագիրը կարևորում է անձի համակողմանի դաստիարակությունը և երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման խնդիրը:

Կրթության մասին ՀՀ օրենքում ամրագրված է. «Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերն ընտանիքինն է: Պետությունը պայմաններ է ստեղծում երեխաների դաստիարակությունը կազմակերպելու համար» (հոդված 17, 2-րդ կետ):

Այսօր հանրապետության նախադպրոցական տարիքի երեխաների միայն 25 տոկոսն է հաճախում մանկապարտեզ: Այդ պատճառով հասունացած խնդիր է ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների քարոզչություն՝ ի նպաստ նախադպրոցական տարիքի երեխայի՝ դպրոցին լիարժեք նախապատրաստման:

Երեխայի՝ դպրոցին նախապատրաստվելու խնդիրներն են՝

1. Պահպանել և ամրապնդել երեխաների առողջությունը,
2. Ապահովել կրթության աստիճանականությունը,
3. Դպրոցին նախապատրաստելու գործընթացում բացառել դպրոցական ծրագրի կրկնությունը:

Նշված խնդիրներն իրականացվում են հետևյալ սկզբունքներով՝

1.Ավագ նախադպրոցականների անհատական առանձնահատկությունների հաշվառում,
2.Հարգանք՝ երեխայի և նրա գործունեության նկատմամբ,
3. Համալիր մոտեցում,
4.Հետևողականություն և հաջորդականություն,
5.Պարապմունքների այլընտրանքայնություն,
6. Դիտողականության ապահովում:

Երեխայի դաստիարակությունն ընտանիքում և նրա նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը կարող են հաջող ընթանալ, եթե ծնողների համար նախատեսված մեթոդական անհրաժեշտ ցուցումները բխում են հանրապետության գործող կրթական ծրագրից, և ծնողները պարզ պատկերացնում են դրա նպատակն ու խնդիրները: Իսկ այդ ամենի համար անհրաժեշտ են մանկավարժական գիտելիքներ, որոնք ծնողին կօգնեն ճիշտ ընկալել, վերլուծել երեխայի վարքը, արարքները, ճանաչել նրա տարիքային և հոգեբանական օրինաչափությունները:

Ընտանիքի և դպրոցի աշխատանքում հաջորդայնության պահպանման խնդիրը ներկայումս հանգում է դպրոցին՝ երեխայի համակողմանի նախապատրաստմանը: Ծնողի և ուսուցչի փոխհարաբերություններում ուշադրությունից դուրս է մնում երեխայի սոցիալական դիրքի փոփոխությունը:

6-7 տարեկանում են ձևավորվում են դպրոցական ուսուցման մեջ հաջողությունների նախադրյալները: Հետաքրքր-

A.R.A.R.@

քրություն է ձևավորվում ուսման նկատմամբ: Զարգանում են ճանաչողական ունակությունները, ինչպես և մեծերի, հասակակիցների, ծանոթների և անծանոթների հետ շփվելու կարողությունը: Թերևս ենթագիտակցաբար ծայր է առնում ուսումնառական համագործակցությունը: Արթնանում է որոշակի վերաբերմունք՝ դպրոցի նկատմամբ: Արդյունքում կատարվում է վարքագծի կամավոր կարգավորում:

Ապագա դպրոցականի ներքին դիրքորոշումը դպրոցի նկատմամբ միայն գրաճանաչ դառնալու, տարրական մաթեմատիկական և այլ պատկերացումներ ի հայտ բերելը չէ: Կարևոր է նաև դերակատարումային և կանոններով խաղերի կազմակերպումը: Այստեղ երեխան ձեռք է բերում իրեն անհրաժեշտ հատկանիշներ (զբաղվել ընդհանուր գործերով, ենթարկվել համակեցության կանոններին, անկաշկանդ փոխանակել մտքեր, համաձայնեցնել մտադրություններ, քննարկել, հիմնավորել սեփական կարծիքը, հաշվի նստել ուրիշների կարծիքների հետ, դրսևորել նոր ու ավելի լուրջ ուսման գործով զբաղվելու ցանկություն և կարողություն):

Ուսումնական գործընթացում կանխատեսվող հիմնական դժվարություններն են՝

1. Ծնողների դաստիարակչական ներգործության անբավարարությունը,
2. ծնողների ծայրահեղ կոշտությունը կամ թողտվության հասնող բարությունը,
3. մեծերի կողմից երեխայի անհատական ու տարիքային առանձնահատկությունների անտեսումը,
4. երեխայի չհաշտվելը նոր միջավայրի հետ,
5. բնավորության ընդգծված հատկանիշներ և հոգեվիճակներ (ամաչկոտություն, կամակորություն, լարվածություն, տագնապ, վախ, արգելակում...)
6. հանձնարարությունների ոչ հստակ ընկալումը երեխայի կողմից,
7. երեխայի աշխատասիրության պակասը կամ ծուլությունը:

Ավագ նախադպրոցական տարիքում կարևորվում է երեխայի՝ դպրոցական ուսուցմանը հարմարվելու պայմանների ստեղծումը:

Դպրոցում փոխվում է երեխայի սոցիալական կարգավիճակը: Նրա առաջ ծառանում են նոր ու համեմատաբար բարդ խնդիրներ՝ նախապատրաստվել դասերին, լինել ուշադիր, ժամանակին դպրոց գնալ, դրսևորել կազմակերպված վարք:

Փոխվում է երեխայի առաջնային գործունեությունը՝ խաղայինը փոխարկվում է ուսումնականի: Սրանք իրենց բնույթով և բովանդակությամբ տարբեր են:

Առաջինը ազատ գործունեություն է՝ երեխայի ցանկությամբ: Ուսումնականը՝ պարտադրվում է մեծահասակի կողմից՝ փոխելով երեխայի կյանքի ռիթմը:

Ուսումնական գործընթացին հարմարվելը լիովին կախված է երեխա-ուսուցիչ փոխհարաբերությունից, ուսուցչի հանդեպ երեխայի տածած վերաբերմունքից և ուսուցչի՝ սովորել սովորեցնելու կարողությունից: Հարմարվելու հաջողությունը պայմանավորված է նաև հասակակիցների հետ ունեցած և ընտանեկան փոխհարաբերության կառուցվածքով:

Դպրոցի շեմին կանգնած երեխայի հուզական ոլորտի հարստացմանը, մտքի ճկունությանը, դպրոցի նկատմամբ դրական վերաբերմունքի, բացասական հուզական ապրումների չեզոքացմանը, ներքին ազատությանը և ինքնակառավարմանը կարող են նպաստել հատուկ կազմակերպված խաղերը,(ավելի հանգամանորեն տե՛ս «Մանկապարտեզից՝

digitised by

դպրոց՝ սահուն անցում» Ա. Հովհաննիսյան, Երևան-1999 թ.):

Խաղերի (հատկապես կանոններով) կազմակերպումը կօգնի միկրոխմբերի ստեղծմանը (հասակակիցների կոլեկտիվ): Դա էլ հենց դասարանների ձևավորման ակնհայտ հիմք կդառնա:

Կանոններով խաղերի ժամանակ մեծահասակը երեխային ծանոթացնում է խաղի սկզբունքներին և գործելու միջոցներին: Սա նման է ուսումնական գործունեության: Երեխան սովորելով կատարել խաղի կանոնները՝ սահունորեն հարմարվում է մեծահասակի ստեղծած իրադրությանը: Այդ կանոնների գործադրումը զարգացնում, կայունացնում է երեխաների հոգեկան բովանդակային դրսևորումները՝ հիշողություն, մտածողություն, ուշադրություն և այլն, որոնք շատ կարևոր են ուսումնական նյութն ընկալելու, մտապահելու առումով:

Ուսումնական գործունեության նկատմամբ դրական վերաբերմունքի մշակումը նպաստում է նաև կերպարվեստը, որի միջոցով երեխայի ձեռքը նախապատրաստվում է գրելու:

Երեխաներին դպրոցին նախապատրաստելու գործընթացի բաղադրիչներն են նաև նկարների, հեքիաթների, պատմվածքների պատումներն ու վերապատումները, երկխոսությունները, զրույցները, հարց ու պատասխանները, ծանոթացումը գրքին ու աշխատանքը դրա հետ, համակարգչային խաղերը (6-7 տ. օրական մինչև 1,5 ժամ):

Ընտանիքին, մանկապարտեզին և տարրական դպրոցին ոչ այնքան պետք է մտահոգեն ուսուցման նպատակներն ու բովանդակությունը (ի՞նչ և ինչո՞ւ սովորեցնել), որքան ուսուցման մեթոդներն ու միջոցները (ինչպե՞ս սովորեցնել):

Տարրական դպրոցը հստակ պետք է առաջադրի նախադպրոցականին դպրոց ընդունելու հատուկ պայմանները:

Նշված մոտեցումները նախադպրոցական տարիքում ապահովում են՝

1. Տվյալ տարիքային փուլի ինքնագնահատման պաշտպանություն,
2. Երեխայի ճանաչողական և անհատական զարգացում,
3. Երեխայի պատրաստականությունը՝ արտաքին աշխարհի հետ փոխհարաբերվելու,
4. Հիմնական գործունեության (խաղի) զարգացում:

Այդ հաջողությունների հիմքով ուսումնական գործունեության կազմակերպումը դիտվում է որպես արտաքին աշխարհի հետ փոխհարաբերության նոր ձև:

Ժամանակակից պայմաններում անհրաժեշտ է ընտանիքից կամ մանկապարտեզից դպրոց շարունակական անցման գործընթացը ապահովել, հարստացնել նոր բովանդակային բաղադրամասերով.

1. Հուզական՝ երեխայի հուզական ոլորտն ու տրամադրվածությունը դպրոցի հանդեպ,
2. Գործառական՝ խաղային հիմնական գործունեության հիման վրա նոր՝ ուսումնական գործունեության նախադրյալների ձևավորում,
3. Բովանդակային՝ ճիշտ պատկերացում իր, շրջապատի և դպրոցական ուսուցման բովանդակային հեռանկարի վերաբերյալ,
4. Հաղորդակցական՝ հաղորդակցման առանձնահատկություն,անմիջական և փոխկապակցված շփում,
5. Մանկավարժամետ գործունեություն՝ երեխան և առարկայական աշխարհը, երեխան և բնությունը, երեխան և այլ մարդիկ, ուսումնադաստիարակչական գործընթաց:

Երեխայի դպրոցին նախապատրաստվելու խնդիրներն են՝

A.R.A.R.@

1. Ինքնաբացահայտում՝ երևակայություն, ճանաչողական ակտիվություն,
2. Սոցիալական զարգացում՝ իրավունքների և պարտականությունների փոխհարաբերությունների գիտակցում,
3. Ստեղծագործական գործունեության ձևավորում,
4. Հետագա կրթության, ուսումնական առարկայի նախապատրաստման (հայերեն, ռուսերեն և այլ լեզվական նախադրյալներ, մաթեմատիկական տարրական պատկերացումներ, գեղարվեստի զգացողության ձևավորում և այլն):

Հիշյալ խնդիրները լուծելու նպատակով առաջադրվում են ծնողների հետ տարվող աշխատանքի հետևյալ ձևերը՝ դասախոսություններ, հանդիպումներ, միջոցառումներ, գործնական աշխատանք, հատուկ պարապմունքներ (մայիս - օգոստոս ամիսներին).

I Նախադպրոցական հաստատության բազայի վրա՝

Մանկապարտեզ չհաճախող երեխաների համար:

II Դպրոցի բազայի վրա՝

շաբաթական առնվազն 3 – 5 անգամ:

III Ընտանիքում

1. Ընտանեկան մանկապարտեզ:
2. Տնային նախապատրաստում՝ ծնողների և տնային այն դաստիարակների միջոցով, ովքեր համապատասխան խորհրդատվության և նախապատրաստության փուլ են անցել:

Երեխայի՝ դպրոցին նախապատրաստելու գործընթացն ենթադրում է հոգեբանական, բարոյականային անհրաժեշտ որակների ձևավորում, տարրական ուսումնական գործունեության հանդեպ հետաքրքրության և սովորելու ցանկության արթնացում:

Ասյա Հովհաննիսյան

Կրթական բարեփոխումների կենտրոն

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Հարց. *Ցավով ենք արձանագրում, որ շուկայական հարաբերությունները մտել են կրթական ոլորտ և խառնաշփոթ են ստեղծում ուսուցիչների համար: Խոսքը վերաբերում է այն նյութերին, հատկապես աշխատանքային տետրերին, որոնք ստեղծվում և իրացվում են անհատ ձեռներեցների կողմից: Մի՞թե ԿԳ նախարարությունը լծակներ չունի այս արատավոր երևույթը կանխելու համար:*

Պատասխան. Շատ մտահոգիչ հարց եք բարձրացնում: Այս հարցը կարող են կանխել նաև դպրոցների տնօրենները, ուսուցիչները: Նախարարությունում մշակված է համապատասխան կարգ, համաձայն որի ստեղծվող բոլոր դասագրքերն ու ուսումնաօժանդակ նյութերը նախ՝ քննարկվում են առարկայական խորհուրդների նիստերում, ապա՝ երաշխավորվելուց հետո, հրատարակվելիք նյութերը կրում են ԿԳ նախարարության կամ ԿԲԿ–ի հաստատագիրը՝ «Հաստատված է ԿԲԿ-ի կողմից»:

Խնդիրը պարզ է՝ պետք է ձեռք բերել կամ իրացնել միայն այն ուսումնական նյութերը, որոնք նշագրված են հեղինակների անուններով և համապատասխան հաստատագրով:

digitised by

ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ինչպես հայտնի է, նախադպրոցական տարիքում գործունեության առաջատար տեսակը խաղն է: Այն երեխայի հոգեկանում առաջացնում է որակական փոփոխություններ, նրան պարգևում յուրահատուկ և ինչ-որ տեղ նույնիսկ վախեցնող ամենազորության զգացողություն: Հարուստ սնունդ տալով երևակայությանը՝ խաղը ձևափոխում է արտաքին աշխարհը՝ ըստ երեխայի ցանկության և միաժամանակ թույլ է տալիս խորացնել և ամրապնդել անձի արժեքավոր հատկություններ՝ համարձակություն, վճռականություն, կազմակերպվածություն, հնարամտություն և այլն: Երևակայական իրավիճակում իր և ուրիշի վարքը համադրելով պատկերացվող իրական անձի վարքագծին՝ երեխան սովորում է կատարել անհրաժեշտ գնահատումներ և համեմատություններ: Խաղային գործունեությունը նպաստում է կամածին ուշադրության և կամածին հիշողության զարգացմանը: Խաղի պայմաններում երեխաներն ավելի են կենտրոնանում և ավելի շատ գիտելիքներ մտապահում, քան գործունեության որևէ այլ տեսակի ժամանակ: Այսինքն՝ սաղմնավորվում են հիմքերը ուսումնական գործունեության, որը և առաջատար է դառնում դպրոցական տարիներին: Հարց է ծագում, իսկ ինչո՞ւ նոր միայն դպրոց ոտք դնող երեխային օտարենք նրա բնական վիճակից, իր էությամբ առանց այդ էլ պարտադիր և ինչ-որ տեղ նույնիսկ հարկադրական ուսուցման գործընթացը դարձնենք անհաղթահարելի:

Թեև խաղը երեխայի համար բնական պահանջմունք է, ազատ գործունեություն, այդուհանդերձ, մենք կարող ենք այն օգտագործել մեր կողմից հետապնդվող այլ նպատակների հասնելու համար: Պարզապես, որևէ խաղ կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքը, հետաքրքրությունները, մտավոր կարողությունների մակարդակը և այլն: Մայրենի լեզվի դասերին ինչպե՞ս կարող է խաղն օգնել ուսուցչին և աշակերտներին:

Փորձը ցույց է տվել, որ լեզվական հմտությունների ձևավորումն զգալիորեն արագ է կատարվում խաղային իրավիճակներում: Որպես կանոն, հենց այդ ընթացքում առաջին անգամ երեխայի խոսքում հայտնվում են նոր, դժվար հիշվող բառեր, և նա խաղալիս դրանք օգտագործելով՝ կիրառում է նաև ամենօրյա խոսքում: Այդպիսով, երեխաները խաղային իրադրություններում սովորում են նոր բառեր, կրկնում մեծերի կողմից արտասանված բառերն ու նախադասությունները՝ հարստացնելով իրենց լեզուն, խոսքը:

Տարրական դասարաններում ուսուցիչը կարող է կազմակերպել սովորողների խոսքի զարգացմանն ուղղված բազմատեսակ խաղեր: Այսպես, օրինակ՝ «Բերքահավաք» խաղը կարելի է կազմակերպել և՝ առաջին, և՝ երկրորդ, և՝ երրորդ դասարաններում՝ խաղի կանոնների մեջ որոշ փոփոխություններ մտցնելով: Անհրաժեշտ է ունենալ թղթից պատրաստված մի ծառ՝ պայմանականորեն

A.R.A.R.@

այն կկոչենք բառենի, որի վրա հնարավոր լինի կախել բառաքարտեր և զամբյուղներ (թղթե, ծղոտե և այլն): Այս խաղը կարելի է կազմակերպել և՛ որևէ դասանյութի ուսումնասիրման, և՛ թեմայի ամփոփման ժամանակ, և ուղղագրական որևէ կանոն ամրապնդելիս: Օրինակ, եթե այն կազմակերպվում է որևէ բնագիր ուսումնասիրելիս, բառենու վրա կախված բառերը հիմնականում պետք է լինեն բնագրից (հենակետային, նորածանոթ, ուղղագրական արժեք ունեցող բառեր և այլն): Աշակերտները (եթե խմբերի են բաժանված՝ խմբի ներկայացուցիչը) զամբյուղներով մոտենում են բառենուն, «քաղում» 4-5 (կամ ավելի) պտուղ, լցնում զամբյուղի մեջ և վերադառնում իրենց տեղերը: Որոշակի ժամանակահատվածում նրանք պետք է կազմեն մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն կամ բնագրից հիշեն այն հատվածը, որտեղ գործածվել են այդ բառերը: Բոլորին լսելուց հետո ուսուցիչը աշակերտների օգնությամբ որոշում է աշխատանքներից լավագույնը և պարգևատրում հեղինակին (կամ խմբին) :

Մայրենի լեզվի դասերին կրտսեր դպրոցականներն ամենից շատ դժվարանում են իմաստի ընկալման և մտապահման փուլում: Ճիշտ է, ի տարբերություն քերականության գիտական դասընթացների (որտեղ լեզվական հասկացությունները տրված են գիտական-լեզվաբանական կուռ համակարգով և գիտական սահմանումներով)՝ տարրական դասընթացում լեզվական հասկացությունները տրված են պարզից դեպի բարդը, հեշտից դժվարը տանող սկզբունքով: Այնուամենայնիվ, այդ դասընթացի վերացականությունից և ընդհանրականությունից բխում են մի շարք դժվարություններ: Ինչպես իրավացիորեն նշում է ռուս նշանավոր մեթոդիստ Մ.Լ.Զակոժուրնիկովան,

«Քերականության ուսումնասիրության ժամանակ երեխաները գործ ունեն ոչ թե զննական առարկաների հետ, այլ լեզվական անտեսանելի երևույթների, որոնք արագ մոռացվում են», ուստի դրանք հաղթահարելու համար և՛ ուսուցչին, և՛ աշակերտներին օգնում են լեզվական խաղերն ու վարժությունները: Ներկայացնենք խաղերի մի քանի օրինակ.

«ԳՏԻ'Ր ՊԱՏԱՍԽԱՆԸ»

Խաղի նպատակները. Ամրակայել առարկա, առարկայի հատկանիշ և առարկայի կատարած գործողություն ցույց տվող բառերի վերաբերյալ աշակերտների գիտելիքները, հարստացնել բառապաշարը:

Խաղի կահավորումը. Տարբեր առարկաներ, գրենական պիտույքներ, խաղալիքներ:

Խաղի կանոնները. Պարտվում է այն խումբը, որը երեք անգամ ուշացնում է պատասխանը կամ սխալվում:

Խաղի ընթացքը. Խաղին մասնակցում են դասարանի բոլոր աշակերտները: Նրանք բաժանվում են երեք խմբի: Առաջին խմբի մասնակիցները ցույց են տալիս առարկան և ասում դրա անվանումը: Երկրորդ խմբի մասնակիցներն անմիջապես թվարկում են այդ առարկան բնութագրող և համապատասխան հատկանիշ ցույց տվող բառեր (օրինակ՝ գրիչ՝ նոր, գեղեցիկ, կապույտ), իսկ երրորդ խմբի մասնակիցները՝ համապատասխան գործողություն ցույց տվող բառեր (օրինակ. գրիչ՝ գրել, գծել, ներկել, ընդգծել և այլն):

digitised by

«ՀԱՁՈՂԱԿ ԶՈՒՅԳԸ»

Խաղի նպատակները: Ամրակայել խոսքի մասերի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքները, զարգացնել արագ կողմնորոշվելու կարողություն, դաստիարակել ուշիմություն:
Խաղի կանոնները: Եթե զույգ կազմող խաղացողը մինչև քսան հաշվելը չկարողացավ կատարել առաջադրանքը, նրան պետք է օգնի զուգընկերը, իսկ եթե նա էլ չկարողացավ, երկուսն էլ դուրս են մնում խաղից: Հաղթում է այն զույգը, որը մյուսներից շատ է մասնակցում խաղին:
Խաղի ընթացքը. Զույգ կազմող աշակերտներից մեկն ասում է որևէ հնչյուն, երկրորդ աշակերտը՝ այդ հնչյունով սկսվող հինգ բայ (կամ այլ խոսքի մաս): Օրինակ՝ բ-բացել, բռնել, բղավել, բարկանալ, բարձրանալ:

«ՓԱԽՑՐՈ'Ւ ՁԵՌՔԴ»

Խաղի նպատակները: Ամրակայել գոյական անվան (կամ այլ խոսքի մասի) մասին աշակերտների ունեցած գիտելիքները, հարստացնել բառապաշարը, զարգացնել ուշադրությունը, մշակել արագ կողմնորոշվելու կարողություն:
Խաղի կանոնները: Խաղի մասնակիցները նստում են ձեռքերն առաջ պարզած: Երկու անգամ սխալվող կամ պատասխանն ուշացնող աշակերտը դուրս է մնում խաղից: Հաղթող է ճանաչվում ամենաակտիվ մասնակիցը:
Խաղի ընթացքը. Խաղին մասնակցում են դասարանի բոլոր աշակերտները: Ուսուցիչը շրջում է շարքերի միջով և փորձում «խփել» աշակերտների՝ առաջ պարզած ձեռքերին: Վերջիններս փորձում են փախցնել ձեռքերը: Ում ձեռքին «խփեց» ուսուցիչը, նա պետք է ասի իրեն առաջարկված կոնկրետ առարկաների ընդհանուր անվանումը: Եվ, ընդհակառակը՝ առաջադրված ընդհանուր անվանմանը համապատասխան կոնկրետ առարկաների անուններ թվարկի:

«ՀԵՐԹԱՊԱՀ ԲԱՌ»

Խաղի նպատակները: Խորացնել և ամրակայել գոյական անվան (ածականի, թվականի) մասին աշակերտների ունեցած գիտելիքները, հարստացնել բառապաշարը, զարգացնել ուշադրությունը, արագ կողմնորոշվելու կարողությունը:
Խաղի կահավորումը: Պլակատ-քարտեզներ, որոնց վրա գրված է մեկական բառ:
Խաղի կանոնները: Հանձնարարության կատարումը պետք է տևի երկու րոպե: Աշխատանքն ուշացնող աշակերտները դուրս են մնում խաղից: Հաղթող ճանաչվում է կարճ ժամանակում առավելագույն թվով բառեր կազմող աշակերտը:
Խաղի ընթացքը. Խաղին մասնակցում է ամբողջ դասարանը: Ուսուցիչը գրատախտակին ամրացնում է պլակատ-քարտեզը, որի վրա բառ է գրված (օրինակ՝ մանուշակ): Աշակերտները պետք է այդ բառի տառերով կազմեն գոյական անուններ (օրինակ՝ շուն, նուշ, մաշկ, ական, շուկա, նմուշ և այլն):

Խաղը կարելի է կազմակերպել գոյական անվան (կամ այլ խոսքի մասի) տորբեր քերականական կարգերն ուսումնասիրելիս՝ համապատասխանաբար փոխելով խաղի պահանջները: Օրինակ՝ անձ և իր ցույց տվող գոյականներն անցնելիս կարելի է պահանջել, որ աշակերտները, գոյական անուններ կազմելուց հետո առաջադրեն նաև համապատասխան ո՞վ և ի՞նչ հարցեր:

Աստղիկ Բալայան

A.R.A.R.@

ՅՈԹ ՀԱՐՑԻ՝ ՅՈԹ ՊԱՏԱՍԽԱՆ

Հե՞շտ է, արդյոք, լինել շնորհալի երեխա

Իմ տղան շատ է ընդունակ: Նա ժամանակից շուտ և դյուրությամբ սովորեց գրել, կարդալ, հաշվել: Այժմ նա տաս տարեկան է և համարվում է դասարանի ամենաառաջավոր աշակերտը: Սակայն վերջերս ի հայտ է բերում կամակորություն: Այլևս չի խոսում իր հաջողությունների մասին: Չգտնում է թաքցնել բնավորության լավագույն գծերը: Դարձել է մի տեսակ քմահաճ և անհնազանդ:

- Երեխայի շնորհալիությունը կամ օժտվածությունն ամենևին էլ չի ենթադրում նրա կողմից ինչ-որ ցուցադրական դերակատարման իրականացում: Երեխան ի բնե արդեն ինքնուրույն մի անհատ է, որն օժտված է ինքնազարգացման և ինքնաճանաչողության իրավունքով: Ծնողը կոչված է նպաստել երեխայի ներդաշնակ զարգացման ընթացքին, այլ ոչ թե ինչ-ինչ նպատակներով շահարկել նրա ցայտուն ընդունակությունները: Երեխայի բազմակողմանի զարգացումը ենթադրում է հասակակիցների հետ շփումների ներդաշնակություն, մարզական խաղերի, այլևայլ զվարճանքների անմիջական մասնակցություն, երաժշտության նպատակային ունկնդրում և ընկալում:

Չգտե՛ք մշտապես համագործակցել երեխայի հետ: Խուսափե՛ք կարգադրումներից և ձեր կամքի պարտադրումից:

Իսկ եթե աղջիկը չի կամենում հաճախել դպրոց ...

Աղջիկս 9 տարեկան է: Անցյալ ուսումնական տարվա կեսին նա ունեցավ նյարդային ուժեղ ցնցում: Բնականաբար չէր կարողանում ժամանակին կատարել տրված հանձնարարությունները: Աստիճանաբար դարձավ անուշադիր ու անտարբեր: Դժվարությամբ ավարտեց երկրորդ դասարանը: Իրականում նա չափազանց աշխատասեր աշակերտուհի էր և աչքի էր ընկնում իր նպատակասլացությամբ: Ես ամոանը պարապել եմ նրա հետ և գտնում եմ, որ նա լիովին ի վիճակի է հաճախելու երրորդ դասարան: Մինչդեռ ինքը կտրականապես հրաժարվում է դպրոցից:

- Դպրոցից հրաժարվելու իրողությունը ահազանգ է առ այն, որ երեխան իսկապես գտնվում է դժվարին կացության մեջ: Նրա այդ անհաջողությունները պայմանավորվում են հոգեբանական ծանր խնդիրներով: Այս պայմաններում խիստ էական է, որ նրա ուշադրությունը նրբանկատորեն սևեռվի իրեն հետաքրքրող թեմաների, դասերի բովանդակության, ուշագրավ փաստերի ու իրադարձությունների վրա: Քննադատաբար վերանայեք երեխայի ծանրաբեռնվածությունը. արդյոք դասերին նախապատրաստվելը չափից ավելի չի՞ ճնշում և հոգնեցնում նրան: Այժմ Ձեր աղջկան հանգիստ ու խաղաղ կենսապայմաններն ավելի են անհրաժեշտ, քան մյուս աշակերտներին: Նրան արժանացրեք հատուկ ուշադրության: Եվ միայն դասերի ու դպրոցի խնդիրներով մի սահմանափակվեք: Դուք կարող եք միասին զբոսնել: հետաքրքրաշարժ գրքեր կարդալ, հեռուստացույց նայել: Երեխան աննկատորեն պետք է համոզվի, որ իրեն միայն բարձր գնահատականների համար չեն սիրում: Վստահ ենք,

digitised by

որ աղջիկը շատ շուտով կվերագտնի իրեն, կհանդարտվի և կրկին կհայտնվի աշակերտական կյանքի բնականոն ընթացքի մեջ:

Որտե՞ղ պահել երեխայի ծեռքի բազմաթիվ աշխատանքները

Իմ հնգամյա որդին հաճախում է մանկական ստեղծագործության կենտրոնստուդիա: Նա իր աշխատանքները հաճախ է տուն բերում: Մենք դրանք դնում ենք այնպիսի մի անկյուն, որ մնում են աննկատելի: Մեր բնակարանի պայմանների բերումով ժամանակի ընթացքում այդ աշխատանքների մի մասը խունանում և կորցնում է տեսքը: Զրկված ենք այդ աշխատանքները պահպանելու տարածքային հնարավորություններից: Միաժամանակ ափսոսում ենք ոչնչացնել դրանք:

- Երեխայի ձեռքի աշխատանքները նրա անհատականության ձևավորման և զարգացման գործընթացում բնութագրվում են էական նշանակությամբ: Դրանցով առաջանում է միանգամայն դրական ինքնազգացողություն: Եվ սակայն այդ աշխատանքները հասկանալիորեն չեն կարող հավերժաբար հարատևել: Եվ ժամանակի ընթացքում բնականաբար չեն էլ հետաքրքրելու երեխային: Վերջինս անվերջորեն մղվում է դեպի ապագա: Եվ հենց ինքն է պահպանելու իր համար կենսականորեն անհրաժեշտը: Մնացյալը կարող եք հանգիստ խղճով դեն նետել և կամ երեխայի հետ խորհրդակցելուց հետո օգտագործել այլ նպատակներով: Ձեր որդուն ժամանակ առ ժամանակ առաջարկեք լուսանկարվել կամ նկարահանվել իր ստեղծագործությունների հետ: Այնուհետև լիովին հնարավոր է դրանց օգտագործումը նոր մտահղացումների մարմնավորման համար:

Ինչպե՞ս վարժեցնել 4-ամյա աղջնակին վայելուչ պահվածքի ու վարվելաձևի

Որոշ երեխաներ օժտված են բնածին վայելչականությամբ: Ցավոք, մեր երեխան այդպիսին չէ, նա առանց կշռադատելու խոսում է ամեն ինչի մասին: Այսպես, հանկարծակի կարող է հարցնել, թե մորաքույր Սոնան ինչո՞ւ է այդքան գեր: Կամ՝ կարող է բոլորի ներկայությամբ հայտարարել, որ տատիկի նվիրած տիկնիկն անպետքություն է, քանի որ մազերը չեն սանրվում: Ես ամաչում եմ իմ հարազատների ու բարեկամների առաջ: Գիտեմ, որ աղջիկս խելացի է և բարեսիրտ: Սակայն բոլորի վրա թողնում է չդաստիարակված ու անկիրթ երեխայի տպավորություն:

- Երեխաները մինչև 6-7 տարեկան հասակը հաճախ են լինում եսակենտրոն: Եթե դուք անտակտության պատճառով դիտողություն անեք Ձեր երեխային, ապա նա Ձեզ պարզապես չի հասկանա: Դաստիարակման լավագույն հնար կարող է լինել դրական վարքի հաճախակի խրախուսումը: Ցանկալի է հանգիստ պայմաններում և առանձնության մեջ երեխային բարեմտորեն ներկայացնել ու բացատրել գործած սխալը: Չի կարելի ստիպել նրան, որ ներողություն խնդրի անքաղաքավարության համար: Ձգտեք աղջկան նախապատրաստել և կողմնորոշել որոշակի իրավիճակներում: Այդ դեպքերում կարող եք նրբանկատորեն հուշելով հասկացնել, թե ինչ կանկալեիք լսել նրանից:

A.R.A.R.@

Ինչո՞ւ է 8-ամյա տղան խուսափում հասակակից աղջիկներից

Իմ 8-ամյա որդին ընդհանրապես չի ցանկանում շփվել աղջիկների հետ: Նա նրանց բոլորին էլ համարում է լացկաններ: Նրա համար գոյություն ունեն միայն գերհերոսներ: Հնարում է այնպիսի խաղեր, որոնք հագեցած են խիզախության և վտանգի տեսարաններով: Ահա և ինքն էլ այդ խաղերում իրեն դրսևորում է իբրև ամենահզոր հերոս: Ինձ անհանգստացնում է, որ նրա արտահայտությունների շրջանակը խիստ սահմանափակ է և կտրական:

- Երեխաներն այդ հասակում, որպես կանոն, չափազանցնում են կնոջ և տղամարդու միջև առկա տարբերությունները: Նրանք այդպես են ընկալում և փորձում հասկանալ հասարակության մեջ պատմականորեն ձևավորված տարբեր սեռերի դերակատարումները: Աղջիկներն ու տղաները դպրոցում հնարավորություն ունեն քննարկելու տղամարդու կամ կնոջ բնորոշ հատկանիշները: Կանայք հատկանշվում են առավելագույն զգացմունքայնությամբ, իսկ տղամարդիկ համապատասխան առնականությամբ: Եվ եթե տղան խառնվածքով իշխողի տիպաբանությամբ չի առանձնանում, ապա ինքն իրեն պարտադրում է՝ որպես «իսկական» տղամարդ հարաբերվելու բոլորի հետ: Ի՞նչ անել այդ դեպքում: Խրախուսեք Ձեր որդու այն արարքները, որոնցում այս կամ այն կերպ արտացոլվում են «կանացի բնավորությանը» ներհատուկ գծերը: Ձգտեք նրա մեջ զարգացնել ու խորացնել գթասրտության, խղճահարության, հոգացողության ու խնամատարության զգացմունքային որակները:

Ինչպե՞ս նշել նախադպրոցականի ծննդյան օրը

Այս տարվա ամռանը լրացավ Աննայիս հինգ տարին: Նա կարողացավ համոզել ինձ, որպեսզի ծննդյան օրվա առիթով հրավիրենք ամառանոցային իր մեծաթիվ ընկերներին: Ինքս ինձ վճռեցի, որ պատշաճ հյուրասիրության և անպաճույճ նվերների նախապատրաստումն է լինելու գլխավոր խնդիրը: Եվ սակայն սխալվեցի: Ծննդյան կանխատեսված տոնը չկայացավ: Երեխաները խառնիխուռն ցրիվ եկան պարտեզով մեկ և չէին էլ կողմնորոշվում, թե իրականում ինչով զբաղվել վերջապես: Անգամ ծայր առան մանկական վիճաբանություններ: Փորձ արեցի ինչ-որ բանով հրապուրել- շեղել նրանց, սակայն միաժամանակ ստիպված էի վազվզել խոհանոցում: Հասկացա, որ անհրաժեշտ էր ամեն ինչ կազմակերպել քիչ այլ կերպ: Բայց ինչպե՞ս....

-Նախ՝ էապես կրճատեք հյուրերի ցուցակը: Հրավիրյալների ցանկալի քանակը ճշտվում է բավականին պարզ կերպով՝ օրվա հերոսի կամ անվանակոչիկի տարիքին գումարում եք մեկ:

Եթե Ձեր աղջիկը, այնուամենայնիվ, համոզվածորեն առաջադրում է մի ամբողջ բազմություն հրավիրելու պահանջը, ապա երեխաներով զբաղվելու համար դիմեք այլ մեծահասակների օգնությանը:

Նախընտրելի է, երբ տոնական արարողությունը կենտրոնանում է ինչ-որ համընդգրկուն թեմայի շուրջ: Վերջինս կարող է լինել որևէ հեքիաթի հերոսի կերպար, մուլտֆիլմի սյուժե կամ պարզապես հանդիսության «մեղավորի» սիրած գույնը: Առհասարակ հրավիրումները, խաղերը, մրցակցություններն ու անգամ, հյուրասիրումները կարող են սերտորեն շաղկապված լինել հենց տվյալ ընդհանուր թեմայի հետ:

Ձեր՝ կանխավ մտահղացած ծրագրային շտեմարանում պետք է ներառված լինեն այնպիսի կարճատև խաղատեսակներ, որոնք մինչ բոլոր հյուրերի ժամանումը

digitised by

կզբաղեցնեն արդեն իսկ ներկաներին: Հարկ է ընտրել և նկատի ունենալ ժամանակի մեծ մասը գրավող թեմատիկ խաղեր նույնպես:

Չի կարելի անտեսել նաև զանազան զվարճալիքներով երեխաներին զբաղեցնելու պահանջի ծագման հնարավորությունը, քանի որ կանխապես պատրաստված խաղացանկը կարող է անսպասելիորեն արագ սպառվել:

Ինչ վերաբերում է բուն հյուրասիրությանը, ապա երեխաների համար միակ գայթակղիչ ուտեստն իրապես հրուշակեղենն է: Սեղան բացելու պատրաստություն տեսնելիս անպայման հաշվի առեք այս իրողությունը: Կարկանդակները, քաղցրավենիքները, պաղպաղակը, մրգեղենը, ըմպելիքներն ու պիցցան բավարարելու են յուրաքանչյուրի ախորժակը:

Ինչո՞ւ է դեռահասը հոգնում իր մտածումներից

Քնելուց առաջ կամ միայնության մեջ որդիս շատ հաճախ տանջալիորեն խորհրդածում է գալիքի մասին: Նա տասներեք տարեկան է և հատկապես գիշերները տառապում է գլխացավերից: Իր անհայտ ապագային վերաբերող սևեռուն մտածումները հանգեցնում են անքնության: Արձակուրդներին կամենում ենք մեկնել ինչ-որ տեղ, իսկ նա անվերջ տարակուսում է՝ արդյո՞ք դա հետաքրքրական կլինի իր համար: Որևէ անձնավորության հանդիպելիս հուզվում է, տագնապում՝ ի՞նչ է մտածում իր մասին: Այս մտքերը տանջում-ծվատում են որդուս, և նա ասում է ինձ. « Ես չեմ ուզում մտածել այդ ամենի մասին»: Ինչպե՞ս օգնել նրան:

- Իր սեփական անձի, շրջապատողների կարծիքի և իր ապագայի հանդեպ դեռահասի ուշադրությունը միանգամայն բնական երևույթ է: Այն պայմանավորվում է տարիքային առանձնահատկություններով: Սակայն որոշ երեխաների մեջ այս ամենը դռսևորվում է խիստ սրվածորեն և կողքից կարող է դիտվել կամ ընկալվել որպես կասկածամտություն: Դեռահասի կյանքն անհանգիստ է ու տագնապոտ: Նրա մեջ եռացող լարվածությունը ելքեր է պահանջում: Հաճախակի հենց ներքին լարվածությունն է դառնում գլխացավի և անքնության պատճառ:

Ամենից առաջ նորմավորմամբ ճշգրտեք Ձեր որդու ապրելակերպը: Օրվա կանոնակարգի մեջ կարևորվելու են հատկապես ֆիզիկական վարժությունները, ընդհանուր մարզանքը, պարերը և այլն: Ներքին պրկվածությունը թուլանում-վերանում է հատկապես շարժման միջոցով:

Միանգամայն հնարավոր է տիրապետել անցանկալի մտքերից ինքնիրեն տարանջատելու մշակված սովորությանը: Դեռահասն անհրաժեշտաբար պետք է պլանավորի իր յուրաքանչյուր օրը (ուր գնալ, ում հանդիպել և այլն): Եթե Ձեր որդին մտորում է որևէ անձնավորության մասին, ապա թող չխորասուզվի անպտուղ խորհրդածությունների մեջ: Ընդհակառակը, թող գործելու փորձ անի, այսինքն՝ հանդիպելու, զրուցելու, միասին ծրագրեր կազմելու և առհասարակ համագործակցելու պայմաններ ստեղծի: Որոշակի ծրագրի առկայությունն անպայման թոթափում է լարվածությունը և իրական գործողություններ ձեռնարկելու ասպարոզ է բացում: Երեխաների ներքին էներգիան նախապես ծախսվում է ծրագիր կազմելմշակելու, ապա և՝ արդյունքների ձեռքբերմանն ուղղված քայլերի վրա: Դա դեռահասին օգնելու է երևակայականի և իրականի սահմանագծում հասնել հավասարակշռության:

Ըստ `" Семья и школа"-ի
(Մոսկվա, 1999 N9)

A.R.A.R.@

Կրթության առաջնահերթ հիմնախնդիրները և դրանց իրականացման արդյունավետ մեթոդները շարունակում են մնալ ԿԳՆ կրթական բարեփոխումների կենտրոնի ուշադրության կիզակետում: Այդ գործընթացում առանձնահատուկ տեղ է հատկացվում կրտսեր դպրոցին:

Դասվարի աշխատանքի բարեփոխումը Կենտրոնի մշտական մտահոգությունն է, որի հիմքով այս անգամ ձեռնարկեցինք գործնական հանդիպումներ այդ բնագավառի փորձառուների հետ: Նպատա՞կը: Նորի, նորագույնի որոնման և հաստատման ուղղություններում հնի մեջ (բայց ո՞չ հնացածի) առողջն ու կենսունակը տեսնելու, սրանց և նորի (բայց ո՞չ նորածնի) շահեկան զուգակցման իրականացումն է:

Հերթական հանդիպման ճանապարհը ձգվում է դեպի Արարատ: Որոշել ենք հանդիպել Արարատ գյուղի թիվ 1 դպրոցի նախկին դասվար Գրետա Սարգսյանի հետ:

Հյուրասեր տիկնոջ բարեսրտությամբ նա հյուրընկալում է մեզ: Հանդիպման սկիզբը հուզիչ էր. վաղեմի ծանոթության հուշերը դժվար են արթնանում նորօրյա ցավից, անսփոփ վշտից. Սպարապետ որդու՝ Վազգեն Սարգսյանի կորստի վիշտը վարագուրում է անցյալը: Դժվարությամբ է հաջողվում հայրենիքին ծառայելու պարտքի մասին զրույցի թեման ուղղորդել դեպի դպրոց, կրթություն: Մտքերը հանդարտ սահում են դեպի ոչ վաղ անցյալը, երբ մեծ նվիրումով կրթում էր իր սիրելի սաներին: Նա հայտնվում է իր տարերքի մեջ և այլևս չի սպասում հարցերի: Հպարտ կեցվածքով, իր մասնագիտության գիտն իմացողի արժանապատվությամբ նա խոսում է դպրոցի հոգսերից և դրանք լուծելու ուղիներ առաջարկում: Կրտսեր դպրոցի հոգս ու ցավի մտահոգությունը չի լռում նրա անհանգիստ, սրտացավ հոգու խառնարանի քուրայում...Հանդիպումը շիկանում է խնդրի հանդեպ ունեցած նախանձախնդրությունից, վաղվա արժանավոր քաղաքացի կերտելու մտահոգությունից, ցանկություններից, իղձերից: Մտորում են բոլոր ներկաները:

- Տիկի՛ն Սարգսյան, Ձեր կարծիքով, ի՞նչ խնդիրներ ունի այսօր հանրակրթական դպրոցը:
- Դպրոցից է սկսվում ամեն ինչ: Պետությունը, կառավարությունը պետք է դպրոցը վերցնեն իրենց հոգածության տակ: Այս առումով կրթության խորհրդային համակարգը շատ լավն էր: Քանի մենք չունեինք լավը, փորձվածը, մեր իրականությամբ հաստատվածը, իրավունք չունեինք փլուզելու եղածը: Դպրոցներում աշխատանքն այսպես շարունակել այլևս անհնար է. կորել են ուսուցչի հավատը, եռանդը, լավատեսությունը, վստահությունն իր աշխատանքի օգտակարության նկատմամբ: Անհրաժեշտ են վերապատրաստման դասընթացներ նրանց բարոյահոգեբանական վիճակը վերականգնելու նպատակով:
- *Կարծում եք՝ դասընթացներով հնարավոր կլինի լուծել այդ կարևոր հիմնախնդիրը:*
- Իհարկե, ոչ: Կառավարությունը ֆինանսապես պիտի սատարի: Ուսուցիչը շատ պահանջկոտ չէ: Մի փոքր ուշադրությունն էլ բավական է՝ նրան ոգևորելու համար: Խոսքս վերաբերում է հիմնականում ավագ սերնդին: Երիտասարդներից այսօր քչերն են պատասխանատվությամբ մոտենում հարցին: Չեմ մեղադրում, քանի որ սոցիալապես անապահով ուսուցիչն ի՞նչ սրտով պիտի պատշաճ դաս պարապի: Թեև իսկական մանկավարժը դասարան մտնելիս մոռանում է ամեն ինչ:

digitised by

- *Ես Ձեզ ճանաչում եմ իբրև լավագույն մանկավարժի, որն իր ողջ կյանքը նվիրաբերել է կրթության գործին և սաներին ներարկել հայրենասիրության ոգի, մատաղ սերնդին դաստիարակել մեր ազգին հատուկ լավի, բարու, գեղեցիկի բարձր գաղափարներով: Դուք ապրել եք երեխաներով, դպրոցական գործով: Հիմա կարողանու՞մ եք հեռու մնալ այդ ամենից:*
- Չեմ ուզում ինքնագովությամբ զբաղվել, բայց, իրոք, լավ եմ աշխատել: Հիմա էլ թեև չեմ աշխատում, ապրում եմ դպրոցի հոգսերով: Հոգացել եմ 1-2 դասարանի և մարգադաիլիճի վերանորոգման ծախսերը: Խնդրել եմ որդուս, որ օգնի՝ նստարաններ պատվիրելու և ձեռք բերելու հարցերում: Ամանորի կապակցությամբ, ներողամտություն հայցելով բոլոր գործընկերներից, դրամական պարգև եմ շնորհել բոլորին՝ թեկուզ փոքր գումարով դրսևորել եմ վերաբերմունքս: Ուշք ու միտքս դպրոցի, երեխաների հետ է: Երեխաներին սիրել եմ իմ զավակների չափ: Իմ աշխատանքային օրը ձգվել է մինչև երեկո, որովհետև դասերից հետո լրացուցիչ պարապել եմ շատերի հետ: Անգամ զավեշտական պատմություններ են պատմում այդ առիթով: Դասերից հետո դասարանում թողել եմ նույնիսկ նկարչությունից հանձնարարություն չկատարած երեխաների, և միասին աշխատել ենք: «2» նշանակել չեմ սիրել: Գնահատականով երեխային ոչինչ չես սովորեցնի: Ավելին. ես կարծում եմ՝ գնահատականը խանգարում է ուսուցչին: Համոզված եմ, որ տարրական դասարաններում պետք է աշխատել առանց գնահատականների:
- *Դուք ասացիք, որ խորհրդային կրթական համակարգը լավն էր: Կարո՞ղ եք ասել՝ ի՞նչն էր գնահատելի:*
- Նախ՝ այդ համակարգը երեխային տալիս էր բազմակողմանի զարգացում, և ուսուցման գործընթացը կազմակերպվում էր աստիճանաբար՝ պարզից դեպի բարդը սկզբունքով: Հիմա ծրագրերը շատ են հագեցած: Երեխան դժվարանում է այդքան տեղեկատվությունը միանգամից ընկալել: Ես հիշում եմ՝ անցնում էինք «Հին աշխարհի պատմություն»: Հրաշալի ուսուցչուհի ունեինք: Այնքան հետաքրքիր էր մատուցում նյութը, որ բոլորս կախարդված լսում էինք: Հիմա այդ նույն առարկայի դասագիրքն այնքան շատ է հագեցած թվերով ու փաստերով, որ կասկածում եմ, թե դա ընկալելի կլինի V դասարանցուն:
- *Դուք շատ արժեքավոր դիտարկումներ եք կատարում: Ինձ համար հետաքրքիր կլիներ լսել մասնավորապես տարրական դասարաններին վերաբերող տեսակետներ: Առավել ևս համոզված եմ, որ դրանք Ձեզ նույնպես հոգեհարազատ են:*
- Նախ՝ շատ կարևորում եմ ուսուցչի կրթության հարցը: Մանկավարժը պետք է կրթություն ստանա միայն պետական բուհում: Մասնավոր կրթական համակարգն անհրաժեշտ որակներ չի ապահովում: Ինձ ծանոթ են շատ դեպքեր, երբ երիտասարդները շատ թույլ մասնագիտական պատրաստություն են ձեռք բերում մասնավոր բուհերում: Առավել անհանդուրժելի եմ համարում համապատասխան մանկավարժական որակավորում չունեցող մասնագետների մուտքը դպրոց: Որպեսզի կրթության որակը բարձրանա, պիտի սկսել որակյալ մանկավարժներից: Դա առաջին և ամենակարևոր նախապայմանն է: Երկրորդ խնդիրը ես կապում եմ դասագրքերի հետ: Անցյալ տարի, թոռնիկիս հետ պարապելիս, առիթ ունեցա ծանոթանալու գործող Այբբենարաններին: Ինձ դուր եկավ Վ.Սարգսյանի «Այբբենարանը»:

A.R.A.R.@

- *Հիմնավորեք, խնդրեմ, ինչո՞վ դուր եկավ Ձեզ այդ դասագիրքը:*
- Նախ՝ նյութերն ընտրված են ճաշակով և հայրենասիրական, պատմական արժեքի տեսակետից՝ ուշագրավ են ու դյուրընկալելի: Օրինակ, Սանասար բառի կապակցությամբ ուսուցչուհին շատ հակիրճ տեղեկություն էր տվել էպոսի հերոսներ Ծովինարի ու նրա որդիների մասին: Դա առիթ եղավ, որ ես տանը կարդամ «Սասունցի Դավիթ» էպոսի թումանյանական մշակումը, և պիտի տեսնեիք, թե թոռնիկս ինչպիսի կլանվածությամբ ու ոգևորությամբ էր լսում այդ պատմությունը: Դասագրքում կան նաև բառախաղեր, խաչբառեր, որոնք հետաքրքիր են դարձնում դասանյութը: Նկարազարդումները նույնպես գրավիչ են:
- *Իսկ ի՞նչ կարծիքի եք երկրորդ, երրորդ դասարանների դասագրքերի մասին:*
- Հիմա թոռնիկս սովորում է երկրորդ դասարանում: Հայոց լեզվի դասագիրքը բարդ է: Կան մեծածավալ և բովանդակությամբ դժվարընկալելի նյութեր: Լեզվական գիտելիքների չափաբաժինը ևս մեծ է: Դրանք տրվում են ընթերցանության նյութերի հետ մեկտեղ, և երեխայի մեջ համապատասխան վերաբերմունք չի մշակվում: Նրան թվում է, թե դա լրացուցիչ հանձնարարություն է և լրջությամբ չի վերաբերվում:
- *Բայց չէ՞ որ կրտսեր դպրոցում մենք քերականություն ուսուցանելու խնդիր չունենք:Մեր նպատակն է՝ ընթերցանության նյութը երեխաներին մատուցել իբրև գեղարվեստական խոսք և մեկնաբանել այդ խոսքին հատուկ բոլոր օրինաչափությունները, այդ թվում և՝ լեզվական իրողությունները: Այսինքն՝ կրտսեր դպրոցականին սովորեցնում ենք ճիշտ, գրագետ բանավոր ու գրավոր խոսք կառուցել, իմացածը, լսածն ու կարդացածը ազատ-անկաշկանդ արտահայտել:*
- Ճիշտ է, ես երբեք չեմ պահանջել,որ երեխան գա ու անգիր վերարտադրի քերականական կանոնները: Այնքան պետք է պարզաբանել, մանրամասնել նյութը, որ երեխաներն ինքնուրույն կարողանան լեզվական այս կամ այն իրողության վերաբերյալ հետևություններ անել: Երեխաները շատ են սիրում կարդալ հետաքրքիր նյութեր, հեքիաթներ, մանկական պատմություններ, Հայաստանը ներկայացնող բնագրեր: Երեխաների հայրենասիրական ոգին պետք է միշտ արթուն պահել: Չմոռանանք, որ այս տարիքում երեխային անհրաժեշտ է հայրենիքի իրական ճանաչողություն: Հարկավոր է ընտրել այնպիսի նյութեր, որոնք կպատմեն Հայաստանի բնակավայրերի մասին, կներկայացնեն նրա բուսական ու կենդանական աշխարհը: Երեխան եթե ճանաչեց, կսիրի հող հայրենին և նրա զինվորը կդառնա:
- *Ժամանակին գործածվեցին դասագրքեր, որոնց ընդգրկած նյութերը շատ փոքրածավալ էին: Արդյունքում՝ փոքր նյութերը երեխաների կարդալու կարողությունն ավելի հեշտ էին ձևավորում: Ես կուզեի լսել Ձեր կարծիքը դասագրքի այդ կարևոր սկզբունքի մասին:*
- Մեծածավալ նյութերը հենց սկզբից երեխային վանում են: Նա մտավախություն և չկամություն է դրսևորում դրանց հանդեպ: Մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ փոքր նյութի շուրջ ինքնուրույն աշխատելը (որ գիրք-տետրերի համար կարևոր նախապայման է) ավելի հեշտ է: Երեխան թե՛ բովանդակության վերարտադրման, թե՛ տրամաբանական ու վերլուծական- բնութագրական հարցերին պատասխանելու համար ստիպված էր նյութն ընթերցել այնքան, մինչև գտներ համապատասխան պատասխանը: Սա նպաստում էր ընդհանրապես կարդալու կարողության ձևավորմանը: Առկա է նաև հոգեբանական գործոնը. գիրք-տետրով աշխատելիս երեխան ազատ է, չկա ժամանակի ճնշող հանգամանքը: Իհարկե, չեմ

digitised by

ուզում նախկին դասագրքերը կատարյալ համարել, դրանք լուրջ թերություններ էլ ունեին:

- *Ձեր կարծիքով՝ մերօրյա դասագրքերում կարո՞ղ ենք օգտագործել այդ դրական փորձը:*
- Կարծում եմ, որ այդ սկզբունքի կիրառմանը կարող են նպաստել դասաքրերին կից տրվող աշխատանքային տետրերը: Սեփական փորձով եմ համոզվել, թե դրանք որքան են հեշտացնում ուսուցչի աշխատանքը: Ինչո՞ւ ընթերցարանների համար չստեղծել նմանատիպ տետրեր: Այդ կերպ մեզ կհաջողվի հաղթահարել մեծածավալ նյութերի ուսուցման դժվարությունները: Դրանով կօգնենք նաև աշակերտներին՝ ինքնուրույն մտածողություն դրսևորելու ու տրամաբանական բազմաբնույթ աշխատանքներ կատարելու հարցում:
- *Տիկի՛ն Սարգսյան, իսկ ի՞նչ անել, որ ուսումնառությունը երեխային հաճելի լինի:*
- Առաջին հերթին այն պետք է մատչելի լինի: Փորձը ցույց է տվել, որ եղել են մանկապարտեզի կայտառ, սովորելու ցանկությամբ այրվող երեխաներ, որոնք առաջին դասարան հաճախելու առաջին իսկ ամիսներից կտրուկ փոխվել են, կոտրվել: Նրանք ընկրկում են ուսման դժվարությունների ու բարդությունների առջև: Այսօր մենք ունենք կրթության տասնամյա տևողություն: Ի դեպ, ես դեմ եմ տասնմեկամյա կրթությանը: Մենք այդ փորձն ունեցել ենք և արդարացիորեն հրաժարվել դրանից: Տասը տարվա ընթացքում հնարավոր է բազմակողմանի գիտելիքներով զինված մարդ կրթել: Գիտելիքների ծավալը արհեստականորեն մեծացնելու հարկ չկա: Միևնույն է, երեխան կվերցնի այն, ինչ իրեն պետք է, ինչ ինքն ընբռնում է:
- *Ո՞ր կարողություններն եք կարևորում կրտսեր դպրոցում երեխայի զարգացման համար: Երեխան ի՞նչ պատրաստություն պիտի ունենա, որ ի վիճակի լինի առանց էական դժվարությունների շարունակելու ուսումը միջին դպրոցում:*
- Երեք տարի առաջ, արդեն ութերորդ դասարանցի իմ աշակերտներից մեկն օլիմպիադայում առաջնություն էր շահել և գովասանագրի արժանացել: Պարգևի հանձնման արարողության օրը նա գովասանագիրը հուզմունքով մեկնեց ինձ: Երբ ես տարակուսած նայեցի նրան, հետևեց պատասխանը.«Ձեր տված գիտելիքներն են այսօր ինձ հաջողություն բերել»: Թույլ տվեք անհամեստորեն համաձայնել իմ սանի հետ: Գիտելիք ձեռք բերելու հիմքերը դրվում են կրտսեր դպրոցում: Այստեղ է երեխան սովորել սովորում: Եթե ամուր են այդ հիմքերը, հուսալի են նաև ուսուցման հետագա քայլերը:

Մի անգամ լուսահոգի Աշոտ Տեր - Գրիգորյանն այսպես մեկնաբանեց դասվարի առաքելությունը.«Այո՛, դասվարությունը մասնագիտություն է: Ամեն մարդ չէ, որ կարող է դասվար աշխատել»: Դասվարը պետք է անվերջ ինքնակրթությամբ զբաղվի, հատկապես լավ տիրապետի հայոց լեզվին, գրականությանն ու պատմությանը: Նա պիտի ի զորու լինի նաև ապրել երեխաների հետաքրքրություններով: Ես հպարտ եմ, որ իմ սաներից շատերն են ընտրել դասվարի բարդ ու դժվարին մասնագիտությունը և այսօր էլ աշխատում են մեծ ոգևորությամբ:

Զրույցը վարեց Կ. Թորոսյանը
5.02.2001 թվական

A.R.A.R.@

Ներկայացնում է գործընկերը

ՆՎԻՐՅԱԼԸ

Դժվար է գնահատել ուսուցչի աշխատանքը: Դժվար է սպառիչ սահմանում տալ նրա առաքելությանն ու կոչմանը: Բառերով չէ, որ պիտի բնութագրել հայրենանվեր այդ գործը: Ուսուցչին պետք է ճանաչել դասի ընթացքում, երեխաների հետ աշխատելիս, ներշնչանքի պահին, երբ սաների հայացքներում նկատվում են հիացմունքի, զարմանքի, անսպասելի զգացումների կայծկլտումները:

Սուսաննա Ասոյանն այդպիսի հարյուրավոր, հազարավոր պահեր է պարգևել իր սաներին: Նրանք դպրոցն ավարտելուց հետո էլ չեն մոռանում իրենց ուսուցչուհուն, որն ուղեկցել է նրանց դեպի հայրենի իմացության գաղտնարանները, բոլորի սրտերում բացելով գեղեցիկն ընկալելու նոր հորիզոններ: Բավական է հիշել Հովհաննես Շիրազի մի փոքրիկ նամակը:

«Սիրելի Սուսաննա,- շնորհակալություն այն ոսկեշատ երեխաների արտասանության համար, որ հստակ, հուզիչ կերպով արտասանեցին քո բանաստեղծությունը՝ նվիրված այն բանաստեղծին, որին այս էլ երկրորդ անգամ ծնեցիր՝ քո տակավին մատղաշ սրտիցդ: Շնորհակալություն երկուսի համար էլ, առավել այն բանի համար, որ այդպիսի սերունդ եք կրթում, այն էլ հայերեն: Հայերեն, որ այժմ գրեթե... հալածվում է ինչպես ինքը աստված, վասնզի զույգն էլ միաստվածություն է, մեր միակ փրկիչը...»:

Ուսուցչուհին նաև բանաստեղծ է...

Դա նշանակում է, որ նա հաճախ է ապրում աստվածային ներշնչանքի ստեղծագործական պահեր, որոնց ապացույցներն են «Սովետական դպրոց», «Պիոներ կանչ» թերթերում, «Գարուն» ամսագրում և այլ պարբերականներում տպագրված գողտրիկ, սրտի հետ խոսող բանաստեղծությունները: Դրանք վկայում են նրա անուրանալի շնորհքի մասին:

«Գարուն» ամսագրում տպագրված բանաստեղծություններից վկայակոչենք գոնե մեկը.

Մի կանաչ գարուն կանգնել է ճամփիս:
Հազար գույներով մի ծաղկած գարուն
Սիրտս գերում է:
Ծաղկած ծառեր են, երգի բառեր են
Թավիշ թերթերով թափվում աչքերիս:
Քամին ճյուղերը տարուբերում է
Եվ ինձ ընծայում
Նոր երգի պահեր:
Մի անուշ գարուն, մի քիչ ուշ գարուն
Կանգնել է ճամփիս:

Բանաստեղծական թավշե ձայնով է Սուսաննա Ասոյանը խոսում երեխաների հետ, խոսքի ջերմությամբ ուղղակի գերելով նրանց, և միշտ նորություններ հրամցնելով, հետաքրքիր դարձնելով ասելիքը: Չի կարելի չհիշել նաև տարիներ առաջ հրատարակված բանաստեղծությունների «Տարեգիրք» խորագրով ալմանախը, որի մեջ Սուսաննան ընթերցողներին է ներկայացել իր «Հավերժ կարկաչիր», «Օրոր», «Եթե», «Ես եկել եմ», «Մի բուռ պահված երջանկություն», հայրիկին, մայրիկին նվիրված և այլ մտերմիկ զրույցներ հիշեցնող բանաստեղծություններով:

Տասնյակ ու տասնյակ պատվոգրեր, շնորհակալագրեր են պահվում նվիրյալ ուսուցչուհու արխիվում: Դրանցից յուրաքանչյուրը հուշում է Սուսաննա Ասոյանի հետաքրքրությունների որևէ շրջանակը: Ահա նրանցից մի քանիսի մասին թռուցիկ ակնարկ.

«Սուսաննա Ասոյանին՝ քաղաքային մանկավարժական ընթերցումներում ուշագրավ զեկուցումով հանդես գալու համար»,

«Սուսաննա Ասոյանին՝ «Այբբենարանի» ավարտին նվիրված թեմայով զեկուցման և ուշադրության արժանի ցուցահանդես կազմակերպելու համար»,

digitised by

«Սուսաննա Ասոյանին՝ «Արտադասարանական միջոցառումները՝ տարրական դասարաններում» կարդացած ուշագրավ զեկուցման համար»:

Ասենք նաև, որ Ս. Ասոյանը տարիներ առաջ արժանացել է ժողովրդական կրթության գերազանցիկի կրծքանշանի:

Ս. Ասոյանը Երևանի Վ. Տերյանի անվան դպրոցում աշխատում է 1976 թվականից: Այսինքն 25 տարի նույն դպրոցում՝ երեխաների հետ ու նրանց կողքին:

Սուսաննա Ասոյանի վարած «Բաց դասերը», իրոք, ստեղծագործական լարված աշխատանքի և ներշնչանքի պոռթկումներ են: Դրանք երկար ու երկար մնում են ներկաների հիշողության մեջ: Հիշատակենք «Գարնանամուտ», «Մեկ ժամ աշնան հետ», «Տարեմուտ», «Ջոն մայրենիին», «Ոսկե աշուն», «Տառամուտ» և այլն: Դասերն աչքի են ընկել իրենց կազմակերպվածությամբ, թարմությամբ ու նորարարությամբ:

Այդ նորարարության՝ ամեն ինչ հետաքրքիր և ուսանելի դարձնելու շունչն զգացվեց հատկապես անցած հազարամյակի վերջին ակորդը հանդիսացող «Հեքիաթի տուն» մանկական երաժշտական թատրոն-ստուդիայի ստեղծումը: Խիստ ուշագրավ էր այն ներկայացումը, որ բեմադրեց Ս. Ասոյանը: Միայն «Այբբենիկի արկածները» երկու գործողությամբ կատակերգության տպագրված ծրագրի ընթերցումն անգամ կարող է պատկերացում տալ այդ հետաքրքիր միջոցառման մասին: Այդ ներկայացման մեջ իրենց դերակատարումներով փայլեցին շատ երեխաներ: Դրանից առաջ էլ փոքրիկ դերասաններն «Նազարի վերադարձը» կատակերգության բեմականացմամբ ուրախացրել էին իրենց հանդիսատեսներին, սցենարը և բեմադրությունն իրականացրել էր Սուսաննա Ասոյանը:

Սուսաննա Ասոյանը ստեղծագործական որոնումների մեջ է: Նա դեռ շատ երկար կուրախացնի իր սաներին, նրանց ծնողներին, մանկավարժական կոլեկտիվի անդամներին՝ իր նոր ու հետաքրքիր մտահղացումներ իրագործումներով:

Սվետլանա Հայրապետյան
Երևանի թիվ 60 դպրոցի ուսուցչուհի

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Հարց – Մի բարի ավանդույթ կար մեր կրթության բնագավառում՝ մանկավարժական ընթերցումները: Ուսուցիչները հնարավորություն ունեին հաղորդակցվելու աշխատանքային փորձով, դրսևորելու իրենց մասնագիտական ունակությունները, ներգործել կրթական ոլորտի զարգացման գործընթացի վրա:

Արդյոք չի՞ նախատեսվում վերականգնել մանկավարժներին շատ անհրաժեշտ այդ գործընթացը:

Պատասխան – Իրոք, մանկավարժական ընթերցումները խթանում էին ուսուցչի մասնագիտական կարողությունները, որպես բարձրորակ մասնագետներ ձևավորելու և կայացնելու գործընթացը:

Կրթական բարեփոխումների կենտրոնում մշակվում է մանկավարժական ընթերցումների կազմակերպման և անցկացման կանոնակարգ, որն առաջիկայում կտպագրվի «Կրթություն» թերթում:

Ակնկալում ենք ձեր ակտիվ մասնակցությունը «Կանոնակարգի» քննարկման հարցում:

A.R.A.R.@

Հայաստանում տարրական դպրոցի բարեփոխման և ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը

Ծրագրի մասին

ԱՄՆ կառավարության և կրթական ու մշակութային գործերի բյուրոյի հովանավորությամբ է գործում Հայաստանում տարրական դպրոցի բարեփոխման և ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը, որը ղեկավարելու իրավունքը շնորհվել է ԱՅՐԵՔՍ-ին՝ Միջազգային հետազոտությունների և փոխանակումների խորհրդին:

Ծրագիրը, որը հիմնականում ուղղված է տարրական դպրոցում այսօր աշխատող և ապագա ուսուցիչներին, նպատակ ուներ Հայաստանի դպրոցներում ուսուցիչների վերապատրաստման համար տեղեկատվական մի ձեռնարկ ստեղծել, փորձարկել ու հաջողության դեպքում տարածել այդ փորձը:

Ծրագիրն ընդգրկում է երեք հիմնական փուլ: Առաջին փուլը փորձագետ ուսուցիչների և փորձարարական դպրոցների ընտրությունն էր: Երկրորդ փուլի հիմնական խնդիրը տարրական դպրոցի ուսուցիչների վերապատրաստման համար ձեռնարկի պատրաստումն ու կատարելագործումն էր, որի համար 1999 թվականի սկզբին հայաստանցի մանկավարժների մի խումբը երեք ամիս անցկացրեց ԱՄՆ Ջորջ Վաշինգթոն համալսարանում: Երրորդ փուլում այստեղ ստեղծված ձեռնարկն այնուհետև փորձարկվեց դպրոցներում:

Ծրագիրն այսօր շարունակվում է, որի նպատակը Հայաստանի դպրոցներում ուսուցիչների համար ուսումնական այդ ձեռնարկի փորձարկման արդյունքների և տեղական փորձի հաշվառմամբ ձեռնարկի վերախմբագրումը և տպագրությունն է, հանրապետության մարզերում մեթոդական չորս կենտրոնների և Հայաստանի ուսուցիչների մասնագիտական ընկերակցության ստեղծումը:

Զարուհի Հովհաննիսյան
ԱՅՐԵՔՍ

Պատմեք, խնդրում եմ, ծրագրի մասին:

Հայաստանում տարրական դպրոցի բարեփոխման և ուսուցիչների վերապատրաստման ծրագրի հիմնական նպատակը տարրական դպրոցի ուսուցիչների վերապատրաստման համար ձեռնարկ պատրաստելը և այն այնուհետև փորձարկելն էր:

Ծրագրի առաջին փուլում՝ 1998-ի աշնանը << կրթության և գիտության նախարարության հետ համատեղ նախ մրցույթով ընտրեցինք այն դպրոցները, որոնք պետք է ծրագրի համար փորձարարական բազա դառնային, ապա՝ այն վեց մասնագետներին, ովքեր պետք է մասնակցեին ձեռնարկի ստեղծմանը: Ընտրվեցին 15 փորձարարական դպրոց և 4 բուհ (Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան, Հայկական մանկավարժական համալսարան, Գյումրիի և Վանաձորի մանկավարժական ինստիտուտներ): Աշնանը տեղի ունեցավ նաև հնգօրյա գործնական սեմինար, որին մասնակցում էին Հայաստանից ընտրված դպրոցների ներկայացուցիչները, վեց մանկավարժ-փորձագետները, Հայաստանի կրթության ու գիտության նախարարության և ամերիկյան կողմի ներկայացուցիչները: Այս աշխատանքային հանդիպման նպատակն էր հանրագումարի բերել տարրական դպրոցի ուսուցիչների և երեխաների հիմնական կարիքները:

Ընտրված մասնագետները երեք ամիս աշխատեցին ԱՄՆ Ջորջ Վաշինգթոն համալսարանում, որտեղ նրանք ինտենսիվ վերապատրաստում անցան, այցելեցին տարաբնույթ մի շարք դպրոցներ, ամերիկյան գործընկերների աջակցությամբ ծանոթացան ամերիկյան տարրական դպրոցի կառույցին, ծրագրերին, չափորոշիչներին, աշխատանքի փորձին ու

digitised by

մեթոդներին և ընտրեցին այն նյութերը, որոնք օգտակար կարող էին լինել Հայաստանի դպրոցների և ուսուցիչների համար: Նրանք վերապատրաստման ծեռնարկի տեսքով ներկայացրեցին ամերիկյան տարրական դպրոցի Մ-3 (մանկապարտեզից երրորդ դասարան) հատվածի ընդհանուր բնութագիրը: Ձեռնարկն ընդգրկում է չորս գլխավոր ոլորտներ. արդյունավետ դպրոցի տարրերը, արդյունավետ ուսուցման առանձնահատկությունները, արդյունավետ ուսումնական ծրագրի չափորոշիչները, ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման արդյունավետ ծրագրի տարրերը:

Ձեռնարկի բովանդակության հիմնական ուղղությունները և տարրական դպրոցի պահանջները որոշվել էին դեռևս Երևանում, տարրական դպրոցի մասնագետների գիտաժողովի ժամանակ: Վերադարձից հետո մի նոր գիտաժողով տեղի ունեցավ, որի ժամանակ նախանշվեցին նաև, թե ինչպես պետք է ծեռնարկը փորձարկվի դպրոցներում, ապա ավելի քան 180 սեմինար կազմակերպվեց փորձարարական դպրոցների ուսուցիչների համար, որոնք պետք է դասավանդեին այդ նոր մեթոդիկայով: Ձեռնարկը 200 օրինակով տպագրվեց և 1999-2000 ուսումնական տարում փորձարկվեց Հայաստանի 18 փորձարարական դպրոցներում ու բուհերում:

Փորձարարական դպրոցների ներկայացուցիչների հետ մեկտեղ հեղինակներն աշխատեցին ծեռնարկի համակարգման, զարգացման և արմատավորման վրա:

Հաճելի էր տեսնել ուսուցիչների ոգևորությունը, դասարաններում նոր շունչը: Փորձարարական առաջին դասարանները շատ բանով էին տարբերվում մյուս դասարաններից. սկսած դասասենյակների կահավորումից, նստարանների դասավորումից մինչև դասարանների ու միջանցքների պատերին երեխաների աշխատանքների, հորինած հեքիաթների, ցանկությունների բազմազան ու բազմագույն խճանկարը:

Ամերիկյան կողմն անչափ գոհ էր ծրագրի արդյունքներից, այդ իսկ պատճառով ԱՄՆ կառավարության կրթական ու մշակութային գործերի բյուրոն որոշում ընդունեց ծրագիրը ևս երկու տարով երկարացնելու մասին: 2000թ. օգոստոսին ԱՄՆ կառավարության կրթական և մշակութային գործերի բյուրոն միջնորդեց ԱՅՐԵՔՍ-ին՝ տնօրինելու լրավճարը՝ Հայաստանում տարրական դպրոցի բարեփոխման և ուսուցիչների վերապատրաստման ծրագրի հետագա գործունեության համար:

Ծրագրի նոր փուլում նախատեսվում է ծեռնարկի վերախմբագրում և վերահրատարակում այս անգամ արդեն 2000 օրինակով: Նախատեսվում է ստեղծել նաև տարրական կրթության մեթոդական չորս կենտրոն հանրապետության տարբեր մարզերում՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում և Սիսիանում, որոնք կընդգրկվեն մեկ ցանցի մեջ, 18 փորձարարական դպրոցների շարքը կհամալրեն 6 նոր մասնակից-դպրոցներ: Նախատեսվում է նաև ստեղծել «Հայաստանի մանկավարժների մասնագիտական ընկերակցություն» հասարակական կազմակերպությունը:

Յուրաքանչյուր նոր երևույթ շատ հաճախ դիմադրության է հանդիպում: Նման բան տեղի չունեցա՞վ տարրական դպրոցի այս ծրագրի հետ:

Բարեբախտաբար՝ ոչ: Նախ սկսենք այն բանից, որ ծրագիրն ի սկզբանե արժանացել է Կրթության և գիտության նախարարության հավանությանը, որ ծրագիրն իրագործվում է Կրթական բարեփոխումների կենտրոնի հետ համագործակցությամբ: Բացի այդ, մրցույթի շնորհիվ, որն անցկացվում էր բաց, բոլոր ցանկացողների միջև, հայտերի ու իրենց աշխատանքում բարեփոխումներ մտցնելու ցանկության հիման վրա, մեր ծրագրում ընդգրկվեցին կրթական բարեփոխումների անհրաժեշտությունն ընդունող, նոր ուղիներ որոնող համախոհներ: Իսկ համախոհների հետ հեշտ է աշխատել: Ավելին ասեմ: Նույնիսկ ծրագրում չընդգրկված շատ դպրոցներ, որոնք հարևան էին մեր փորձարարական դպրոցներին, նույնպես հետաքրքրվում էին ծրագրով, նրանց ուսուցիչներն իրենց ցանկությամբ մասնակցում էին մեր սեմինարներին: Այնպես որ հույս ունենք, որ ծրագիրը հետագայում էլ դիմադրության չի հանդիպի:

A.R.A.R.@

Երևանում էր տարրական դպրոցի բարեփոխման և ուսուցիչների վերապատրաստման ծրագրի ամերիկյան կողմի ներկայացուցիչ, ԱՄՆ կառավարության և կրթական ու մշակութային գործերի բյուրոյի աշխատակից, դոկտոր Մարի Վեսթբրուք-Թախունցը:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում նրա հետ հարցազրույցը:

Ո՞րն է ծրագրի նպատակը:

Ծրագրի հիմնական նպատակներից մեկը տարրական կրթության ոլորտում աշխատող հայ մասնագետների ինֆորմացիայի պակասը լրացնելն է: Հայ գործընկերների հետ մեր համատեղ աշխատանքի արդյունքում համոզվեցինք, որ Հայաստանում կրթության բնագավառի լավագույն մասնագետներ ունենք: Սակայն նրանք իրենց մանկավարժական ու գիտական աշխատանքում երկար ժամանակ անհրաժեշտ ինֆորմացիայի կարիք են զգացել: Ուստի, մեր նպատակն առաջին հերթին այս ինֆորմացիայի պակասը լրացնելն էր, Հայաստանի մասնագետներին կրթության բնագավառում նորագույն ուսումնասիրությունների արդյունքների, կրթական նոր տեսությունների և ուսուցանելու նոր մեթոդների, տարրական դասարանների կառավարմանը նոր մոտեցումների մասին տեղեկատվությամբ ապահովելը և նոր նյութեր տրամադրելը:

Ծրագրի առաջին փուլում ստեղծվեց տարրական դպրոցի մասնագետների աշխատանքին ուղղություն տվող նեղ մասնագիտական ձեռնարկ, ինչպես նաև այս նոր մեթոդներից մի քանիսը դասարանում կիրառելու հնարավորություն ընձեռվեց: Ծրագրի շրջանակներում պատրաստվում է ևս մի ձեռնարկ, որտեղ այդ տեսությունների հիման վրա տարբեր առարկաների համար դասի տիպարային պլաններ են առաջարկվում ուսուցիչներին:

Կարծում եմ, որ մեր ծրագրի կարևոր նպատակներից մեկն էլ աջակցելն է, որ դպրոցում, դասարանում ստեղծվի մի միջավայր, որտեղ ուսուցիչները կարող են սովորեցնել, իսկ աշակերտները՝ սովորել: Այն, ինչ առաջին հայացքից պարզ է թվում, իրականում շատ բարդ է: Սովորեցնելու համար ուսուցիչը պետք է իմանա՝ ինչպես զարգացնել երեխաների ինքնակարգապահությունը, ինչպես նրանց իրենց ուսման գործի մասնակիցն ու գործընկերը դարձնել, պետք է իմանա այդ մեթոդները, ըմբռնի ու կարողանա կիրառել մանկավարժական նոր տեսությունները, պետք է ի վիճակի լինի ստեղծել դասարանում մի միջավայր, մի մթնոլորտ որտեղ աշակերտները ուզում են և կարող են սովորել:

Ծրագիրն արդեն մի ամբողջ տարի փորձարկվել է դպրոցներում: Ամփոփվե՞լ են, արդյոք, արդյունքները:

Մեր կրթական ծրագրերում շատ կարևոր տեղ ունեն նյութերի բովանդակությունը գնահատելուն, վերանայելուն ու հարստացնելուն վերաբերող դրույթները: Տարրական դպրոցների ուսուցիչների փորձառության զարգացման մեր այս ծրագրին մասնակցող մի շարք դպրոցների ուսուցիչների խնդրեցինք գրել իրենց անձնական կարծիքն այն մասին, թե ինչ արդյունք տվեց առաջարկված նյութերն օգտագործելու իրենց փորձը: Արդյոք փոփոխություններ տեսա՞ն իրենց դասարաններում, ուսուցանելու իրենց ձևի մեջ, իրենց աշակերտների մեջ, արդյոք փոխվե՞ց աշակերտների մակարդակը, սովորելու նկատմամբ նրանց վերաբերմունքը: Այսպիսով՝ այս աշխատանքային խմբի բոլոր ուսուցիչները հատուկ նախապատրաստված հարցաթերթի հիման վրա փորձեցին գնահատել ծրագրի առաջին տարվա արդյունքները: Մենք վերցրինք այս ամբողջ նյութը և այժմ աշխատում ենք նրանց փորձի, ուսումնասիրությունների ու դիտողությունների հիման վրա վերանայել ձեռնարկը:

Մեր հաստատության և նրա բոլոր ինստիտուտների վերափոխման այս փուլում ավանդույթների, փորձառության վերանայումից ու վերաիմաստավորումից բացի մեզ առաջարկվում է նաև այլ երկրների փորձը: Դուք աշխատել եք տարբեր երկրներում: Ի՞նչ

digitised by

եք կարծում, որքանո՞վ է հնարավոր և արդյունավետ որևէ երկրի կրթական համակարգի թեկուզ լավագույն փորձը ներդնել մեկ այլ երկրում:

Ոչ, իհարկե: Անհնար է ուրիշ երկրի, ուրիշ մշակույթի փորձը վերցնել և պարզապես օգտագործել, պատվաստել ինչ-որ մեկի կրթական համակարգին: Մանկավարժության բոլոր մասնագետները գիտեն սա՝ հայ, ռուս, թե ամերիկացի: Իմ կարծիքով միակ բանը, որ ուրիշ երկրի փորձը կարող է տալ որևէ երկրի, ուսուցանելու մասին մտածողության տարբեր ձևերի կամ նոր ուսումնասիրությունների ու դրանց կիրառության արդյունքների մի օրինակն է միայն: Եվ ամենակարևոր քայլերից մեկն էլ այս ինֆորմացիայի համադրությունն է, սինթեզը, այն ամբողջականացնելն է հայ իրականության մեջ: Առանց այդ քայլի դուք այդ ինֆորմացիայի մեխանիկական պատվաստում եք կատարում միայն, որը կարող է չօգնել ձեզ՝ աջակցելու ձեր ուսուցիչներին, աշակերտներին, կամ ծնողներին: Կարծում եմ՝ բոլորս էլ գիտենք, որ դա հեշտ գործ չէ. սինթեզելու համար ժամանակ է պետք, բայց դա, թերևս, ամենակարևոր քայլերից մեկն է: Նաև այս հանգամանքը հաշվի առնելով է, որ մեր նախագծում այդքան շատ ժամանակ ենք ծախսում տեղեկատվությունը համադրելու և ամբողջացնելու վրա այնպես, որ այն լիովին հարմար ու կիրառելի դառնա հայ ուսուցիչների համար, Հայաստանի դասարաններում, հայ աշակերտների և հայ իրականության համար: Միջոցներ են ձեռնարկվում, որ հայ և ամերիկացի մասնագետները հնարավորություն ունենան գնահատել այս ամենը: Հայ մասնագետներն առանձին դպրոցներում փորձարկում են նոր մեթոդներն ու տեսությունները, որից հետո կվերանայեն նյութերը՝ արդեն փորձարկման արդյունքների հիման վրա, մի բան, որ հնարավորություն կընձեռի տեղայնացնել այդ տեսություններն ու մեթոդները, հարստացնել դրանք հայ մասնագետների փորձով ու հայ դպրոցի ավանդույթներով: Երբ հանդիպում ենք մեր ծրագրի մասնակից ուսուցիչների հետ, շատ կարևոր է նկատել տարբերությունը և նրանց ամենօրյա փորձը: Երբ ունես ժամանակակից մեթոդների ու միջոցների այս «զինանոցը», սովորեցնելը շատ ավելի հաճելի է դառնում, աշակերտներն էլ բավականություն են ստանում սովորելուց: Մենք տեսել ենք, թե ինչպես են ծնողները գալիս դասարան և շնորհակալություն հայտնում ուսուցիչներին: Նրանց նույնպես դուր են գալիս այս փոփոխությունները, ուստի իրենք էլ սիրով են մասնակցում իրենց երեխաների համար նոր միջավայր ստեղծելուն:Ես սիրում եմ սովորեցնել, երբ ուսուցիչների, աշակերտների և ծնողների աչքերի մեջ տեսնում եմ ոգևորության փայլ, հավատ՝ ապագայի նկատմամբ, ստեղծագործական նոր մտահղացումներ: Ինձ համար մեծ բավականություն է սա, քանի որ մենք հրաշալի երեխաներ և հրաշալի ուսուցիչներ ունենք այստեղ՝ Հայաստանում և ունենք շատ դժվար պայմաններում գտնվող ծնողներ: Եվ եթե աշխատենք միասին, կկարողանանք ամուր լինել: Մենք պետք է համբերատար, պրագմատիկ ու իրատես լինենք, պետք է փոքր քայլեր գցենք և ստեղծենք ամուր ապագա Հայաստանի համար: Ես գիտեմ, դա մեր ուժերից վեր գործ չէ, և մենք կարող ենք այդ անել: Եթե դուք հավատաք ինքներդ ձեզ, կարող եք ապագա ստեղծել ձեր շրջապատի մարդկանց համար: Ինձ համար պատիվ է իմ գործընկերների հետ Հայաստանում աշխատելու հնարավորությունը:

Հայաստանում տարրական քառամյա դպրոցը վերջերս դարձավ եռամյա: Որքան գիտեմ Ամերիկայում տարրական դպրոցը հիմնականում վեցամյա է: Ո՞րն է ավելի արդյունավետ, ըստ ձեզ, եթե նկատի ունենաք, որ տարրական դպրոցի գլխավոր խնդիրը երեխաներին սովորել սովորեցնելն է:

Եթե ճիշտ հասկացա, դուք ուզում եք, որ ես համեմատեմ տարրական կրթության նպատակները ԱՄՆ-ում և Հայաստանում: Երբ խոսում ենք ընդհանուր կրթական նպատակների մասին, տարիների քանակն այդքան էլ էական չէ, բայց խիստ էական է դառնում, երբ խոսում ենք երեխայի զարգացման, տարիքային հոգեբանության և դասարանում նրա գործունեության միջև եղած փոխհարաբերությունների մասին: Օրինակ, եթե մենք բաժանում ենք տարրական դպրոցը միջին դպրոցից և որոշում, թե յուրաքանչյուրը քանի տարի պետք է տևի՝ 4, 5 կամ 6, մեր որոշումը պիտի հիմնված լինի

երեխայի գիտելիքների և նրա զարգացման հետ կապված սովորելու ունակության վրա: Այսպիսով, դուք իրականում տալիս եք 2 հարց: Մի հարցը վերաբերում է տարրական դպրոցի նպատակներին, իսկ մյուսը, որ ձեր հարցի մեջ էր մտնում, վերաբերում է երեխայի ի հայտ բերած գիտելիքների կարևորությանը, հոգեբանությանն ու սովորելու ունակությանը, որը պայմանավորված է տարրական ու միջին դպրոցների ծրագրերի կառուցվածքով:Եկեք նախ խոսենք նպատակների մասին: Դուք ասացիք, որ տարրական դպրոցի գլխավոր նպատակը երեխաներին սովորել սովորեցնելն է: Ասեմ սկզբում Ամերիկայի, հետո՝ Հայաստանի մասին:

Ամերիկացի երեխաներին նույնպես մենք պետք է սովորել սովորեցնենք, բայց ի՞նչ է դա նշանակում Ամերիկայում: Մենք ուզում ենք, որ նրանք հիմնովին սովորեն ակադեմիական առարկաները, ուզում ենք, որ սովորեն քննադատական մտածողություն, ի վիճակի լինեն գնահատել և վճիռներ կայացնել, որ սովորեն հասկանալ իրենք իրենց և ուրիշներին, մարդկանց, ովքեր նման են իրենց և տարբեր են իրենցից: Ամերիկայում բազմաթիվ մշակութեր են խաչաձևվում և դրա հետևանքով շատ տարբերություններ կան մարդկանց, երեխաների միջև: Ուստի երեխաները պետք է սովորեն հաշվի չառնել այդ տարբերությունները: Նրանք պետք է սովորեն իրենց աշխարհի մասին, այսինքն՝ իրենց փոքր աշխարհի՝ համայնքի, իրենց մեծ աշխարհի՝ հասարակության և ինտերնացիոնալ աշխարհի մասին, որում ապրում են: Անշուշտ նրանք պետք է նաև հմտություններ ձեռք բերեն, որոնք կարող են օգտագործել՝ արդյունավետ կյանք ունենալու համար: Այսպիսով, տարրական կրթության ոլորտում մենք նկատի ունենք երեխաներին սովորելու ոլորտում շատ բան սովորեցնելը:

Այժմ՝ Հայաստանի մասին: Երբ խոսում ենք նպատակների մասին, պետք է շատ որոշակի պատկերացնենք, թե որոնք են ձեր երեխաների կարիքները, որքանով են դրանք նման կամ տարբեր ամերիկացի երեխաների կարիքներից: Անշուշտ, հայ երեխաները նույնպես պետք է սովորելու հմտություններ ձեռք բերեն, սովորեն տարրական դպրոցի հիմնական առարկաները, պետք է սովորեն կյանքի նույն հմտությունները, որոնց մասին ասացինք: Բայց երբ խոսում ենք Հայաստանի երեխաների մասին, իմ կարծիքով մի ուրիշ ոլորտ էլ կա, որի վրա պետք է անպայման ուշադրություն դարձնել. դա այստեղ նրանց կյանքի իրականությունն է, այս կյանքի ստեղծած սթրեսներն ու վախերը: Ի՞նչ ծրագրեր, ի՞նչ ուղիներ, ի՞նչ գործունեություն է հարկավոր, որպեսզի այս վախն ու անհանգստությունները ապագայի նկատմամբ հույսի վերածվեն: Սա, թերևս, հավանաբար այն եզակի ասպեկտներից է, որն անպայման պետք է հաշվի առնել, երբ խոսում ենք նպատակների մասին: Ուսուցանելու և դպրոցական միջավայրը զարգացնելու գործում պետք է ուշադրություն դարձվի հայ երեխաների կարիքների վրա:

Արդեն երկու տարի է, ինչ շփվում եք Հայաստանի դպրոցների, կրթական համակարգի հետ: Ձեր ծրագրի նպատակն է օգնել հայաստանյան դպրոցներին և ուսուցիչներին՝ նրանց հաղորդելով ամերիկյան դպրոցների փորձը: Իսկ մեր կրթական համակարգում կա՞ արդյոք ընդօրինակելու արժանի մի բան, ասենք՝ ամերիկյան դպրոցի համար:

Իհարկե կա: Կարծում եմ՝ Հայաստանի կրթական համակարգը պատմականորեն շատ ամուր նախադրյալներ ունի բնական գիտությունների, մաթեմատիկայի, օտար լեզուների ուսուցման բնագավառում: Եթե խոսելու լինենք տարրական, միջին և ավագ դպրոցների մասին, կարծում եմ, ամերիկյան դպրոցներին կարող է օգտակար լինել այս բնագավառի մասնագետների փորձառությունը: Հսկայածավալ գիտելիքներ ու փորձառություն կա այստեղ, որ կարող է օգուտ բերել ոչ միայն ԱՄՆ-ի, այլ նաև շատ այլ երկրների դպրոցներին:

Հարցազրույցները վարեց Գայանե Թերզյանը

digitised by

Ի գիտություն
Հանդեսի հեղինակների ու ընթերցողների

«Նախաշավիղ» հրատարակման նախաձեռնումը թելադրվել է գալիք օրվա նկատմամբ մտահոգությամբ: Յուրաքանչյուր ազգի արժանապատիվ գոյության հեռանկարը ձևավորվում է նորելուկ սերունդների համակողմանի կրթությամբ: Այս դժվարին ու շնորհակալ ասպարեզում բոլորս ենք լինելու ծայրահեղ շահագրգիռ ու պատասխանատու: Խնդրի նման ըմբռնման դիտանկյունից էլ կամենում ենք կանխավ առաջադրել մեր փոխհարաբերության ու համագործակցության ոլորտին առնչվող տեխնիկական-գործնական բնույթի ելակետային սկզբունքներ:

1. *Մեր հանդեսին առաջարկվող հոդվածները, թղթակցություններն ու նամակները բացառապես շարադրված են լինելու հայերեն լեզվով:*
2. *Խմբագրակազմն իրեն իրավունք է վերապահելու ստացված և տպագրության համար նախատեսված նյութերն անհրաժեշտության դեպքում համառոտել, վերամշակել, խմբագրել և պահանջվող տեսքի բերել:*
3. *Նյութերի սկզբունքային կամ արմատական փոփոխումները համաձայնեցվելու են հեղինակների հետ:*
4. *Մասնագիտական բնույթի ինչ-ինչ հոդվածների տպագրության հարցը վճռվելու է ներքին գրախոսումների կամ փորձագիտական կարծիքների հիման վրա:*
5. *Յուրաքանչյուր հրատարակման թեմատիկ-բովանդակային ինքնուրույնության կամ մասնագիտական «իրավազորության» համար առաջին հերթին հեղինակն է ստանձնում համապատասխան պատասխանատվություն:*
6. *Մամուլից, գրականությունից քաղվածքներ, մեջբերումներ կատարելու դեպքում պարտադիր է համարժեք հղումը:*
7. *Խրախուսվելու են բազմակարծությունը, միևնույն խնդրի վերաբերյալ տեսակետների զանազանությունը:*

Սպասում ենք ձեր առարկայական ու գործնական արձագանքներին:

«Նախաշավիղի» խմբագրակազմ

A.R.A.R.@

ԱՅՍ ԱՄՍԱԳՐԵՐԸ ԼՈՒՅՍՊԵՍ ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՉԵՂ ՀԱՄԱՐ.

digitised by A.R.A.R.@